ՕՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Այսուհետև ոչինչ Եգիպտոսեան խորամանկ քուրմ՝ մեր, որ կամէին լինել դիտութեան միայնակ պահապանքը. այսուհետև ոչինչ Զինէական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր դաղափարների մուտքը աղգերի մէջ: Այսուհետև լոյս և ճշմարտութիւն և ազատութիւն խաւարի բարձրանեան գերութենից։

Ս. Նոպարիանց։

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ.

ՅՈՒՆԻՍ 1858 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԱՄՍԱՏԵՏՐԱԿ 6.

ՄՈՍԿՎԱ

Imprimerie d'Ernest Barfknecht.

1858.

ԲԵՆԵՍԻՐԵԿԵՆՐ.

ԾԵՐՈՒՆԻ ԲԱՐՈՒՆԻՆ.

(Դանիական լեզուից թարգմանած։)

—«Մի՛ թէ վերադարձել է քո հալածանքի օրը, դու կորած, անբաղդ Իսրայէլ.»—ասաց ծերունի բարոնի Փիլիպպոս Մովսէսը և ցնցեց իւր ալէզարդ գլուխը, երբ 1819 թուականին, մի երեկոյ, աշնան մէջ, փողոցից քարեր ներս թռան նորա սենեկի մէջ, և դուրսումը Համբուրգի ամբոխը ձայն արձակեց.—«Հեփ, հեփ.» (*)։

—«Այո՛, իրաւ է ձեր ասածը.»—խօսքը յառաջ տարաւ,—«Երուսալէմը աւեր ու անապատ է։ Քարկոծեցէք մեզ, դուք Եհովայի սատակիչ հրեշտակներ, դուք ոռնացող պատգամաւորքդ նորա բարկութեան. նորա երկայնմտութիւնը և համբերութիւնը մեծ էր. բայց նորա ժողովուրդը մոռացաւ դորանց Բաբելոնի գերութեան տառապանքի մէջ. օտարութեան մէջ արհամարհեցին դրքա օրէնքը և մարդարէ-

(*) Այս հալածական ձայնարկութիւնը չէնել են սկզբնական տառերից այս բառերի Hierosolyma est perdita. այսինքն «Երուսալէմը կորած է»

քը· դոքա իւրեանց արիւնը խառնել են այլազգիների հետ — ահա, այս պատճառով Աստուծոյ ժողովուրդը պիտոյ է ջնջվի երկրի երեսից և քարկոծվելով բարձվի կենդանիների աշխարհից։»

— «Ո՛հ, մեր պապ, մեր պապ·» — ասացին կողկողագին նորա որդոց որդիքը և ահ ու դողի մէջ փաթաթվեցան նորան, — «պաշտպանի՛ր մեզ այս անգութ քրիստոնեաներից։»

— «Եթէ դուք դեռ ես Իսրայէլի զաւակներն էք,» — պատասխանեց ծերունին, — «ապա կցեցէ՛ք ձեր ձեռքերը և խոնարհեցուցէ՛ք ձեր ծունները, դարձուցէ՛ք ձեր դէմքը դէպ ի արևելք, դէպ ի սուրբ քաղաքի աւերակները, և աղօթեցէ՛ք առ Եհովան, Աստուածը ձեր հօրերի։ Եթէ այնուհետև քարերը հասանէին ձեր գլխին և փշրէին ձեր ուղեղը մինչ դուք աղօթումէիք, ապա օրհնեցէ՛ք իմ հետ Յակոբի Աստուածը և մեռէ՛ք Տէր Սաբաւովթի անունով. այնուհետև նորա քերովբէքը կը տանեն ձեզ Հայր Աբրահամի գոգը։»

— «Ա՜յդ է քո տուած բոլոր մխիթարութիւնը, ով տխմար ծերունի,» — ասաց նորա որդի Սամուէլը, զաւակների հայրը։ Սա առաւել հարուստ ակնավաճառն էր Համբուրգի մէջ և սորա փառաւոր խանութը այս բոպէիս կործանութեան և յափշտակութեան վտանգի տակ էր կատաղի ամբոխի երեսից։ — «Չը կամի՞ս դու ոչինչ այլ խորհուրդ, բաց ի աղօթքից· ես դիտեմ մի աւելի լաւը· այսինքն, թող մեք էգուց, վկայ է Աստուած, մկրտել տանք մեզ։»

— «Ա՜ի՞ թէ կամիս դու, իմ որդի, ուրանալ քո հայրենական հաւատը, երկիւղ կրելով քո պատուական քարերի մասին·» — հարցրեց ալևորը և մի արհամարհական աչք ձգեց հարուստ, դողացող Իսրայէլացու վերայ, որ ահ ու դողի մէջ վաղումէր արկղից դէպ ի արկղ, որ իւր թանգագին բաները ժողովէ և ամփոփէ։

— «Իմ համար, վկայ է Աստուած, բոլորը մին է, Հրէայ թէ քրիստոնեայ կ՚անուանէին ինձ·» — ասաց Սամուէլը — «միայն թէ կարողանայի փրկել իմ կեանքը և գոյքը· բայց եթէ խնդիր կայ մէջ տեղումը, թէ ո՞րը պիտոյ էր ինձ ընտրել, արդեօք էգուց հարուստ մարդ, թէ մի մուրացկան լինել· · · · եթէ պիտոյ էր վճռել այս խնդիրը, արդեօք կարող էի ես խաղաղութեամբ անցանել փողոցից և գնալ դէպ ի վաճառականների հրապարակը, կամ թէ կամի խայտառակել տալ իմ անձը փողոցի տղաների բերանով, և իմ անդամքը, առողջութիւնը և կեանքը վտանգի տակ ձգել· · · եթէ պիտոյ էր իմ թանգագին քարերը, իմ հայելիքը, իմ կին ու զաւակը, իմ պատուհանները թող տալ աւերանքի և խայտառակութեան, այնուհետև պիտոյ էր ինձ մեծապէս տխմար լինել, եթէ կամենայի դժուարանալ մի քանի բուռն ջրով

մկրտել տալու. ինձ։ Դա մի լոկ արարողութիւն է, որ նոյնպէս թոյլ տալի էր, ինչպէս մեր դատարկ ծիսապաշտութիւնքը։ Մեր ժամանակներումը, անտարակոյս, այն հաւատը ամենից լաւն է, որ տալիս է մեզ խաղաղութիւն և ապահովութիւն մեր առուտուրքի մէջ։»

—«Թ՝շուառ որդի դու.»—ասաց ալևոր Փիլիպպոս Մովսէսը և ձայն արձակեց—«անիծեալ լինի այն հոգին, որ խօսեց քո բերանով։ Այդ այն չար հոգին է, որ ապականել է Աստուծոյ ժողովուրդը և արել է նորան առակ նշաւակի բոլոր աշխարհի վերայ և մի պիղծ բան երկնաւոր տիրոջ աչքումը։ Անիծեալ լինի քո դոյքը և կեանքը, որոնց համար կամիս դու վաճառել քո հայրենական հաւատը և անարգել նոյն իսկ օտարականների սեղանը, ուր որպէս մի վատթար փախստական կամիս դու պատսպարանք որոնել։ Անիծեալ լինի այն ապահովութիւնը և խաղաղութիւնը, որի համար քակումես դու քո ուխտը Եհովայի հետ։ Անիծեալ լինի այն առուտուրքը, որ Աստուծոյ ժողովուրդը շինել է մամոնայի ծառայ և կատաղի երկրպագու ոսկի որթուն։»

—«Դու խելագարվել ես, ալևոր»—պատասխանեց Սամուէլը—«և չը գիտես յարմարվիլ ժամանակին։ Դու հնացած մարդ ես և քո սիրտը կապած է հին բաների հետ. բայց քո մարգարէների ժամանակները—վկայ է Աստուած, որ անցել են։»

—«Նոցա խօսքը պիտոյ է յարգելի մնայ մինչև ահեղ դատաստանի օրը,»—սաստկութեամբ ձայն արձակեց ալևորը և բարձրացրեց գլուխը—«և այդ խօսքը կամիմ ես քարոզել ձեր մէջ, թէև այրվէր, փլատակվէր երկիրը ոտքիս տակ։»

—«Մի՛ թէ արդէն բաւական մեծ չէր այն անէծքը, որ մեք ցրուած ենք, որպէս մի հօտ առանց հովուի, դուրս ձգած լայնարձակ աշխարհի մէջ և դատապարտած վարելու մի արհամարհելի կեանք այլազգիների հողի վերայ։ Արժան էր մեզ անէծք անէծքի վերայ բարդել, ստիպուած լինել մատնել մեր անձը և արդար խոստովանել այն ձեռքը, որ անարգումէ մեզ և ոտնակոխ է առնում։»—

Ակնավաճառի փառաւոր սրահը լցուած էր փախստական Իսրայէլացիներով, որ պատսպարութիւն և պաշտպանութիւն էին խնդրում Հարստական Սամուէլի մօտ, մինչ պօլիցիան և պահապանքը դուրսումը ցոյց էին տալիս որպէս թէ կամէին խաղաղացնել նոցա աղմկարար հալածողքը։ Ամենեքեան յաւումէին իւրեանց վատաբաղդութեան վերայ և ոմանք զարմացած նայումէին ալևոր Փիլիպպոս Մովսէսի վերայ, որ բարձր և կարող որպէս մարդարէ կանգնած էր նոցա մէջ և զօրաւոր բառերով սրոտումէր իւր դողացող հաւատակիցների վերայ։ Մի քանի

ծեր բաբբունիք երկար մօրուքով և սև դիպակագեստով մնագիր և լուռ լսումէին նորան, բայց մանուկ, անմօրուք Իսրայէլացիքը խնդրումէին սուգ և տրտմութիւն Համբուրգեցոց վերայ, նոցա ջարդ ու փշուր արած պատուհանների և այն բոլոր վնասների վերայ, որ այս նոր տառապեցուցիչ հալածանքի պատճառով հասել էին նոցա առուտուրքին։

— «Ո՛հ, երանի՜ թէ իմ մայրը չեղած լինէր իմ հօրը այնքան հաւատարիմ։» — ասաց մի մանուկ լերը և կոպիտ Իսրայէլացի — «այնուհետև կարող էի այս երեկոյիս խաղաղութեամբ գնալ Կոմեդիա և տեսանել այն տեղ սիրուն Բօզալիան, և ոչ ոք ճանաչելու չէր ինձ, թէ Հրէայ էի, այլև քարեր հասանելու չէին գլխս։»

— «Ո՛հ, երանի՜ թէ երբէք թլփատած չլինէինք,» — ձայն տուեց միւսը — «այս ի՛նչ թշուառութիւն է, որ չենք կարող փողոց դուրս գալ առանց երկիւղի, թէ կը սպանէին մեզ։»

— «Ո՛հ. ի՛նչ կը լինէր, եթէ ամենեքեանքս մկրտված լինէինք,» — ձայն տուեց մի այլ ոք — «այո՛ և մի ուտող մաշող ջրով, որ մեր սև մազերին մի փոքր բաց գոյն տար, և այն նշանը, որ Եհովան դրել է մեր վերայ և դուրս է ձգել թշնամիների մէջ, ջնջէր մեր վերայից։»

— «Ո՜վ. վայ մեզ. վայ մեզ.» — աղաղակեցին կանայք ու երեխայք. — «ո՛ւր պիտոյ էր փախչել մեզ մեր յաւի ու տառապանքի մէջ։ Երանի՛ թէ միայն անցած լինէր այս առաւօտը և ձախորդ գիշերը։»

— «Օ՜սպեցէք ձեր աղաղակը, խեղճագարներ դուք.» — ձայն բարձրացրեց Փիլիպպոս Մովսէսը — «Տէրը զարկել է ձեզ անմոռութեամբ. կուրացուցել ու խստացուցել է ձեր սիրտը. նա ցրուել է ձեզ բոլոր աշխարհի վերայ, ձեր վատթարութեան համար։ նա տուել է քեզ մի լքեալ սիրտ, ո՛վ Իսրայէլ. այնպէս, որ քո ոտքի գարշապարը չունի հանգիստ, և դու գնումես, քո կեանքը ձեռքումդ և օր ու գիշեր երկիւղ ունիս և ասումես առաւօտուն. «երանի՛ թէ լինէր այժմ երեկոյ. և երեկոյին, — երանի՛ թէ լինէր այժմ առաւօտ։» Բայց լսեցէ՛ք, թէ ի՛նչ է խօսում ձեր հետ Տէրը խորանի վկայութեան սպասաւորի բերանով ձեր աքսորանքի ժողովրդանոցի մէջ. «եթէ ձեր տառապանքը մեծ է և ձեր ամենը առաւել, քան ձեր պատուիրանապանցութիւնը, ապա թօթափեցէ՛ք (թափ տուեցէք) փոշին ձեր ոտերից և գնացէ՛ք այն քաղաքից որ անարգել է ձեզ. թողեցէ՛ք անօրէնութեամբ ժողոված մամոնան ձեր նեղիչների ձեռքումը, և առէ՛ք ձեր հետ այն միայն, որի վերայ, գիտէք դուք, թէ չը կայ Եհովայի անէծքը։ Ահա կամիմ ես ձեզ առաջնորդել քաղաքից քաղաք, աշխարհից աշխարհ, մինչև կը գտանենք մի տեղ երկրի վերայ, ուր Եհովան կը ծածկէ մեր ամօթը և կը տայ մեզ պա-

տոպարան ադամորդիների մէջ, կամ, ինչպէս երբեմն մեր նախահայրը, անապատի վայրենի գազանների մէջ։»

— «Այդ ինչ երաշներ են, որ դուս պատմումես մեզ, ալեւոր դուռ.» — ձայն արձակեցին նորա հարուստ աղգականները, միաբերան. — «մեր արիւնի քրտինքով վաստակը պիտոյ էր մեզ թողուլ և մուրացկանի պէս մի պարկ շալակի վերայ շրջել աշխարհումը։ Ո՛ւր կարող էինք մեք գտանել մի աւելի լաւ վաճառական քաղաք քան թէ այս. և որ տեղ աշխարհումը աղատ էինք մեք արհամարանքից ու հալածանքներից։ Դէպ ի Աւետեաց աշխարհը ոչինչ ճանապարհ տանում չէ մեզ վերըստին, և քո ցնորքներովը կարող չենք սնուցանել մեր կին ու զաւակը, և հայթայթել շողշողուն արծաթ ու ոսկի։»

— «Եթէ դուք հաւատ ունէիք դէպ ի Եհովան» — պատասխանեց Փիլիպպոս Մովսէսը — «ապա կը մտածէիք այն ճանապարհի վերայ, որ տանում դէպ ի Աւետեաց երկիրը. բայց այս մտածութիւնը շատ մեծ է մեր լքեալ հոգիների համար։ Եգիպտոսի մնակճոյճները ձեզ աւելի սիրելի են, քան թէ երկնքից իջանող մանանան անապատումը. և եթէ Տէրը վերստին յարուցանէր ձեր մէջ մարգարէք, դուք պիտի քարկոծէիք նորանց, ինչպէս ձեր հարքը քարկոծել են մարգարէքը։»

— «Ի՞նչ օգուտ կար այդ քո վայրախօսութենից, անմիտ ալեւոր դուռ.» — ասաց այժմ նորա որդին, այն հարուստ ակնավաճառը. — «հանգստացիր քո ծերունական անթոռի վերայ, և խաղա երեխաների հետ, ով Մովսէս. բայց մեք միւսերս խորհուրդ կը կատարենք, թէ ինչ պիտոյ էր առնել մեզ։» — «Սա, երեխայամիտ է.» — ասաց նա ներկայ մարդերին — «և երբեմն խելքը տեղումը չէ։ Նա խռոված է բոլոր դերդաստանի հետ. ես տալիս եմ նորան ողորմութեան հաց իմ տունումս, ինչպէս յայտնի է ձեզ. այնու ամենայնիւ պիտոյ է ինձ համբերել շատ կոշտ խօսքերի և անախորժութիւնների նորա կողմից։» —

Այժմ սկսվեցաւ սենեկումը բզզանք ու մռմռանք ինչպէս մի մեղուաբնակի մէջ, ըստ որում ամեն մինը կամեր խորհուրդ տալ, թէ ինչպէս պիտոյ էր հաշտութիւն խօսել Համբուրգեցոց հետ։ Ոմանք մտածումէին թէ պիտոյ էր փոխանորդներ ուղարկել գերագոյն խորհրդարանին և խնդրել մի ղենուորական պահպանութիւն։

— «Ամենևին անօգուտ է այդ,» — աղաղակեց միւսը. այդ վատթար Հանզէատեանները (*) են իսկապէս մեր ամենաչար թշնամիքը. դոքա են, այդ

(*) Դաշնաւոր վաճառականք, ըստ որում բառս Հանզէ, Հանզա (Hanse, Hansa) նշանակումէ սկզբնապէս մի դաշն, որ մի կամ շատ քաղաքի վաճառականք հաստատած էին միմեանց մէջ, իւրեանց առուտուրքը ապահովելու համար այն միջոցներին,

յիմար մանրավաճառ տղայքը, որոնց աչքը խոցոտուէր մեր խորամանկութիւնը և դորանով եղած շահաստացութիւնքը, որ կատաղեցնուէն ամբոխը մեր վերայ և մեր դոյքի վերայ։»

— «Լուրեմն, թող տեղափոխ լինենք դէպ ի Ալտոնա,» — ձայն տուեցին միւսերը — «Դանիական ցանցառագլուխքը կը լինէին այնքան խոհեմ, որ ընդունէին մեզ մեր հարստութիւնների հետ միասին և ուրախանային, որ կարող էին բարձրաքիթ Համբուրգեցոց վրէժխնդիր լինել նոցա մատնութեանը որ իբրև թէ արած էին, ներս թողնելով Ֆրանսիացիք Համբուրգի մէջ։»

— «Բայց երբ որ առաջին փոթորիկը անցած կը լինի, կը ղղջանային մեր արածի վերայ,» — ձայն տուեց միւսը — «այն տեղ առուտուրքը երբէք այնպէս ծաղկած չէ, ինչպէս այս տեղ։ Աւելի լաւ է այս տեղ մնալ, և մի փոքր արհամարհանքի համբերել, քան թէ վնասել մեր առուտուրքին և օգտաստացութեանը։»

— «Ոչնաս չունի, եթէ մեք մկրտել տայինք մեզ,» — ասաց Սամուէլը — «այնուհետև լինելու էինք Նոյնպիսի Հրէայք, ինչպէս բոլոր Համբուրգեցիք ինքեանք են։»

— «Ի՛նչ օգուտ կար դորանից» — պատասխանեց մի պատառոտած երկարամօրուք Հրէայ։ — «Մեր հաւատի պատճառով չէ՛, որ նոքա հալածումեն մեզ, այլ մեր հարստութեան և փառահեղ կեցութեան, որ խոցումեն նոցա նախանձոտ աչքերը։ Մեր գեղեցիկ շէնքերն են մեր թշնառութեան աղբիւրը, նոյնպէս և մեր փառաւոր կառքերը, մեր ամարանոցքը Ելբէ և Ալստեր գետերի վերայ և մնապարծութիւնը մեր

երբ թէ ծովերը և թէ ցամաքի ճանապարհները վտանգաւոր էին աւազակների երեսից։ Մի այդպիսի դաշնաւորութիւն կապեցին երկրքին քաղաքները Լիւբէք և Համբուրգ, 1241 թուակ., որ և հասարակաց ծախքով նաւեր շինեցին և ցամաքային զօրք հատատեցին։ Շատ քաղաքներ միաւորվեցան այս դաշնաւորութեան հետ, այնպէս որ հետ ոչհետ Հանզէատեան դաշնաւորութիւնը մնացաւ մինչև 84 քաղաք, որ այնուհետև կրուէին անունս «Հանզեան քաղաքներ»։ Նոցա առաւել մեծ զօրութիւնը էր ծովային կարողութիւն. դոքա շուտով երկիւղալի դարձան նոյն իսկ օտարերկրեայ թագաւորութիւնների համար, մանաւանդ թէ Ջվեդացոց և Դանիացոց։ Բայց որովհետև յետոյ խռովութիւնքը խաղաղացան առաջին Մաքսիմիլիանոս կայսրի հոգաբարձութեամբ, և որովհետև բայց ի միւս շատ պատճառներից, մանաւանդ թէ առաւել կարող իշխանքը Եւրոպայի կամէին պատրաստել իւրեանց սեփական ծովային զօրութիւնը, այս պատճառով առ փոքր փոքր նուազեցաւ այդ դաշնաւորութիւնը, և 1630 ին ամենևին քակվեցաւ. միայն Լիւբէք, Համբուրգ և Բրեմէն քաղաքները պահպանեցին դաշնաւորութիւնը և միայն պահպանեցին անունս «Հանզեան քաղաքներ»։ Այս երեք մայրաքաղաքների կառավարութեան վերայ եղած պատուական գրուածներից մինը է գործը Հանդուցեալ դը Վիլլէի։ (de Villes. Constitutions des trois villes libres anséatiques, Lubeck, Bremen et Hambourg. Leipzig, 1814.)

երիտասարդների։ Շրջեցէք մի այնպիսի մօրուքով, ինչպէս ես, և պատառոտած հանդերձով։ — Ապրեցէք լաւ ձեր տան մէջ, բայց ձեր բարեկեցութիւնը ցոյց մի՛ տուէք։ Այնուհետև ոչ ոք նախանձելու և հալածելու չէ մեզ։ Թող յետոյ փողոցի տղայքը, ինչպէս կամին, մատով ցոյց տան մեր վերայ, այնու ամենայնիւ մեք Աստուծոյ ընտրած ժողովուրդն ենք։ Մեր տունը և վաստակը ծաղկումն, մեք լցուած ենք բոլոր աշխարհները և դուրս ենք ծծում նոցա ուղը և ծուծը. մեք աղդերի տարքն ենք, միայն թէ չը հրաժարվէինք նոցա ստրուկ երևելուց։»

Այս խորհուրդը նորօրեայ ճոխ Իսրայէլացիքը մերժեցին, որովհետև սէր չունէին քուրձի ու մոխրի մէջ մնալ և հրաժարվիլ այս հարստութեան զեղխութենից, որ իւրեանց բալմադիմի փոքրոգի հնարագործութեամբ ձեռք էին բերած։

— «Ո՛չ. ես գիտեմ արդարև մի աւելի լաւ ճանապարհ,» — ասաց ճոխ Հրէաներից մինը, որ յառաջ առուտուրք էր արած ժապաւէններով. — «եկէ՛ք, մի օր մեք, միւս օրը դուք մեծ խնջոյքներ տանք. եկէ՛ք բոլոր մեծամեծ վաճառականների պատանի որդիքը հրաւիրենք մեր մօտ, և թոյլ տանք մեր աղջիկներին և կանանցը մի փոքր փափուկ լինել և ոչ այնքան կոշտ և խստաբարոյ. քաղաքավարութեամբ նոցա հետ։ Անտարակոյս, աւելի լաւ է մի փոքր խնամենալ քրիստոնեաների հետ, քան թէ այս ժամանակումն համարել նորանց մեր թշնամիք։»

Այս խօսքերը լսելով Փիլիպպոս Մովսէսը, ձայն արձակեց, թափելով բերանից մի խորին արհամարհութիւն իւր յատուկ ժողովրդի և այն թշուառ հոգու վերայ, որ այժմ կրումէր դա իւր մէջ։ Նա պատառեց վերայի հանդերձքը, և անէծք կարդաց այն լեղուի վերայ, որ խօսեցած էր վերջումը։ Ապա աշխատեց նոցա սիրտը սաստիկ դղրդել և լաւերի մէջ նոցա աղնիւ հոգին զարթուցանել, պատմելով նոցա այն ողորմելի և արհամարհելի դրութիւնը, որին հասած էին նոքա իւրեանց անձնասիրութեան և ստորաքարշ շահախնդրութեան պատճառով։ Նա անուանեց նոցա այժմեան հալածանքը մի արդար պատիժ Եհովայի կողմից նոցա այլանդակութեան և վատթարութեան համար։ Նա անիծեց նոցա սառնասրտութիւնը դէպ ի հայրենական հաւատը և բարք ու վարքը, նոցա օրինաղանցութիւնը և շաբաթապղծութիւնը, և նոցա մօրուքի գերծելը, ըստ որում նոքա ամաչումէին լինել Հրէայ, որ էին իսկապէս։ Այլև դատապարտեց նոցա հաղորդակցութիւնը քրիստոնեաների հետ և այն սողուն անարգ հաճոյախօսութիւնը, իւրեանց հալածողների առաջև. նա անիծեց նոցա ամուսնութիւնքը քրիստոնեայ մարդերի հետ, որով նորա երկու որդիքը արդէն բարկացուցած էին նորա սիրտը։ Հուսկ յետոյ նոր՛ք կարդաց նոցա անվերջ վաճառասիրութեան

վերայ, որ նոցա կորուստի հոգեսպան, թունաւոր աղբիւրն էր, և ցանկացաւ, որ բոլոր տերութիւնքը արդելէին նոցա այս մի հատիկ ճանապարհը նոցա ապրուստի և դորանով ստիպէին նորանց դէպ ի այլ քաղաքական վաստակարարութիւնք, որ նոցա արմատացած շահախնդրութեանը աւելի փոքր սնունդ տալու էին։ Այնուհետև նորա բոլոր հաւատակիցքը գոռացին բարձր ձայնով նորա ընդդէմ և անուանեցին նորան մի խելագար մանիչ, որ կամէր միայն նոցա կորուստը։ Բայց միւսանգամ բարձրացրեց նա իւր զօրաւոր ձայնը, խլացնելով նոցա աղաղակը և խօսեց նոցա հետ մարդարէի խօսքերով.—«Քո ապստամբութիւնը կը խրատէ քեզ, ով Իսրայէլ, և քո չարիքը կը կշտամբեն քեզ. լսի՛ր, ասումէ Տէրը։ Ես տնկեցի քեզ որպէս որթ պտղաբեր, ամենեւին ճշմարիտ. և ի՞նչպէս դառնութիւն դարձար ինձ, որթդ օտարացած. թէև լուացվէիր բորակով և դործ դնէիր շատ օճառ (սապոն), սակայն պիտոյ է դու աղտեղված մնաս քո անիրաւութիւններով իմ առաջև, —ասումէ Տէր Տէրը։ — Լսի՛ր, ձեր անօրէնութիւնքը հեռացուցին ձեզանից իմ պարգևները և ձեր մեղքերը մերժեցին իմ բարկութիւնքը. դուք հաւորսների պէս որոգայթներ դրեցիք, մարդիկը որսալու և ապականելու, և ինչպէս ձեր որոգայթները լի էին նոցա մէջ ընկած թռչուններով, այնպէս լի են ձեր տունները նենդութեամբ. այս պատճառով դիրացաք ու պարարտացաք դուք։ Այո՛ ճոխացաք ու փառաւորվեցաք դուք ձեր չար վաճառականութեամբ. բաղդաւոր էք, բայց անիրաւ։ Մի՞ թէ այս բոլոր բաների համար կարող էի անտես առնել ձեզ, կամ թէ պդպիսի ազգից չլինել վրէժխնդիր։ Դուրս եկեցէք ձեր պատերի միջից և ապականեցէք Իսրայէլը, ով այլազգիք. բայց մի՛ ջնջեցէք երկրի երեսից, կտրեցէ՛ք միայն նորա ճիւղերը, որովհետև նոքա իւրեանց Տիրոջ ճիւղերը չեն։»

Այս խօսքերը բերանից հանած և ահա միւսանգամ քարերը կարկտի պէս ջարդեցին պատուհանքը և փշրեցին տախտակամեղկքը, մինչ հալածողների վայրենի աղաղակը ծիծաղով ու արհամարհանքով հընչեց փողոցի կողմից։

—«Թող հեռի կենայ մեզանից այդ հին մարգարէն»—մռնռացին մի քանիքը,—«դա կամի միայն հալածանք կարդալ մեր վերայ։»

—«Այժմ ժամանակ չէ մեր հին մեղքերի վայրախօս պատմութիւնը քարոզել տալ մեզ.—ասաց նորա որդի Հարուստ Սամուէլը,—«եթէ կամիս այսուհետև մնալ իմ տանը, ապա չկամիմ ոչ մի բառ լսել քո բերանից։ Աւելի լաւ էր քեզ գնալ և գերծել մորուքդ, որ կերպարանքդ մի փոքր նմանութիւն ստանար ուրիշ մարդերի հետ։ Ցիրաւի պարտ է մեզ դայլերի հետ ոռնալ, որոնց մէջ գտանվումենք մեք.

և եթէ հասարակ ամբոխը տեսանէ քո այծի մօրուքը և քո ծիծաղելի զգեստը, ապա կը քանդէ տունը իմ գլխի վերայ։»

— «Ո՛հ մեր պապ, մեր պապ» — ձայն տուին փոքրիկ Թոռնեակները և փախան Նորա մօտից — «քո աչքերը այդքան օտարատեսիլ են։ Մի՞թէ կամիս դու տհաճութիւն պատրաստել մեր հօրը։»

— «Խնայելով ձեզ չկամիմ անիծել Նորան,» — ասաց Ծերունին մեղմ ձայնով — «բայց անիծեալ լինի այն հոգին, որ տիրել է իմ կուրացած, թշուառ ժողովրդի վերայ։ Ես իմ ոտքից թափ կը տամ փոշին քո տան շէմքի վերայ, որդի։ բայց այս րոպէն պիտի յիշես դու քո մահուան րոպէին։ Պատրաստ եմ ես առանց զէնքի գնալ իմ թշնամիների մէջ.... պատրաստ եմ ես այս ալէզարդ գլուխը մերկայնել նոցա ձգած քարերի առաջև և թոյլ տալ այդ կատաղածներին իւրեանց եղունգներով պատառել ինձ, քան թէ իմ յատուկ զաւակները կը փետէին մօրուքը իմ կզակից և ինձ մուրացկանի պէս դռնից դուրս կը ձգէին։»

— «Ինա.— մի՞թէ խելագար ես դու» — յետքից ձայն տուեց Սամուէլը, — «ամբոխը թոյլ չէ տալու քեզ ողջութեամբ անցանել փողոցից — բռնեցէ՛ք դորան, աղաղակեց նա դէպ ի միւսերը։ դա խելագար է, ինչպէս տեսանում՝ք դուք։ այնու ամենայնիւ չկամէի ես, որ Նորան վնաս հասանի։»

Բայց ծեր Փիլիպպոս Մովսէսը, Ղոմտի պէս դուրս գնաց կրակ ընկած Սոդոմից և չնայեց դէպ ի յետ։ Այլև ոչ ոք չհամարձակվեցաւ յետ պահել։ պատճառ, Նորա խօսքերը և ջարդող ու փշրող հայեացքը ահացուցել էր բոլորին։ Իւր ալէզարդ գլուխը բացած և իւր սեւադէմ մոտաքսեայ պատառոտուն ձորձը վերային, առանց դաւազանի, դուրս գնաց տանից և իւր ոտքերից թափ տուեց փոշին դրան շէմքի վերայ։ Երբ որ Համբուրգի ամբոխը տեսաւ Նորան, այս մի քանի փողոցաշրջիկ տղայք սկսեցին հալածանքի աղաղակը կրկնել։ բայց ո՛չ ոք չկար այն տեղ որ ձայնակից լիներ սոցա, կամ թէ ձեռք բարձրացներ այն հանդարտ, արժանապատիւ ծերունու վերայ։

— «Թողէք Նորան գնալ խաղաղութեամբ։» — ասաց մինը միւսին — «դա այն ծեր Փիլիպպոս Մովսէսն է։ դա մի արժանապատիւ մարդ է, և մեղք էր ձեռնամերձ լինել կամ թէ ծաղը առնել դորան։»

— «Բայց, եթէ այս տեղ լիներ Նորա որդին, այն հարուստ ակնավաճառը» — ասացին միւսերը — «նա չէր անխուղելի պրծնելու մեր ձեռքից։ պատճառ, նա ամենից առաւել վատթար արիւնածուծն է։»

Արդէն անագանել էր գիշերը։ աղմուկը փողոցների մէջ վերջացած էր։ Ոչ մի կառք չէր գլորվում կոմեդիայի տան կողմից կամ թէ այն ժողովներից, որ եղած էին հարուստ Համբուրգեան վաճառական-

ների տեսերումը։ Օրիորդեան հրապարակի զբօսանքը վաղուց աւարտվել էր և հովանոցքը փակած էին արդէն։ Մռայլ լուսով փայլումէր լապտերը «Հին քաղաք Լոնդոն» անունով հիւրանոցի ճակատի վերայ, և այս տեղ ու այն տեղ շրջումէին մի մի հատ ցոփակեաց մարդիկ, մեղմապէս ըզզելով և դէպ ի տուն քարշվելով Salon d' Apollon անունով պանդոկից, մինչ ճանապարհի վերայ աչք էր ածում նա, կամ երբեմն դադարեցնումէր նորան մի անառակ կնամարդ։ Լուսինը ցոլանումէր հանդարտ Ալստերեան գետի մէջ և երբեմն առ երբեմն ձայն էր տալիս գիշերի պահապանը քանի ժամը զարկել էր արդէն Միքայէլեան աշտարակի ժամացոյցը։ Բայց Օրիորդեան հրապարակումը վեր ի վայր շրջումէին դեռ ևս երկու օտարոտի կերպարանք և ասես թէ չէին մոռանում դէպ ի տուն դառնալ, թէպէտ սուր հողմը ծառերի տերևքը ցնցեցնումէր նոցա շրջակայքումը և փախստական ամպերը շատ անգամ, այն ցուրտ սեպտեմբերեան գիշերի մէջ, մթնացնումէր լուսնի պայծառ ըոլորակը։ Մի մանուկ սևահեր աղջիկ դողալով ցրտից գնումէր մի ծեր Հրէայի կողքից և երևումէր թէ մխիթարումէ նորան մի քաղցր յաւակցական ձայնով։ Ծեր Հրէան էր — Փիլիպպոս Մովսէսը։

— «Այրսումես դու, իմ զաւակ։» — ասաց ծերունին և իւր պատառոտած ձորձի վերջը փաթաթեց նորա ուսերի վերայ։ — «Արի տանեմ քեզ քո քեռու տունը, բայց ես չկամիմ ոտք կոխել նորա շէմքի վերայ. երդուել եմ ես այդ բանը, երբ որ նա հարսանիք արեց այն հրապուրիչ քրիստոնեայ աղջկայ հետ։ Այսօր իմ երրորդ որդին փակել է դուռը իմ առաջև, և աղջիկներ չունիմ աւելի այս աշխարհի վերայ. քեզ ունիմ միայն դեռ ևս, դու իմ երկիւղած Ռաքելի զաւակ։ Արի ուրեմն, դարձուցանեմ քեզ դէպ ի տուն։ Բաւական անբաղդ ես դու արդէն, որ լինելով անհայր և անմայր երեխայ, պիտոյ էր քեզ սպասաւորութիւն առնել մի քրիստոնեայ կնոջ. չէ, իմ մեղքով արժան չէր քեզ արհամարհանք կրել։ — «Անբաղդ Բենիամինա,» — յառաջ տարաւ նա խօսքը, երբ որ լուսինը թափումէր իւր շողշողիւնը ուղղակի նորա երկիւղած, երեխայական դէմքի վերայ, և նա նկատեց աղջկայ սև թերթերուկների մէջ փայլուն արտասուքը։ — «Ուրեմն դեռ ևս այդքան պատվումես դու քո ծերունի, խստակրօն պապը, որ երկիւղ չունիս ուղեկից լինել ինձ մեր հալածանքի օրին, երբ ես միայնակ և իմայիններով կողմից մերժած գնայի մեր թշնամիների մէջ։»

— «Ո՜հ իմ սիրելի, ծեր պապ,» — պատասխանեց Բենիամինան — «ինչպէս կարող էր իմ քեռի Սամուէլը այդպէս անարժանապէս վարվել քո հետ։ Բայց ոչ իմ բոլոր քեռիքը այդպէս խստասիրտ են, ինչպէս նա. Դանիէլի մոտ լինումեմ ես ամենայն շաբաթամէջ, և Իսահա-

կի տանը նոյնպէս ընդունելի եմ ես այժմ, սկսեալ այն միջոցից, երբ որ ես դարձել էի չափահաս և կարող էի քեռուս կնոջը օգնական լինել կերակրատան մէջ։ Ուրեմն արի գնանք դոցա մինի տունը — դոցա կանայքը և աներորդիքը չեն ատում մեզ, ինչպէս միւս քրիստոնեայք, և մի տեղ պիտոյ էր քեզ լինել. դուրսումը կարող չես մնալ։ Սկսեալ այն օրից, որ Սամուէլը այնքան հարստացել է, չէ ճանաչում ոչ մինը իւր աղքատ աղգականներից։ Եւ ի՛նչ պատճառ ունիս դու աւելի լաւ համարելու Նորա մօտ լինել քան թէ միւսերի մօտ։ Այսպէս, ինչպէս նա այսօր վարվեցաւ քո հետ, ոչ մինը միւսերից չէր համարձակվելու վարվել քո հետ։ Խսահակի տան շէմքի վերայ ոտք չկոխելու երդում չես կերել, ուրեմն գնանք միասին Նորա մօտ։ Այն տեղ կը սպասաւորեմ քեզ, և Նորա բաղմաթիւ քաղցր երեխայքը կը սիրեն քեզ։ Դու կը պատմես Նոցա Յովսէփի և Նորա եղբարց գլխի անցքը և փոքրիկ Բենիամինի մասին որ իմ անուանակիցս է, ինչպէս դու պատմած ես ինձ իմ մայր Ռաքելի մօտ, երբ որ ես տակաւին փոքրիկ մանուկ էի։ Արի, իմ պապ, արի՛, յառաջ քան թէ օրը բացուել էր և մեր հալածողքը զարթեցած էին։ Այս նեղ ժամանակումն պիտոյ է մեզ գնալ միասին. — մեզ, ատեցած թշուառ փախստականներս։

— «Իմ որդի Խսահակի մօտ եղած չեմ արդէն հինգ տարի,» — հարցրեց Ծերունին Ծանրութեամբ. — քանի՞ զաւակ ունի նա։»

— «Նորա քրիստոնեայ կինը լաւ է վարվում Նորա հետ։ Նորա թոյլ սիրտը չէ՞ խոտորեցնում Եհովայից և մեր հայրենական հաւատից և ծէսերից։ Ծողովրդանոցումը երբէք տեսած չեմ Նորան, սկսեալ Նորա հարսանիքից. բայց վաճառականների հրապարակից անտարակոյս, չէ պակասում նա։»

— «Արի՛ իմ հետ միասին Նորա մօտ, իմ պապ, և դու կը տեսանես, որ նա աւելի բարի զաւակ է քան թէ Սամուէլը, թէպէտ նա չէ դալիս եկեղեցի, և շաբաթ օրին չէ փակում իւր տան դուռը։ Նորա տղայքը անպատճառ կը սիրես դու, թէպէտ իմ եղբօր կինը չափից դուրս փայփայումէ անդրանիկը։ Այդ տղայքը բոլորեքեան ունին խարտեաշ մազեր և երկնագոյն աչքեր, ինչպէս Նոցա մայրը։ Նոցա տունը դալիս են մի քանի քրիստոնեայք, և բարեսէր պատկերահան Գէյտը երբեմն ուսուցանումէր ինձ նկարել, երբ որ այն տեղ էի ես։ Չկարծեմ, որ դու անխտիր ատումես բոլոր քրիստոնեայքը, ըստ որում դոցանից մի քանիքը ատում և հալածումեն մեզ այժմ։ Չկարծեմ, որ դու ամենները դատումես այդպիսի խիստ դատաստանով, ինչպէս այս մեր անգութ հալածողքը։»

— «Ոչ, իմ զաւակ» — պատասխանեց ծերունին. — «Ցիրաւի՛, այդ ընդհանուր մարդասիրութիւնն է, որ քրիստոնեայքը կարծումեն թէ առաւել քաջ ուսած էին իւրեանց անբաղդ, խմաստուն մարգարէից. բայց այդ մարդասիրութիւնը շատ վատ հաստատումէին գործով դէպ ի մեղ։ Բայց քա՛ւ լեցի, որ ես դորա փոխարէն անիծեմ դորանց. փորձիր դու քո անձը, յառաջ քան թէ դատապարտումէիր քո ընկերը, ասումէ մեր սիրաքարող օրէնքը, ապա այցելութեան ժամանակին ողորմութիւն կը գտանես։ Բայց, իմ աղջիկ, մնան մի՛ գար այս տեղ, անադան է այժմ և քո բարի անունը կարող է հեշտ բամբասանքի տակ ընկնել, թէպէտ մի բարի գործ է, որ կատարումես դու, որի փոխարէն Տէր Սաբաւովթը կ'օրհնէ քեզ. քո ծերութեան օրերումը։ Թող ինձ այս տեղ միայնակ։ Տէրը կարող է և ինձ մի ադռաւ ուղարկել իմ անապատի մէջ, եթէ հաճոյ է նորան։ Իմ օթեւանը այսուհետև Տիրոջ մեծ տաճարն է, որի մէջ արեգակը և լուսինը սեղանի աշտանակներն են, և աշխարհի չորս կողմերը, վկայութեան խորանի սիւները։ — Լսի՛ր, այն տեղից պիտոյ է նորա կարող քերովբէքը իմ ականջն մօտ գովաբանեն նորա անունը գալարափողով, երբ որ գիշերի սաստիկ փոթորիկը իմ մաղերս փետումէին։ Թող գնամ ես, իմ զաւակ. լաց մի՛ լինիր դու, որ ես այսպէս միայն շրջումեմ։ Աւելի լաւ է ինձ անտուն և անտեղ տատանվիլ երկրի վերայ, քան թէ յարկ գտանել դայթակղութեան օթեւանի մէջ — լաւ է ինձ քարկոծ լինել քրիստոնեաների ձեռքով, քան թէ որպէս մի աղքատ և կարօտեալ մարդ արհամարհվիլ իմ յատուկ զաւակից, և այս բանը գուցէ թէ լսել իմ իսկական ականջով, երբ որ կարող չէի լռութեամբ ականատես լինել այդ չար դայթակղութեանը։»

— «Լաւ է, ուրեմն և ես կը մնամ քո մօտ,» — ասաց Բենիամինը. — «Թող ապա քրիստոնեայքը քարկոծեն և ինձ քո դրկի մէջ։»

Ելեազարը լուռ կացաւ, և մի դժուար պատերազմ կատարվումէր նորա սրտի խորքի մէջ։ — «Ուրեմն արի, իմ զաւակ,» — ասաց նա հուսկ յետոյ և վեր կալաւ Բենիամինի ձեռքը. — «Խնայելով քեզ կամիմ յանձն առնուլ նախատինք, և պաշտպանութիւն որոնել այն որդուս մօտ, որ աւելի է սիրել մի օտար կին, քան թէ իւր ծերունի հօր օրհնութիւնը։»

Այնուհետև լռութեամբ գնային երկուքը միասին դէպ ի Հուպուլեան հրապարակը և կոծեցին հանդերձավաճառ Խահակի դուռը։ — «Կա՛յ այդ տեղ մի ոք մեր մարդերից» — երկիւղածին շշնջեց մի ձայն պատուհանից։ — Փիլիպպոս Մովսէսը պատասխանեց եբրայեցերէն, և մի բոպէ յետոյ բացվեցաւ տան դուռը։

Խսահակը ընդունեց իւր ալևոր, անխնամ թողած հայրը, առ ի սրտէ ուրախութեամբ, ինչպէս երևումէր, բայց և կիսով չափ դժուարացած և անհանդիստ լինելով այն ամենօրեայ յանդիմանութիւնների մասին որ պիտոյ է լսէր նա, և այն խառնակութեան մասին, որ լինելու էր իւր տնային կեցութեան մէջ, ալևոր բարբունու պատճառով։ Բայց հասարակաց կարիքը և նեղութիւնը մոռեցուցել էր միմեանց սիրտերը։ Արդարև Խսահակի տունը տակաւին ազատ էր մնացած ամենայն հալածանքից, որովհետև նա իւր քրիստոնեայ կնոջ և միւս քրիստոնեաների հետ ունեցած կենակցութեամբը երևումէր, թէ ամենևին բաժանված է իւր ժողովրդից։ բայց նա ապրումէր միշտ երկիւղի մէջ այն թշնամական դիտաւորութենից, որ կար դէպ ի Հրէայքը, որ և այժմ ստուգապէս յայտնվել էր համարձակ բռնաւոր գործերով, և այժմ ի զուր աշխատումէր նա իւր կենակցութեամբ և կեցութեան եղանակովը, ծածկել այն կարեկցութիւնը, որ ծածկապէս պահումէր իւր մէջ դէպ ի իւր անբաղդ հայրենակիցքը։ Ճշմարտապէս ցաւալի եղաւ Նորան լսել թէ իւր եղբայր Սամուէլը անարժանապէս վարվել է իւր ալևոր հօր հետ և վրշտացրել է Նորան։ Խսահակը խնդրեց այժմ ալևորից, այդ բոլորը մոռացութեան տալ և սիրտը քաղցրացնել իւր տան մէջ։ Ի վերայ այսր ամենայնի նա որոշեց իւր մտքումը, որ թոյլ չը տայ ալևորի մոլորական կարծիքներովը խառնակել իւր ընտանեկան խաղաղութիւնը և օրական կեցութեան կարգը։ — «Որպէս հիւր, կը յարմարվի նա իմ տան ծէսերին ու սովորութիւններին,» — կարծումէր Խսահակը։ — «երբ որ կը սովորէ նա, և եթէ մեք սկսանենք այնպէս, ինչպէս տանելի էր մեզ։»

— «Բռ եղբայր Սամուէլը չէ պատուել իւր հայրը, և այս պատճառով Նորան չէ լինելու բարի երկրի վերայ։» — ասաց Փիլիպպոս Մովսէսը, և ասես թէ կարդումէր իւր որդու երեսի վերայ այն բանը, որ Նորա սրտի մէջ գոյանումէր։ — «բայց թող Տէրը տայ Նորան և մեր ազգին կարողութիւն դառնալու դէպ ի ուղղութիւն և չդարձուցանէ մեր վերայ իւր բարկացած երեսը, մեզ ապականելու համար։ Իմ օրերս շատ չեն այսուհետև։ — յաւելացրեց նա ծանրութեամբ — «բայց եթէ իմ հաւատարիմ Բենիամինան չը լինէր, ապա լաւ համարած կը լինէի աստանդական շրջել աշխարհի վերայ, քան թէ քո սիրտը փորձի տակ դնել, իմ որդի, որից երկիւղ ունիմ, թէ այդ գործը ի վեր է քան թէ քո կարողութիւնը։»

Խսահակի կնոջը անախորժ եղաւ Բենիամինի ներս մտանելը Նորա ննջարանի մէջ և պատմելը ինչ որ անցած էր։

— «Ոչինչ բարի բան յառաջանալու չէ դորանից,» — ասաց տանտիկինը — «եթէ մեք երկար պահենք մեր տանը այդ պատժաբարոյ ալևո-

ը։ Նա ատումէ ինձ այն պատճառով արդէն, որ ես ձեր ազգից չեմ. և իմ պատճառով, մինչև այժմ ոտք չէ կոխած մեր դրան շէմքի վերայ։»

— «Ոչ. իմ պապը ատում չէ քրիստոնեայքը.» — ասաց Բենիամինան ուրախութեամբ — «բայց նա մնալով այժմ այս տեղ, բաղդաւորութիւն և օրհնութիւն կը բերէ մեր տան վերայ։ Կարծեմ, սիրելի մօրաքոյր, թոյլ կը տաք ինձ փոքրիկ կապտաներկ սենեակը պատրաստել Նորա համար, այլև ինձ մնալ այս տեղ, սպասաւորելու Նորան։ Իմ քեռի Սամուէլի տունը կարող չէի գալ պապիս մօտ, որ այնքան շատ սիրած է ինձ սկսեալ իմ մանկութենից։»

— «Այս բոպէիս կարող չէ լինել այլապէս». — պատասխանեց տհաճութեամբ եղբօր կինը — «պատրաստիր սենեակը Նորա համար. բայց եթէ դու կը շատախօսես իմ հետ Նորա մասին, կամ թէ կը դժուարացնես ինձ այդ տնային ցաւի խաչակրութիւնը, ապա կ'ուղարկեմ քեզ Դանիէլի տունը։ Առ ժամանակ մի կարող ես և դու մնալ այս տեղ. բայց աշխատիր, ինչքան կարող ես, այդ ալևորը հեռի պահել երեխաներից և մեզանից. պատճառ, հերիք են մեզ այն տանջանքը որ ունենալու էինք, ճաշկերութեան սեղանի վերայ։»

— «Դու իմ անբաղդ, անբաղդ պապ.» — հառաչեց Բենիամինան ծածկապէս և լալով հեռացաւ իւր եղբօր նեղսիրտ կնոջից որ շատ անգամ արդէն խստապէս խրատած էր Նորան, բայց երբէք այնպէս խոր վիրաւորել չէր Նորան ինչպէս այժմ։»

Դալոց օրը շաբաթ էր։ Ալևոր Փիլիպպոս Մովսէսը իւր սենեկի մէջ շաբաթ էր կատարում և աղօթումէր առ Եհովան իւր անբաղդ ազգի համար, բայց ցաւելի էր Նորան, աղօթելու միջոցին շատ անգամ խարբալվել իւր որդու բաձրաձայն խօսելովը իւր խանութի մէջ, ուր նա գովասանումէր իւր ապրանքը խնդրողներին, այլև արծաթի դահեկանները գլորվելով վաճառասեղանի վերայ, և ուրիշ կողմից տանտիկնոջ աղմուկ գործելովը միւս սենեակների մէջ, մաքրելով և կարգի դնելով տունը. այս գործի մէջ օգնական էր Նորան Բենիամինան։ Ալևորը լսումէր յաճախ, երբ որ տանտիկինը զրդումէր Բենիամինային աշխատել, և սա հաղիւ թէ ունեցած էր այնքան ժամանակ, որ մի բոպէ ծածուկ գնայ ալևորի մօտ մաղթելու Նորան մի քաղցր բարի առաւօտ և բերէ Նորա համար նախաճաշիկ։ Ցիրաւի տեսանումէր ալևորը, որ նա լաց էր եղած, բայց նա չկամեցաւ խարբալել Նորա ուրախ հաւատը թէ իւր ցաւը թաղուցել էր իւր պապից։

Փիլիպպոս Մովսէսը իւր ալևոր գլուխը ծածկած մոխրով, աղօթումէր, երբ որ Բենիամինան վերադարձաւ և գանչեց Նորան ճաշ ուտելու։ Նորա հարսը հարևանցի խնդրած էր Նորանից, չմերժել իւր-

եանց տան սովորութիւնը. բայց այս խօսքը ասելով կարողացել չէր, կամ թէ կամեցած չէր ծածկել իւր տհաճութիւնը. և ալևորը լռութեամբ նստեց սեղանի մօտ, բայց շատ սակաւ մասնակից եղաւ հացկերութեանը, որովհետև կերակուրների մեծ մասը այնպիսի ուտելիք էին, որ Մովսիսական օրէնքով շատ խիստ արգելված էին։ Այս բանը երևումեր թէ չնկատեց որդին, բայց Բենիամինան տեսանելով կերակուրքը, ոչինչ բանի չմօտեցաւ, այլ ծոմ պահեց։ Երբ որ խօսք բացվեցաւ անցեալ երեկոյի խռովութեան մասին և պատմութիւն եղաւ, որ հարուստ Սամուէլի և այլ ուշևոր Իսրայէլացոց օթևաններումը մի լուսամուտի ապակի անվնաս չմնաց և թէ մի քանի շրջմոլիկ մանրավաճառ Հրէայք փողոցների մէջ հրապարակաւ թակվել են. այնուհետև — ասաց Իսահակը.

— «Եւ ի՞նչ հարկաւոր էր հարստականներին այնքան մեծամիտ լինել, և ինչո՞ւ աշխատումն աղքատները անօգուտ առանձնական վարքով դարձուցանել իւրեանց վերայ մարդերի ուշադրութիւնը։»

— «Քրիստոնեա՞յ ես դարձել դու, իմ որդի» — հարցրեց ալևորը — «կամ թէ այսօր շաբաթ չէ՞։»

— «Ես պահումեմ մեր նախահարց աւանդութիւնքը այնքան, ինչքան որ ես պարտականութիւն եմ համարում իմ վերայ.» — պատասխանեց Իսահակը — «և ինչքան դոքա համաձայն են մեր ժամանակին և սուրբ կամ անսուրբ ասած բանի խորհրդին, և ինչպէս իմ բանականութիւնը և խիղճը խոստովանումեր դորանց. ցանկալի էր ինձ, որ և իմ հայրը կարողանար այդպէս մտածել և չը դայթակղվէր այնպիսի բանից, որ ես անմեղ եմ համարում։»

— «Իմ սկեսրայրը պիտոյ է չմերժէ մեր շաբաթի կերակուրը,» ասաց տանտիկինը և անդգուշութեամբ մատուց Նորան մի սկաւառակ խոզի խորովածով, — «այսօր բոլոր տունը անկարգութեան մէջ է» — յաւելացրեց նա ներողութիւն խնդրելով, երբ որ ալևորը լռութեամբ բաց մղեց սկաւառակը — «և պատրաստութիւն չեմ տեսած այնպիսի հիւրերի համար, որ այլապէս սովոր էին քան թէ մեք։»

Այնուհետև յառաջացաւ մի տհաճ լռութիւն սեղանի վերայ, և Իսահակը մի յանդիմանական հայեացք դարձուց իւր կնոջ վերայ, որ ասես թէ չնկատեց դորան։

Ալևորը մի շարժողութիւն արեց, որպէս թէ կամեր վեր կենալ տեղից, բայց Նորա աչքը ընկաւ Բենիամինայի վերայ, և նա լռեց ու մնաց նստած։ Բայց ինչ որ Բենիամինան կարդաց անբարբառ պապի երեսի վերայ, ծածուկ դուրս քաշեց մի արտասուք Նորա գեղեցիկ սև աչքերի մէջ, որ նա ամաչելով ցած թողեց, և այս միջոցին անդիտու-

թեամբ փշրեց իւր հացը մանր կտորտանք։ Այս փոքրիկ անզգաստութեան համար կրկին ստացաւ նա մի խիստ յանդիմանութիւն իւր եղբօր կնոջից, որ անխնայաբար նախատեց նորան ասելով, «թէ ժամանակ չէր խաղալ հացի հետ։ — «Բարի էր» ասաց նա, «ունենալ մի բան, տալու նոցա, որ ինքնանք չունէին ոչինչ։»

— «Կին դու» — շշնջեց Իսահակը դէպ ի տանտիկինը, երբ որ նոքա վեր կացան սեղանից — «այդ ընդդէմ էր մեր պայմանադրութեանը։»

Երբ որ ալեւոր Փիլեպպոս Մովսէսը միայնակ էր իւր որդու հետ, երկար միջոց ծանրութեամբ նայեց նորա երեսի վերայ։ — Ասա ինձ պարզ ու բաց, իմ որդի,» — սկսեց նա խօսել — «մի ալեւոր, հին ժամանակի Հրէայ քո և կնոջդ աչքումը մի անկոչ հիւր է, որի առաջև ամաչումէք դուք փակել ձեր դուռը, բայց չէք ամաչում մատուցանել նորան մոլախինդի բաժակը որպէս ընդունելութեան ողջոյն, և իմ անբաղդ Բենիամինան մուրացկան է այս տեղ, որի համար չունիք դուք այս տեղ մի քանի փշրանք հացի։»

— «Այդ ի՞նչ խօսք է, իմ հայր։» — կակաղեց Իսահակը — «Մի՞ թէ իմ կինը . . . . ների՛ր նորան . . . . մի անզգուշութիւն նկատեցի ես ինքս, որ ցաւելի եղաւ ինձ։»

— «Իսահակ, Իսահակ.» — խօսքը յառաջ տարաւ ալեւորը — «Այդ ի՞նչպէս դողումէ քո ձայնը . . . . և ի՞նչպէս փախչումէ քո հայեացքը իմ երեսից։ Դեռ ևս կամիմ ես քեզ որդի ասել և մի քանի ժամանակ մնալ քո մօտ, որ տեսանեմ, — արդեօք կարելի՞ էր փրկել քեզ։ Քո սիրտը չար չէր, Իսահակ, բայց այնպէս հանդիպեցաւ քեզ, ինչպէս Յակովբի որդիներին, որ պալաղդիների աղջիկների մօտ մոռացան իւրեանց հայր ու մայրը և Տէրը, որ դուրս հանեց նորանց Եգիպտացոց աշխարհից . . . . Նոքա երբէք չտեսան աւետեաց երկիրը։»

— «Դող իմ ամուսնութիւնը այսուհետև չղայրայնէ քեզ, հայր.» — սկսեց խօսել Իսահակը — «և մի՛ բարկանար իմ տնային կեցութեան եղանակի վերայ։ Մտածի՛ր, որ ես մի կէս դար աւելի յետոյ եմ եկած աշխարհ քան թէ դու. կարծիքները և տեսութիւնքը փոփոխումեն ժամանակի հետ, և այն յարակցութիւնքը և հաղորդութիւնքը որ ունեցել եմ զանազան մարդերի հետ, ուսուցել են ինձ, այս և այն բանը մեր կրօնի և յարակցութեան մէջ միւս ազգերի հետ ուրիշ աչքով տեսանել քան թէ դու։ Ցիրաւի պիտոյ էր ինձ կոյր լինել, եթէ չը հասկանայի ես որ մեր ազգը, ամենախորհրդաւոր ազգն է երկրի վերայ, և անջնջելի իւր նոյն իսկ նուաղութեամբ և ցիրուցան դրութեամբ աշխարհի միւս ազգերի մէջ։ Ի վերայ այսր ամենայնի մոռածումեմ ես, որ չէ՛ պիտոյ մեզ արտաքուստ և միշտ բաժանվել բոլոր միւս մար-

դերից։ Մեր սրտի մէջ կարող ենք լինել այն աղգը, որ մէջ ծածուկ կարող էր ամրացնել մեր տառապալից դրութեան մէջ և բարձրացնել մեզ մեր հալածողների և արհամարհողների վերայ, թէև ստիպուած էինք մեք խոնարհել և սողալ նոցա առաջև հողի մէջ։ բայց արտաքուստ պիտոյ է ղուգահառնվինք մեծ ժողովրդական բաղմութենների հետ։ ապա թէ ոչ, դոքա ջարդուփշուր կ՚ոնեն մեզ մեր կամակորութեան մէջ։

— «Եթէ ուղիղ եմ հասկանում քո ասածը, իմ որդի, ապա քո կարծիքը այն է, որ մեք կարող ենք մնալ միշտ Իսրայէլացիք, թէև ընդունէինք քրիստոնէական ծէսեր և վարք ու բարք, և թէ մեր աղգը մնալու էր հաստատ, թէև մեք լուծանէինք դորանց և մեր արիւնը խառնէինք այլազգիների հետ . . . .»

— «Այստեղ է ահա, որ մեք որպէս աղգ ու տերութիւն ոչինչ ենք այսուհետև» — խօսքը յառաջ տարաւ որդին — «և Երուսաղէմի տաճարի հետ միասին, աւերակ է դարձել և մեր արտաքին աստուածպաշտութիւնը։ Հաւատում չե՞ս, որ մեր օրէնստուքը, եթէ ապրած լինէին այժմ և այս երկրումն, մեզ տուած կը լինէին ամենևին այլ օրէնքներ։»

— «Ու երկնչե՞լ ես Սաբաւովթից և պատուե՞լ իւր հայր ու մայրը» — հարցրեց ալևորը։

Այժմ ներս մտաւ մի մարդ սենեկի մէջ և խօսակցութիւնը ընդհատվեցաւ։

Երեկոյին ներկայ չէր Իսահակը, բայց նորա կնոջ աղգականներից մի քանիքը, երկու երեք պճնասէր երիտասարդներ եկած էին այցելութիւն։ Ոչ ոքի փոյթ չէր ալևոր Փիլիպպոս Մովսէսը։ Նա լուռ ու մունջ նստած էր մի անկիւնում և լսումէր այն պատանի մարդերից մի քանիքի բարձրաձայն ծիծաղելը և գուարճանալը Հրէական հանդէսների վերայ, որ նոցա կարծիքով, պիտոյ է շուտով վերստին սկսանէին։ Այս եկաւորների մէջ կար և մի պատանի գեղեցիկ մարդ հին գերմանական հագուստով և երկար շիկագոյն մազերով, որ թափվումէին նորա սպիտակ օձիքի վերայ։ Սա էր մանուկ պատկերահան Ֆէյտը, որ նորուց եկել էր Հռոմից, ուր այդ հագուստը սովորական էր ճարտարապետ արհեստաւորների մէջ։ Եւ սորա վերայ ծաղր էին արած այն երիտասարդքը վախենալով, մի՛ դուցէ թէ սա խլէ նոցանից իւրեանց առաւելութիւնը, նորաձև հագուստներ մուծանելով Համբուրգի մէջ։ բայց Ֆէյտը զայրացած չէր նոցա ընթացքի վերայ, որովհետև նկատած ևս չէր։ Այս Ֆէյտը որդի այն ծերունի Դոքտորի որ բնակելով Հուսուլեան հրապարակի վերայ, տնային բժիշկ էր այս տեղ։ Հօր միջնորդութեամբ ստացել էր նա մնտաւորութիւն այս գերդաստանի հետ որպէս

վարժապետ նկարչութեան. բայց այն դրաւիչ բանը, որ Նորան քարշել էր դէպ ի այդ տեղ, էր Բենիամինայի գեղեցիկ դէմքը, որ ճարտարապետի համար ունէր մի ամենեին մեծակշիռ խորհուրդ։ Մինչև այժմ Ֆէյտը չէր եղած կցորդ խօսակցութեանը, այլ պատուհանի մօտ կանգնած խօսումէր մեղմ ձայնով Բենիամինայի հետ Նորա ալեւոր, արժանապատիւ պապի վերայ, որ խկոյն նկատած էր նա և այնպիսի պատկառանքով ողջունած, որ աղդումէին Նորա հասակը և աղնիւ կերպարանքը, և որի գեղեցիկ և նահապետական դլուխը հաւանելի էր Նորան։ Այժմ լսեց նա, թէ ինչ բանի վերայ էր խօսակցութիւնը այն երիտասարդների մէջ, շուտով դարձուց դէմքը Բենիամինայից, որ մի յաջող մոռաբերութեամբ տայ խօսակցութեանը մի այլ ուղղութիւն, բայց այդ անուշադիր պճնասէր երիտասարդքը, միւսանգամ սկսեցին իւրեանց սանձարձակ կատականքը այն ծիծաղելի պատահարների վերայ, որ պատճառել էր խառնակութիւնը, և իւրեանց կծու զուարճութեան մէջ մոռացել էին, թէ ի՞նչ տան մէջ էին և ի՞նչ մարդ ներկայ էր Նոցա մօտակայքումը։ Այս բանին խելամուտ արեց Նորանց Պարոն Ֆէյտը այնպիսի ցասմամբ և պատշաճաւոր կերպով, որ նոքա ամօթապարտված և դառնացած հեռացան, բայց մի քանի բառ շշնջեցին Նորա ականջումը, այսինքն թէ եղուց վաղ, յոյս ունեն տեսանելու Նորան Վանսենեան պարսպի վերայ, Օրելիսկների մօտ։ Այս բանը ոչ ոք չլսեց բաց ի Ֆէյտից, որ յոյս ունէր այս հանդիպումը աւելի խորհրդաւոր կացուցանել, քան թէ այն հալածանքի հանդէսներն էին, որոնց վերայ այն երիտասարդքը մի փոքր յառաջ այնքան ծիծաղած էին։

Բայց դորանով դեռ ևս չվերջացաւ վէճը. մի քանի հասակաւոր վաճառականք փոքր ի շատէ կուսակից դտանվեցան հեռացած բարեկամներին և երեւումէր, որպէս թէ անհաւան չէին այն պատժողական իրաւունքին, որ երկար ժամանակ դուրս ծծած ժողովուրդը, ինչպէս ասումէին նոքա, դործ է դնում այժմ հատուցումն պահանջելով իւր առանձնաշնորհ Իսրայէլական պատուհասիչներից։

Այնուհետև խօսքը վեր կալաւ Ֆէյտը և ջերմութեամբ դատապարտեց այն ատելի, անքրիստոնեայ դիտաւորութիւնը, որ տեղիք էր տուել Քրիստոնեաներին մինչև այն աստիճան անարդել իւրեանց անձը, որ խախտէին այն խաղաղութեան դաշը, որ տէրութիւնը ամենայուն անունով կամաւորապէս կապել էր մի տարագիր, անպաշտպան աղդի հետ։ «Մեք դանդատումենք, թէ նոքա մեզ ատումեն և խաբումեն.» ասաց նա, — «մի՛ թէ մեք սիրումենք նորանց, եթէ քարկոծումէինք նորանց։ Զմ՚նք խաբում՝ մեք նորանց ևս առաւել, ուխտազանց և օրինազանց դտանելով, և անդիտանալով ապահովութեան ուխտը, որ մեք

դրել ենք նոցա որպէս մեր քաղաքակիցների հետ։ Արդարութիւն կը լինէր, եթէ մեք համբերող լինէինք նոցա, մի դեղեցիկ գործ, եթէ մեք ինքներս լինէինք նոցանից աւելի լաւ, և քրիստոնէական ընթացք, եթէ մեք ստիպէինք նորանց պատուել ու սիրել մեզ։ Բայց այս նպատակին կարելի է հասանել ոչ ատելութեամբ, արհամարհութեամբ և հալածանքով, և ոչ մի անազնիւ անգթութեամբ դէպ ի անպաշտպան մարդիկ։»

Բենիամինան իւր հաւատակիցների ջերմ պաշտպանը վարձատրեց մի քաղցր շնորհակալու ակնարկութեամբ, և ալևոր Փիլիպպոս Պովլէսը բարձրացաւ իւր անկիւնից. — «Արդար է Տիրոջ պատիժը մեր վերայ, բայց անիրաւ է այն ձեռքը որ այդ պատիժը դնում է մեր վերայ. — ընդունիր դու մի ալևորի շնորհակալութիւն,» — այս տեղ դարձուց դէմքը դէպ ի պատանի Ֆէյտը — «որովհետև դու համախոհ չես այն մեր հալածողներին, և չես բարձրացնում քարը մեր վերայ այս մեր դառն օրերի մէջ, և դեռ ևս ունիս մի սիրաբարբառ խօսք Տիրոջ ընկճած և խոնարհեցուցած ժողովրդի համար, նորա այցելութեան միջոցին։»

— «Ո՞վ է այդ զարմանալի ծերը. դա, ասես, թէ խօսում է որպէս մի Աստուածաշունչ գիրք» ասացին միմեանց օտարականքը և մնացին սառած։

Իսահակի առաւել հասակաւոր որդին, մի մանուկ 5 տարեք, որ և իւր մօր աչքի բիրն ու նորա անշուշտ նմանատիպն էր, բոլոր օրը նայեցած էր ալևորի վերայ, որպէս թէ մի հրաշք էր դա։ — «Հրէական քահանա՞յ ես դու» — ասում էր նա և մօտենում էր յանդգնաբար. — «վա՛յ, այդ ինչ երկար ու տգեղ մօրուք ունիս դու, — մի՛ կանգնիր պատուհանի առաջև, ապա թէ ոչ, մարդիկը կը փշրեն լուսամուտի ապակիքը.» — ասում մայրս։

— «Այս քո պապն է.» — շշնջեց Բենիամինան — «դու պարտական ես պատուել նորան և քաղաքավարի լինել նորա հետ, Կարոլոս։»

— «Ցիմարութի՛ւն.» — ձայն արձակեց մանուկը ծիծաղելով, — մի՛ թէ իմ պապս մի այդպիսի մօրուքաւոր Հրէայ էր, որ չունի համարձակութիւն խողի ճարպ ուտել. ոչ, նորա հետ կամիմ ես հէր, հէր խաղալ, ինչպէս այս մանկունքը։»

Բենիամինան լաց եղաւ և փակեց մանուկի բերանը, որ ալևորը չլսէ նորա խօսքերը. բայց անբաղդ պապը լսած էր նորա ամեն մի խօսքը, և իւր թոռնի բերանից այդ հալածողական ձայնը հնչեց որպէս դժոխքի ամենաթունաւոր արհամարհական ծաղրածութիւն։ Նա բարձրացրեց ձեռքը որ խորտակէ այդ օձը, որ շչել էր նորա ականջումը, որ ցած որոտայ իւր անէծքը իւր յատուկ զաւակի վերայ։ Բայց այս բոպէին հան-

դիպեցաւ Նորան Բենիամինան արտասուալից աչքով, ալևորը ցած թողեց ձեռքերը և մնաց գունաթափ ու լուռ, աչքերը անշարժ ըևեռած դէպ ի գետին։

Նոյն րոպէին ներս մտաւ Իսահակը և տեսաւ տհաճ դէմքերը իւր շրջակայքում. պատճառ, օտարականներից ոչ ոք չկար այն տեղ, որ ցաւակցութիւն ցուցանէր ալևորին և ամաչէր այն արհամարհանքից, որ նա կրած էր իւր յատուկ գերդաստանի մէջ։ Նոցանից մի քանիքը հեռացած էին, միւսերը հեռացան նոյնպէս շուտով։

— «Ի՞նչ բան կայ այս տեղ,» — հարցրեց Իսահակը և նայեց ալևորի խոժոռված դէմքի վերայ, կողմնակի ակնարկելով դէպ ի իւր կինը. — «վերաւորո՞ղ է մի մարդ իմ ծերունի հայրը։»

— «Ի՞նչ մեղաւոր եմ ես անմեղ երեխայի ղրոյցի մասին,» — պատասխանեց կինը. — «արի, իմ որդի» — խօսքը յառաջ տարաւ մայրը, բռնելով իւր սիրելի զաւակի ձեռքից և Նորա հետ միասին հեռանալով սենեկից. — «Այսուհետև ոչ ոք մեզանից չունի համարձակութիւն իւր յատուկ տան մէջ բանալ բերանը։

Երիտասարդ Գէյտը տհաճութիւնից ու բարկութիւնից կարմրատակած, կանգնել էր Բենիամինայի հետ ալևորի մօտ, և վշտակցութեամբ բռնած էր ալևորի ձեռքը. բայց ծերունին կար այն տեղ, որպէս թէ անշունչ, աչքերը դէպ ի գետին ձգած։ Այժմ նայեց նա իւր չորս կողմը, որպէս թէ զարթումէր մի երազից. և տեսանելով իւր որդին իւր առաջև կանգնած, իսկոյն վազեցին ջերմ արտասուքը Նորա գունաթափ թշերի վերայով և թափվեցան Նորա երկար ու սպիտակ մօրուքից։

— «Բարեաւ մնա, իմ որդի» — ասաց նա և դրեց ձեռքը որդու գլխին. — «Տէրոջ ձեռքը ծանրապէս պատժել է քեզ քո ուխտապանցութեան համար. ես չը կամիմ անիծել քո տունը, բայց հեռանումեմ, յառաջ քան դա կը փլատակվէր իմ վերայ։»

Այս խօսքերից յետոյ հեռացաւ ալևորը և որդին չը համարձակվեցաւ դադարեցնել բարկացած հայրը։ Բայց Բենիամինան լալով գնաց Նորա հետևից, և Երիտասարդ Գէյտը մի փոքր հեռաւորութեամբ երթումէր երկուքի քամակից, որ եթէ այս անբաղդներին պատահէր մի ձախորդութիւն, կարողանար պաշտպանել նոցա անհանգիստ ամրոխի երեսից։ Պատճառ, սկսել էին արդէն Նորոգել անցեալ երեկոյի խռովութիւնը և արդէն սովորականից աւելի բազմութիւն հաւաքված էր փողոցներումը։ Գէյտը տեսաւ ալևորը, որ ճանապարհ ընտրեց դէպ ի Ալտենայի դարպասը Նորա ձեռքից բռնած Բենիամինան, թէպէտ ի զուր խնդրած էր սորանից, որ թողու Նորան։

Ֆէյտը աներկմիտ էր այժմ, որ ալևորը կամի դուրս գնալ քաղաքից և իւր համար հաստատ բնակութիւն որոնել Ալտօնայի մէջ։ Դա որոշեց մնքումը, ուղեկից լինել նոցա և նորանց իջուցանել իւր ծանօթների մօտ Ալտօնայումը։ Բայց խառն բաղմութեան մէջ և մթնումը անհետացան նոքա Ֆէյտի աչքից և յառաջ քան թէ հասած էին Ալտօնայի դարպասին, ստիպվեցան դադար առնուլ և արհամարհանք կրել դատարկաշրջիկ տղաների բաղմութենից և արբեցած մշակներից, որ փողոցից փողոց վազելով, ջարդումէին Հրէաների ապակեղէն լուսամուտքը։

— «Հէր, հէր.» — աղաղակումէին հալածողքը, — «ուր կամիս գնալ դու այդ գեղեցիկ աղջկայ հետ, որդոտ Հրէայ դու։»

Ոմանք քարշումէին ահա նորա մօրուքից, միւսերը սկսեցին անպատշաճապէս ձեռնամերձ լինել դիանման գունաթափ, ահաբեկված Բենիամինային։ Եւ յանկարծ ներս մտաւ Ֆէյտը իւր այծապլուխ գաւազանովը ճանապարհ ճեղքելով վատթար ամբոխի միջից. այս և այն ավնուամիտ Համբուրգեցին շտապեց օգնութիւն մատուցանել նորան, և այն միջոցին, երբ պահապանքն ու պօլիցիան ցրվումէին հալածողքը, Ֆէյտը առաջնորդեց փախստականներին մի դարպասի միջով դէպ ի մի խոտորնակ փողոց, և մի քանի շրջապտոյտ ճանապարհներ կատարելով, վերջումը ամենևին ողջ և առողջ հասացրեց նորանց իւր հօր տունը, ուր ալևոր Դօքտօր Ֆէյտը ընդունեց այն անբաղդ հալածականքը, ամենայն ցաւակցութեամբ և մարդասիրութեամբ օգնելով նոցա, ինչքան կարելի էր նորան։ Բենիամինան կիսամեռ էր ահ ու դողից, և անբաղդ ալևորը ուշաթափված վայր ընկաւ գետնի վերայ, երբ որ ոտք էր կոխել տան շէմքի վերայ։ Երբ որ ուշը վերադարձել էր, սկսեց նա կատաղածի պէս նայել չորս կողմ, փնտրել մօրուքի մնալերը և ձայն արձակել վշտացած մարդարէի բերանով։ — «Անիծեալ լինի այն օրը, երբ ծնայ ես — այն օրը, երբ իմ մայրս ծնեց ինձ, թող չլինի օրհնեալ. անիծեալ լինի այն մարդը, որ իմ հօրը աւետիք տուեց ասելով. — ահա ծնաւ քեզ արու զաւակ, որի վերայ ուրախացաւ իմ հայրը։ Երանի թէ սպանած լինէին ինձ իմ մօր փորումը. երանի թէ նորա արգանտը դարձած լինէր ինձ գերեզման. երանի թէ նորա արդանտը յաւիտեանս մնացած լինէր ամուլ։ Ինչու աշխարհ եկայ ես իմ մօր փորից, եթէ պիտոյ էր ինձ ականատես լինել այսպիսի տառապանքների և իմ օրերը վերջացնել ամօթի մէջ։»

Մինչանդամ ուշը գնաց նորա վերայից և մի սաստիկ տենդ ընդհատեց նորա դղրդեցուցիչ հոգեկան չարչարանքը և երևումէր թէ գլո-

րեց նորա ցաւը դէպ ի քուն։ Բայց տենդը վերադառնումէր յաճախ նորա երակների և ջերմեռեռական տեսիլների մէջ, ուր նա Յովբի խօսքերով անիծումէր իւր ծննդեան օրը և մարգարէների հետ կարծումէր, թէ տեսանումէ իւր աղգի կորուստը և Երուսաղէմի կործանումը։ — «Ահա, ձայն էր արձակում նա. — ահա պաշարած և ահ ու դողի մէջ են նոքա.... ահա լայ են լինում և կոծումեն.... ահա պիտոյ է նոքա, պիտոյ է նոքա իւրեանց որդիների և աղջկների միսը ուտեն.... ահա սրի բերանովը մեռանումեն նոքա իւրեանց թշնամիների առաջև. և նոցա ձեռքով, որ խնդրումեն նոցա կեանքը.... և ահա մեռածների մարմինքը ձգվումեն որպէս կերակուր թռչունների, երկնքի տակ. և որպէս աւար վայրենի գազաններին.... և այս բոլորը իմ որդիների մեղքը.... վայ նոցա.... ողբայ նա և կցեց ձեռքերը.... վայ քեզ, կորուսեալ Իսրայէլդ։ Դու իջանումես բորբոքված գահենի մէջ և կործանվումես որպէս Սոդոմ և Գոմոր քո մեղքերի բազմութեան համար։»

Երբ որ նա այսպէս տանջվումէր, Բենիամինան նստած էր նորա մահճի մօտ և աղօթումէր կամ թէ կարդումէր նորա առաջև ծեր Գէյտի աստուածաշունչ գրքից, մինչև որ նա հանգստանումէր և ահաւոր տեսիլները հրաժարվումէին նորանից։

Ալևոր Գէյտը շինել էր իւր տունը պատսպարան այն անբաղդների համար, և նորա որդի, երիտասարդ պատկերահանը, շատ անգամ ամբողջ օրերով նստած էր Բենիամինայի հետ միասին ծերունի Հրէայի մօտ, և այս երկուքը փոխ առ փոխ հսկումէին նորա հիւանդութեան մահճի մօտ։ Շատ անգամ, երբ որ Բենիամինան կարդալով խաղաղեցուցած էր նորան, և հանդարտ նստած էր նորա մահճի մօտ սուրբ գիրքը ձեռքումը, երբ որ հիւանդը ննջած էր և նորա փառաւոր ծերունի երեսը երակի մէջ խաղաղ ժպիտով զուարճանումէր, այս միջոցներիս պատկերահան Գէյտը նկարչական գրիչը ձեռքին նստումէր նոցա հանդէպ և ձևացնումէր պաստառի վերայ Հրէայ օրիորդի և նորա ալևոր պապի կերպարանքը։ Բենիամինայի հոգու մէջ ծագեցաւ մի հրաշալի լոյս այն բաներով, որ կարդումէր նա ալևորի առաջև, և ինչ որ նա խօսած էր երկիւղած պատկերահանի հետ սուրբ գրքի մասին, որ պարունակումէր թէ իւր հաւատի դաւանութեան և թէ Քրիստոնեայ պատկերահանի, դորանից տարբեր հաւատի դաւանութեան աղբիւրը։

Մինչդամ վերադարձած էր դէպ ի տուն երիտասարդ Գէյտը, ձեռքը կապած վիրաւորութենից որ, ինչպէս ասումէ նա, պատճառել է նորան մի ճախորդ վայրանկութիւն։ Բայց խօսելով ստուգապէս, նա ստիպուած էր եղած այն երկու ամբարտաւան երիտասարդ պճնասէրը

իրատել սրով, որ այն առաւօտուն ի զուր սպասած էին Նորան Վանսէնեան պարսպի մօտ, ըստ որում Ֆէյտը չէր կարողացել անտես առնել հալածականքը։ Նոքա այնպէս մեծամտաբար խօսած էին Ֆէյտի քաջութեան վերայ և Նորա յետ մնալը ժամադրեալ բոպէին այնքան ծիծաղելի էր եղել նոցա, որ Ֆէյտը պարտական էր ուսուցանել նոցա մի փոքր խոնարհել և վեց շաբաթ վիրաբուժի հոգաբարձութեան տակ մնալ մահճի մէջ։

Ֆէյտի վերաւորութիւնը շատ թեթև էր. մի քանի օրից յետոյ Նորա ձեռքը ազատվեցաւ կապից, և նա կարող էր անարգել գործ դնել իւր նկարչական գրիչը։ Բենիամինային ոչինչ ասած չէր այդ մասին. բայց նա գուշակեց ինչ որ պատահած էր և ծածկապէս օրհնեց Նորան այն ազնիւ ջերմեռանդութեան համար, թէպէտ սորանից յառաջացած զինաշարժութիւնը իւր խաղաւէտ պաշտօնի մէջ ծածկուումէր նա, որպէս մի յիմարական անմոռութիւն։

Այս միջոցին օրէ օր բարձրանումէր ալևոր Հրէայի դրութիւնը. թէ Ֆէյտը իւր սրտի մէջ ի՞նչ էր զգում այն գեղեցիկ Եբրայեցի աղջկայ համար. այդ բանը գաղտնիք չէր նոյն իսկ Ֆէյտի համար, և աղջիկը հաղար անդամ օրը տեսանումէր այդ գաղտնիքը Նորա խաղաղ, սիրալից հայեացքի մէջ։ Նա ամենայն բոպէ լսումէր այդ բանը այն քաղցր ոճի մէջ, որ նկատելի էր Նորա ամէն մի թէև շատ անենշան խօսքումը։ Ֆէյտի պատկերը միշտ գեղեցիկ ու սիրարժան դրած էր Բենիամինայի հոգու առաջև, սկսեալ այն առաջին բոպէից, երբ որ սա տեսած էր Նորան, բայց ևս առաւել սկսեալ այն երեկոյից իւր քեռու մօտ, երբ որ Ֆէյտը մի ազնիւ բարկութեամբ հալածեց տնից այն արհամարհողը, և Նորա անարատ ազգին այնպիսի ջերմութեամբ պաշտպան կացաւ հալածողների երեսից։ Այլև յետոյ Նորա պատերազմը հակառակորդների հետ, և այն ցաւակցութիւնը որ սկսեալ առաջին բոպէից ցուցած էր նա իւրեանն և իւր ալևոր պապին — այն համաստութիւնը և հեղութիւնը, որով նա ծածկումէր ամենայն զրկանք և բարերարութիւնք, որ յանձն էր առած Նոցա համար, — այս բոլոր ազայցութիւնքը մի ազնիւ, քընքուշ զգացող սրտի, շնորհակալութեան վարագուրի տակ արդէն ձև ու կերպարանք տուեցին այն մանուկ սիրուն, որ նոր զարթեցած էր ահա։ Բայց դեռ ևս ոչ աղջիկը և ոչ երիտասարդը այդ մասին ոչ մի բառ դուրս հանած չէին իւրեանց բերանից, թէպէտ երկուքը ևս աներկբայ էին այդ սիրու ստուգութեան վերայ։

Անցած էին մի քանի շաբաթ։ Հալածանքի կատաղութիւնը դէպ ի Հրէայք վերջացել էր։ Համբուրգի մէջ հանդարտ էր վերստին և հալածված Հրէայքը կարող էին միւսանգամ երևել փողոցների մէջ,

առանց արհամարհանք կամ թէ անպատուութիւն կրելու։ Բայց լրագիրքը պատմումէին, թէ նոյն կատաղութիւնը տարածվել է և միւս քաղաքների մէջ, և լսումէին Կոպէնհագենից և այլ Դանիական քաղաքներից, թէ եղած են այն տեղ նմանապիսի անարժան պատահարներ։

Այժմ վեր էր կացել իւր մահճից ալևոր Փիլիպպոս Մոլսէսը, բայց նորա դնացքը դեռ ևս ծանր ու դողդոջուն էր։ Այնուհետև նորա երեսը երևումէր, ոչ այնքան խոշոր և խիստ. այնպէս էր, որպէս թէ մի քաղցր հոգի իջանելով նորա վերայ, թողել էր մի հրաշալի փայլողութիւն նորա աչքերի մէջ — այնպէս էր, որպէս թէ նորա հոգին մնտեցել էր հաշտութեան և պայծառակերպութեան։ Բայց երկար ժամանակ անհասկանալի էր նորան, թէ այն մարդիկը Քրիստոնեայք էին, որոնց պարտական էր նա իւր կեանքը և Բենիամինայի փրկութիւնը. պատճառ, սկսեալ այն միջոցից, երբ յարձակված էին նորա վերայ փողոցի մէջ, չդիտէր նա թէ ինչ անցք է անցել իւր գլխից։

Նորա որդի Սամուէլը, այն հարուստ ակնավաճառը, մի օտար վաճառական ընկերութեան տնանկութեամբ (բանկրուտով) և իւր յատուկ անյաջող ձեռնարկութեամբ կորուսել էր իւր բոլոր գոյքը։ Մուրացկանի պէս հրաժարված էր Համբուրգից, որովհետև ճանապարհումը յարձակվել էին նորա վերայ և անպատուել էին նորան։ Թէպէտ ամենայն պատուելի Համբուրգեցի անհաւան էր այս անզթութեանը դէպ ի մի անպաշտպան փախստական, բայց ոչ ոք այնքան ցաւակից չէր դորան. մանաւանդ, որ դա այնպէս անարժան կերպով վարվել էր իւր ալևոր ծնողի հետ, որ ամենեքեան պատվումէին որպէս առաւել արդար մարդը իւր բոլոր աղգի մէջ, և որի վերայ ասես թէ թափված էր այն մեծ լուսափայլութեան վերջին շողշողումը, որով Մակաբայեցոց և մարգարէների ժամանակին պայծառաղարդված էր այն բոլոր զարմանալի ժողովուրդը։

Վերջին տառապանքը խոնարհեցուցել էին Համբուրգեան Իսրայէլացոց ամբարտաւանութիւնը։ Նոքա սկսեցին միւսանգամ որոնել իւրեանց քահանայքը և երկար միջոց թող արած ժողովրդանոցքը։ Այսպէս, լրաբերը եկան և ալևոր Փիլիպպոս Մոլսէսի մնտ, իմաց տալու նորան, թէ հասարակութիւնը ցանկանումէ ունենալ նորան իւր մէջ, և յոժարակամ նուիրած արծաթ հոգացել է արդէն նորա պահպանութեան և կեցութեան համար ամենևին ազատ բարեկամների և աղգականների օգնութիւնից։ Պատճառ, նա շատ անգամ սպառնացել էր նոցա այն բանը, որ պատահեցաւ ահա, եթէ չէին ուղղելու իւրեանց անձը. այժմ սկսեցին նոքա պատուել նորան որպէս Եհովայի մարդը, որի վերայ հին մարգարէների հոգին հանգչումէր դեռ ևս։

—«Կամի՞ս դու այժմ դառնալ դէպ ի ճշմարտութիւն, ով Իսրայէլ» — ասաց իւր ժողովրդի ուղարկած դեսպաններին — «կամի՞ս դու այժմ սրբել քո սիրտը չարից, ապա Տէրը վերստին կը դարձուցանէ իւր երեսը դէպ ի ձեզ և յաւիտեան կը մոռանայ իւր բարկութիւնը։ Պատճառ, սարերը կարող են խախտվիլ իւրեանց տեղից և բլուրները կործանվիլ, բայց իմ ողորմութիւնս պիտոյ է հաստատ մնայ և իմ հաշտութեան ուխտը չէ քակվելու, — ասում ամենողորմ Տէրը։ Ահաւասիկ, նա սիրել է և սիրելու է մեզ մինչև օրերի կատարածը. անտարակոյս կը գայ այն ժամանակը, երբ Տիրոջ փրկածքը յետ կը դառնան և կը գան Սիոն գովելով նորան, և մշտնջենաւոր ուրախութիւն թագաւորելու է նոցա գլխի վերայ, ուրախութիւն և երջանկութիւն պիտոյ է ընակին նոցա մէջ և ցաւ ու տրտմութիւն փախչին նոցանից. արդարև, Իսրայէլի փրկութիւնը է մեր Տէր Աստուածը. նորան կը մատուցանեմ այժմ մի պատարագ հաշտութեան իմ փոքՀված ժողովրդի Համար, յառաջ քան թէ կ'երթայի հանգչելու Աբրահամի դոդում։»

Երբ որ Բենիամինան, ալևոր Փիլիպպոս Մովսէսի ձեռքը բռնած երևեցան Ծերունի դօքտոր Գէյտի և նորա որդու առաջև, որ բարեաւ մնա ասեն նոցա, և միւսանգամ Տիրոջ օրհնութիւնը կարդան նոցա մարդասիրութեան և անշահախնդիր օգնութեան փոխարէն, այնուհետև երիտասարդը և աղջիկը ցաւալից աչքով նայեցին միմեանց վերայ, արտասուքը թափելով իւրեանց աչքից։

«Այ, Բենիամինա, այժմ տեսանում եմ ես, որ դու սիրում ես ինձ, ինչպէս ես վաղուց արդէն սիրած եմ քեզ.» — ձայն արձակեց պատանի Գէյտը և վեր կալաւ նորա ձեռքը, և յառաջ քան թէ Բենիամինան կարող էր ուշը հաւաքել իւր վերայ, երկուքը ևս ընկան երկու ալևորների ոտքը, և խնդրում էին նոցա օրհնութիւնը։—

Երկու ալևորքը ևս յետ քարշվեցան զարմացած։

—«Եթէ կարողացած լինէի ես այդ բանը յառաջուց գուշակել,» — ասաց Ծերունի Գէյտը, ապա աւելի բարձր եղած կը լինէր, եթէ մնացած լինէիր դու Հռոմում։ Ինչպէս կարող էր հնարաւոր լինել ձեր ամուսնական զուգաւորութիւնը.... ձեր երկու տարբեր դաւանութիւնքը....

—«Բենիամինան քրիստոնեայ է իւր սրտումը.» — ասաց իսկոյն երիտասարդը բարձրանալով ինքն և ոտքի վերայ կանգնեցնելով դող դողուն աղջիկը։ — «Այս արժանապատիւ Ծերունու մահճի մօտ կարդացել է նա մեր սուրբ գրուածքը և նոցա աստուածաշունչ հոգին միջամուխ է եղել նորա սրտի մէջ։»

—«Հ՛շմարիտ է այդ, Բենիամինա,»—հարցրեց ալևոր Փիլիպպոս Մովսէսը և գունաթափվեցաւ։

—«Այո՛, իմ՛ պապ, ճշմար՛տ է։»—պատասխանեց երկիւղած աղջիկը և գրկախառնեց ալևորի ծունկերը։—«Քրիստոսի խօսքերն էին, որ կարդումէի քո առաջև, երբ որ դու քո հոգու տառապանքի մէջ անիծումէիր քո ծննդեան օրը։ Քրիստոսի խօսքերն էին, որ խաղաղութիւն բերեցին քեզ, երբ որ դու մարգարէի բերանով դատապարտումէիր քո ժողովուրդը, և լսվումէր դորա լայ ու կոծը դժոխքի մէջ։»

—«Դու քրիստոնեայ ես քո սրտի մէջ, Բենիամինա, և սիրումես այս քրիստոնեան,»—հարցրեց ալևորը ծանր և դողդողուն ձայնով։

—«Այո՛, իմ՛ պապ, այո՛։ այդպէս է։»—վկայեց դողդողալով երկիւղած աղջիկը, և իւր արտասուքովը լուաց ալևորի ծունկերը։

—«Եւ դո՛ւ, Բենիամինա, և դո՛ւ, իմ՛ Ռաքելիս դուստրը։ դու, իմ՛ ծերութեան օրերի վերջին մխիթարութիւնը, և դո՛ւ....» Այս խօսքերի մէջ արտասուքը խեղդեց ալևորի ձայնը։ Նա ծածկեց գլուխը իւր վերարկուով և դողդոջեց դէպ ի դուռը, առանց մի բառ դուրս հանելու բերանից։

—«Ուրեմն, բարեաւ մնա յաւիտեան։»—Ասաց Բենիամինան իւր սիրական, անբաղդ Ֆէյտին, իսկոյն բաժանվելով նորանից։—«Ուր օրէնքը սէր է, և արդարութիւնը շնորհ, ուր Եհովան և Քրիստոսը միեն, այն տեղ մի ենք և մեք յաւիտեան։»—«Ա՛ռ առ և ինձ քո հետ, ո՛վ հայր։»—ասաց նա յետոյ և վազեց ալևորի քամակից։—«Առ և ինձ քո հետ, և թո՛ղ ինձ մեռանել քո գրկի մէջ։ բայց մի՛ անիծիր ինձ քո մահուան րոպէումը։ ինչ որ իմ՛ սրտումս գոյացած է, Ամենաբարձրելու կամքն է։»

—«Կորա՛ծ ... կորա՛ծ այս աշխարհիս համար։»—հառաչեց երիտասարդ Ֆէյտը և խոնարհեցաւ իւր հօր կուրծքի վերայ, երբ որ դուռը երկու սիրականների մէջ փակվեցաւ .... և նոցա յոյսը այս աշխարհումն երևումէր ամենևին ու բոլորովին շիջած։

* * *

—«Ի՞նչ գիտաւորութիւն ունիս դու, իմ՛ որդի։ դու շրջումես որպէս մի երազամոլ մարդ։ և ի՞նչ խորհուրդ ունի ժողովելը և կապելը քո անօթները։»—հարցրեց ծերունի դռքտորը իւր պատանի որդուց, մի քանի օր յետոյ քան թէ վերևումը պատմած անցքը եղած էր։—«Մի՛ թէ քո սէրը այնպէս սաստիկ է, որ դու չես կարող աւելի յաղթել նորան, և եթէ աղջիկը այնքան սիրումէ քեզ, ինչքան որ երևու-

մէջ, այնուհետև չունիմ ամենևին ընդդիմանալ ձեր ղուգաւորութեանը։ Նմանապէս տարակոյս չկայ, որ ալևոր Փիլիպպոս Մովսէսը այնքան ազնիւ մարդ է, որ երբէք կարող չէր ձեր վատաբաղդութիւնը կամենալ։»

— «Ես պատվում եմ Նորան զրեթէ որպէս մի սուրբ մարդարէ,» — պատասխանեց որդին — «թէև նա իւր ձեռքով դնէր ինձ գերեզմանի մէջ։» Ես Նորա հետ խօսած եմ, հայր իմ, Նորա խստութիւնը յաղթահարած կը լինէի ես. բայց Նորա մեղմութիւնը ձեռքերս կապում է և Նորա սէրը ջարդում ու փշրում է իմ վերջին յոյսը։ Ես գիտեմ, որ նա երախտագիտութեամբ մեր ձեռքերը կը ղուգաւորէր, բայց Նորա հին սիրտը պիտոյ է պատռվէր այդ բանի վերայ, և ես պիտոյ է պարտական կացուցանէի իմ անձը Նորա և Բենիամինայի մահուն։ Դա, այդ ալևորը անյողդողդելի է իւր հաւատի մէջ, և պիտոյ է իւր սրտումը դատապարտէ Բենիամինային, եթէ սա ուրանար իւր հաւատը կամ թէ ընդունէր իմ սէրը, թէև իւր հօր յատուկ ձեռքից։»

— «Բայց նա արդէն ուրացել է հոգով իւր հայրենական հաւատը, նա սիրում է քեզ արդէն և խոստովանեց ինքը ալևորի առաջև . . . . և սա չանիծեց Նորան այդ բանի համար։»

— «Ալևորը պարտական է այդպէս ընթանալ, երբ որ Բենիամինան հրապարակական գործողութեամբ կը ղարացուցանէ իւր հաւատափոխութիւնը։ Ալևորը սիրում է Նորան որպէս իւր յատուկ հոգին. բայց նա դատապարտելու է իւր հոգին ևս, եթէ դա խոտորվէր Եհովայից, ինչպէս կարծում է նա։»

— «Ուրեմն, տար համբերութեամբ, իմ որդի։ Այն ալևորի օրերը չեն այլ ևս բաղ՝ թիւ. նա ոտք կոխեց մեր դրան շեմքի վերայ, կրելով մահը իւր սրտի մէջ։»

— «Ո՜հ, հայր իմ. դու չգիտես Բենիամինայի սիրտը, դա գուցէ թէ պատռվելու էր տեսանելով իւր պապի մահը. բայց նա այնքան ևս հաւատարիմ մնալու է մեռածին, ինչքան հաւատարիմ է այժմ կենդանուն։ Բայց իմ ցաւի յայտնութիւնը թող չը վրդովէ աւելի այն խաղաղութիւնը, որ Բենիամինայի մեղմ հոգին գուցէ թէ գտանելու է, հրաժարվելով իւր բաղդից։ Թող ինձ ճանապարհ դուրս գալ, իմ հայրայսուհետև անհնար է ինձ բաղդաւորվել այս աշխարհումն. իմ խաղաղութիւնը կամիմ ես որոնել ճարտարութեան սուրբ աշխարհումը և առնային աշխարհական փառաւորութեան և ամենայն անցաւոր ուրախութեան գերեզմանի մօտ։»

Խօսեցին միմեանց հետ հայր ու որդի, մինչև ալևոր Փիլիպպոս Մովսէսը մատուցանումէր հաշտութեան մեծ պատարագը իւր աներաղդ

աղգի համար։ Երեք օր անցած, զառամած ծերունին փակեց իւր աչքերը հաւատարիմ Բենիամինայի գրկախառնութեան մէջ։

— «Այսօր թաղումն Հրէայքը իւրեանց վերջին մարգարէն,» — ասաց Օրիորդեան փողոցումը մի կատակասէր մարդ իւր ընկերին. — «ահաւասիկ, ամենայն փողոցներից հաւաքվումն նոքա. և ամեն մարդ, որ հանդիպումէ դիակեր սայլին, պիտոյ է ուղեկից լինի նորա քամակից։»

— «Դա, աշխոր Փիլիպպոս Մովսէսն է,» — պատասխանեց միւսը. — «դա, ինչպէս պատմումեն, եղած է մի հատ ուղղափառ Հրէան այս քաղաքումն, և գուցէ թէ վերջին Մովսիսականը բոլոր աշխարհի մէջ։ Պատմումեն թէ նա հոգին աւանդել է այն բոլորամասն և հաստատուն հաւատով, որպէս թէ իւր ժողովուրդը էր առաւել պատուականը երկրի վերայ, թէև պլանդակված ու տառապանքների մէջ մնալվելով, այնու ամենայնիւ իւր տիրոջ մի հատիկ ընտրեալ ժողովուրդը։ Այս, իւր կեանքի վերջին բոպէներումը ևս, ասումեն, թէ նա հրամայել է բացել պատուհանները և սպասել է, որ Մեսսիան ներս մտանէ և նորան և իւր բոլոր ժողովուրդը վերստին տանի դէպ ի աւետեաց երկիրը։

— «Ի՜նչ յիմարամտութիւն.» — պատասխանեց առաջինը և ծիծաղեց։ — «Արդարև պիտոյ է խոստովանել, որ այդ ոչինչ բան չէր, եթէ ոչ մինչև վերջը հաստատ մնալ իւր կարծիքի վերայ։»

Որանից յետոյ այն երկու մարդը երգելով ներս մտան Աստերի եղերաշէն ամարանոցը։ Նոյն օրի երեկոյին, մի երիտասարդ, ճանապարհի հանդերձով կանգնած էր Իսրայէլացոց դերեզմանատան դարպասի մօտ, և գունաթափ ու տրտում նայումէր անշարժ մի կանայի կերպարանքի վերայ, որ պարսպի ներսումը մի նորակառոյց դերեզմանարանների մօտ ծունկ էր չոքած։ Այս ճանապարհորդը էր մանուկ Գեյտը, որ արդէն հոգացել էր փոստայի ձիանք, նոյն երեկոյին դուրս գալու իւր հայրենի քաղաքից և իւր անձը իւր անպայտ սիրու հետ միասին կենդանի թաղելու Հռոմի աւերակների մէջ։ Այն տեղ կամենումէր նա իւր բաղդի դերեզմանը զարդարել իւր գլխի անչքի յիշատակովը։ Այսինքն երկու պատկեր և երկու, նորա համար անմոռանալի պատկերք հանդիպած էին նորան այս կեանքումն որպէս հրաշալի լուսերք նորա ճակատագրի. դոքա էին նորա ամենասիրելի և ամենաթանդագին գոհարեղէնքը, և դորանց զգուշութեամբ ամփոփել էր նա իւր ճանապարհի արկղների մէջ։ Դոքա էին գեղեցիկ Բենիամինայի և աշխոր Փիլիպպոս Մովսէսի պատկերքը։ Բենիամինայի ամենաշոշ սէրը դէպ ի աշխորը, և արժանապատիւ նահապետի անսողդողդելի հաստատութիւնը իւր հայրենական հաւատի վերայ, որ անիծումէ ամենայն ուրացութիւն և արիւնակցութիւն մի այլահաւատի հետ, կտրել էին նորա բոլոր յոյսը,

Բայց Նորա սիրական Բենիամինան այս աշխարհումս միւսանգամ տեսանել. այս բանին չկարողացաւ դէմ տալ իւր աղէտալից սիրտը, երբ որ ահա պիտոյ է հրաժարվէր քաղաքից. նմանապէս մի առանձին մխիթարութիւն էր Նորան, Բենիամինայի սիրու աներկբայ վկայութիւնը առնուլ իւր հետ դէպ ի օտար աշխարհ։

Յոսեփի սրտով մնացած էր նա Բենիամինայի օթևանին, նոյն րոպէին երբ որ դիակիր սայլը ալևոր Փիլիպպոս Մովսէսի հողեղէն նշխարներովը դուրս էր եկել տանից։ Նա խառնվեցաւ յուղարկաւորների (ննջեցելու քամակից գնացողների) մէջ, ասես թէ մի անընդդիմանալի զօրութիւն դրդելով Նորան. թէպէտ անցաւորքը զարմանումին այն բանի վերայ, որ միայն մի շեկամազ Քրիստոնեայ, ճանապարհի հանդերձով, Հրէաների մէջ, ուղեկից էր ննջեցելու քամակից։ Երբ որ ամենեքեան հեռացել էին գերեզմանատանից, նա չը կարողացաւ հրաժարվել, որպէս թէ անպատճառ պիտոյ էր Նորան մնալ այն տեղ և տեսանել իւր տխուր ճակատագրի վերջը։ Նա աներկմիտ էր, թէ Բենիամինան, գիշերամտից յառաջ դալու է այցելութիւն առնելու գերեզմանին։ Նորա յոյսը կատարվեցաւ, և հաւատարիմ Բենիամինան երկչեան պահուն եկած էր բերելով իւր հետ ծաղիկներ, սփռելու իւր ալևոր պապի գերեզմանի վերայ։ Երբ որ սա հասաւ գերեզմանատանը, երիտասարդը յետ քարշվեցաւ որ չը խափանէ Նորա երկիւղած նուիրագործութիւնը. այժմ ստուգվեցաւ, թէ ինչ պատճառով այնքան երկար մնացել էր նա գերեզմանի մօտակայքումը։ Այս էր այն տեղը, ուր կամենումէր նա այս կեանքումը բարեաւ մնա ասել Բենիամինային. և արդարև ալևորի գերեզմանաքարը այն սահմանաքարն էր, որ բաժանումէր նոցա ճանապարհը երկրի վերայ։ Դեռ ևս հանդարտ կանգնած էր նա գերեզմանատան դարպասի մօտ, և չէր կամենում խափանել այն աղջկայ երկիւղած աղօթքը։ Երբ որ նա վեր կացաւ գերեզմանի մօտից, որ տուն գնայ, երիտասարդը հանդէպ գնաց Նորան հանդարտ և հանգիստաւոր կերպով։ Այն կրօնասիրական ուղղութիւնը, որ ընտրել էր Նորա կրթութիւնը, ևս աւելի յաղթող էր դարձել Նորա ներքին պատերազմի և անձնուրացութեան մէջ։ Նորա ձեռքումը փայլումէր մի խաչ շողշողուն սատափից, որ Նորա մայրը ընծայել էր Նորան երեխայական հասակումը, այն կնամարդի համար, որին իւր ապագայումը ընծայելու էր իւր սիրտը։ Այս խաչը, երբ որ նա իւր գոյքը ժողովումէր և ամփոփումէր, ընկել էր Նորա ձեռքը. նա պահել էր սորան իւր մօտ, որ ընծայէ իւր կորած սիրականին որպէս հրաժարական ողջոյն և յիշատակ։ Այս խաչը փայլումէր այժմ փառաւորապէս, լուսնի պայծառ, քաղցր լուսի մէջ։

— «Ռենիամի՛նա։» — ձայն արձակեց նա, և աղջիկը բարձրացրեց իւր գեղեցիկ սև աչքերը և ճանաչեց Նորան։ Բայց երբ որ նա նկատեց փայլուն խաչը երիտասարդի ձեռքումը, այնուհետև ծունր խոնարհեցրեց նա, ձեռքերը կցելով կուրծքի վերայ — «երկնային տեսչութիւն, ահա կատարվեցաւ, — Նորա հոգին ցուցանումէ ինձ դերեզմանի մօտ խաղաղութեան և փրկութեան պատկերը։»

— «Ի՛նչ ես ասում» — թոթովեց երիտասարդը խորասոյզ եղած դուշակութեան մէջ։ — «Այս դերեզմանի մօտ . . . .»

— «Այս դերեզմանի մօտ պիտոյ էր ինձ տեսանել իմ Փրկիչը.» Այս էր ալևորի վերջին խօսքը, երբ որ Նորա երեսը պայծառակերպվեցաւ մահու հրեշտակի ներկայութեամբ։ Ահա Նորա հոգին առաջնորդել է քեզ դէպ ի այս տեղ այն սուրբ նշանովը քո ձեռքին, որ այժմ յաւիտեան միաւորումէ ինձ քո փրկչի հետ։»

— «Օրհնեալ լինի կեանքի Տէրը» — ձայն բարձրացրեց երանացած երիտասարդը — «և օրհնեալ լինի այն հոգին, որ քեզ միաւորեց Նորա հետ մեռածի միջնորդութեամբը։ Այժմ միաւորված ես դու և իմ հետ, և ես այժմ նշանվումեմ քո հետ Սուրբ Աստուծոյ առաջև, խօսելով քեզ ինձ հարսն այս դերեզմանարլուրի մօտ, որ կարծումէի ես, թէ պիտոյ է լինի այն սահմանաքարը, որ յաւիտեան բաժանելու էր մեզ միմեանց այս աշխարհումս։»

Ռենիամինան պարզեց ձեռքը դէպ ի նա դերեզմանի վերայով և լուռ արտասուքով խոնարհեցաւ Նորա կուրծքի վերայ։ Այսպէս մահը միաւորեց այնուհետև ինչ որ բաժանել էր կեանքը։

Ռենիամինայից տեղեկացաւ յետոյ Ֆէյտը, թէ ի՛նչպէս ալևոր բարբունին իւր կեանքի վերջին բոպէներումը բարձրանալով տեղից, հոգին պայծառացած, քարոզել է Դաւթի և մարգարէների մեծ կանխասացութիւնքը Մեսսիայի մասին։ Ալևորը խնդրած էր Ռենիամինայից բանալ պատուհանը, որ նա կարողանայ միւսանդամ ևս տեսանել կապտագոյն երկինքը — և այնուհետև այնպէս էր եղած, որպէս թէ առաւօտու արշալուսի մէջ, երևած էր Նորան մի սուրբ տեսիլք։ — «Եթէ իմ բեկեալ (կոտրած) աչքերը չեն խաբում ինձ» — ասած էր նա — «ապա արի՛ դերեզմանիս մօտ, դու Ռենիամինա, և այն տեղ իմ հոգին կը ցուցանէ քեզ քո փրկութիւնը։» Յետոյ դարձած էր Նորա ձայնը աղօտ ու անհասկանալի. բայց Նորա երեսը քաղցրացաւ մի հրաշալի երանական ժպիտով։ Իւր կիսամեռ ձեռքով, մահճի մէջ, արած էր նա մի խաչաձև նշան, և ապա խաղաղութեամբ աւանդած էր հոգին Ռենիամինայի գրկի մէջ։

— «Այդ բոլորը կատարվել է, հրաշալի կերպով է կատարվել։» — ասաց Ֆեյտը և ապա Բենիամինայի հետ միասին ծունկ չոքեց ալևոր բարեուշնու գերեզմանի մոտ։ —

* * *

Վալոց տարու Նոյն օրին կանգնած էին երկու քրիստոնեայ ամուսնակիցք ծաղիկներով սիրած գերեզմանարեուրի մոտ, որի տակ հանգստացած էր ալևոր Փիլիպպոս Մովսէսը, երեսը դէպ ի արևելք դարձուցած։ Բենիամինան և այժմ գերեզմանի վերայից ձեռքը տուեց իւր սիրականին, սեղմելով կուրծքի վերայ իւր փոքրիկ խաչը։ — «Այժմ տեսած է նա արդէն արևելքի մեծ լոյսը։» — ասաց Բենիամինան խընդութեամբ։ — «այդ լոյսը վերջին արևաբացի հետ ծագեցաւ այս տեղ արդէն նորա շիջանող աչքի մէջ։ այսու ամենայնիւ զուր չէր նա խընդրելու դորան իւր գերեզմանի մէջ։ Այդ լոյսը փայլումէ Աստուծոյ սուրբ քաղաքի վերայ — և դորա հրաշափառ պայծառութեան մէջ պիտոյ է օրհնութիւն գտանեն բոլոր ազգերը երկրի վերայ։

Ս. Ն-ՂԲԵՈՆՑ։

ՄԽԻԹԱՐ ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐ·

(Շարունակութիւն·)

ՅՕԳՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐ·

Ա·

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՍԿԶԲՈՒՆՔԸ·

Նախընթաց յօդուածի մէջ խօսեցինք Մխիթարի վերայ, պատմեցինք նորա վարքը և իւր անուանով ասած ընկերութեան հիմք դնելը· այս երկրորդ յօդուածի մէջ մեր խօսքի առարկան լինելու է ահա նոյն այդ ընկերութիւնը· յանձն ենք առել քննել և նկարագրել այս ընկերութեան սկզբունքը, բարոյականութիւնը, մատենագրական գործունէութիւնը, այս գործունէութեան շարժառիթքը, ընկերութեան առաջին և այժմեան յարաբերութիւնքը դէպ ի մեր ազգը, նորա ներկայ դրութիւնը, որից անշուշտ երևումէր, թէ որքան ապահով էր նորա ապագան, ընկերութեան կառավարութեան կերպը, այդ տեսակ կառավարութեան հետևանքը — չորս պատուելի վարդապետների վերադարձը դէպ ի իւրեանց ծնող եկեղեցին, և այս պարտականութիւնը կատարելու ժամանակ, վերջին ջանքը գործ ենք դրել ճիշդ պահել արդարութեան կշիռը, անարատ խղճի մաքրութիւնը, ականջներս բաց պահելով դէպ ի Քրիստոսի այն խօսքերը, «վայ, որ ասիցէ ցնաւարն լոյս, և լոյսն խաւար» և դէպ ի առաքեալի ասածը թէ, «խօսեցարուք ըստ ճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում՝ զի եմք միմեանց անդամք·»

Այս հիմքերի վերայ գործակատար գտանվելով, մեր կարծիքը այսպէս է, թէ որ և իցէ մարդու, ազգի, ընկերութեան արժանաւորութիւնքը, բարք ու վարքը, ուսումը և դիտութիւնը քննելու և հաստատապէս նկարագրելու համար, առաջին անհրաժեշտ պայմանն է քննել և ուսանել այն սկզբունքը, կամ այն տարերքը, որ նիւթ էին եղած այդ մարդու կամ ազգի և կամ ընկերութեան բարոյապէս գոյութեանը։ Բաց ի այս զգուշաւոր քննութենից, դեռ ևս ամենայն շրջանկատութեամբ պիտոյ է հաշուի և համարի տակ դնել այն հանգամանքները, որ ծնուցել էին այդ սկզբունքը և որոնց մէջ միայն, որպէս իւրեանց ատմոսֆերայի մէջ, կարող էին կերպարանագործվիլ այդ սկզբունքը կամ տարերքը և աճելով օրէ օր ստանալ մի յատուկ բնաւորութիւն։ Թէ ի՞նչպէս գոյացաւ Մխիթարեան ասացեալ ընկերութիւնը, այդ մասին խօսել ենք Նախընթաց յօդուածի մէջ (*) ուր և ընկերութեան հիմնադրի վարքագրութեան մէջ ցոյց ենք տուել այն հանգամանքները, այն օդեղէն շրջապատը, որի մէջ, այն հողը, որի վերայ պիտոյ է աճէր և ծաղկէր նորատունկ ընկերութիւնը։ Ուրեմն այս տեղ մնում մեզ քննել նախ և յառաջ «Մխիթարեանց սկզբունքը։»

Մխիթարեանց սկզբունքի հետ անմեղանչաբար ծանօթանալու համար, պիտոյ է յառաջուց վճռել այս խնդիրը, թէ ի՞նչ ասել է կրօնը և թէ ի՞նչ է պատականութիւնը։ պատճառ, մի մարդու, կամ ազգի և կամ ընկերութեան սկզբունքի մայրը ճանաչվում գլխաւորապէս կրօնը և երկրորդաբար քաղաքականութիւնը։ այն պատճառով երկրորդական է քաղաքականութիւնը, որ թէև շատ ծանրակշիռ բան է, բայց և նա ինքը գլխաւորապէս աճում կրօնի հիմքերի վերայ։

Ի՞նչ է կրօնը և ի՞նչ յարաբերութիւն ունի դէպ ի մի մարդ, դէպ ի մի ազգ, դէպ ի մի ընկերութիւն, որ խոստովանում այդ կրօնը։

Թէ որքան մեծախորհուրդ բան է կրօնը ընդհանրապէս, և առանց մանրամասն քննութեան, երևում նորանից, որ մարդը չէ կարող ապրել աշխարհի երեսին առանց կրօնի։ Որքան ժամանակ մարդը կայ աշխարհի վերայ, նոյնքան ժամանակ է, որ և կրօնը կայ, այս տեղ մեր խօսքը միայն լինելութեան վերայ է և ոչ այսպէս կամ այլպէս լինելութեան վերայ։ Եւ ի՞նչպէս կարելի էր առանց կրօնի ապրել։ առաջին մարդիկը, որ գուցէ և չը գիտէին իւրեանց բարոյական արժանաւորութիւնը, չը գիտէին թէ իւրեանց մարմնի մէջ կայ մի անմահ էակ։ այս մարդիկը, ասում ենք, եթէ վշտանում էին նիւթականապէս, որոնում էին

(*) Տես Հիւսիսափայլի Հինգերորդ ամատեսարակում երես 399—416.

նիւթական հնարներ այդ վիշտը և ցաւը փարատելու համար, բայց եթէ այդ վշտերն ու ցաւերը երևէին նոցա մէջ հոգևորապէս, տարակոյս չը կայ, որ նիւթական հնարները անպէտ էին, ուրեմն ի՛նչ կերպով և ո՞ւր պիտոյ է որոնէին իւրեանց վշտի և ցաւի դարմանը, եթէ ոչ մի գաղափարական և անանիւթ աշխարհի մէջ. կրօնն էր այդ գաղափարական և անանիւթ աշխարհը, այնքան անհրաժեշտ հոգու համար, որքան երկրի նիւթական տարերքը մարմնի համար։

Մարդը մարմին չէ միայն, այլև ունի իւր մէջ մի անանիւթ էակ Հոգի, և ինչպէս մարմինը կարող է այնքան աւելի ապահով կացուցանել իւր ամբողջութիւնը, իւր բարօրութիւնը, մի բնական կարգով սահմանված ժամանակամիջոցում, մօտ և հպատակ մնալով բնութեան օրէնքներին, նոյնպէս հոգին պիտոյ է գտանէ իւր համար մի անանիւթական աղբիւր, մի գերբնական և յաւիտենական կեանքի կենտրոն, սա է Արարիչը, ստեղծողը հոգու և մարմնի, նախախնամողը և բոլորի Հայրը, որին մօտ և հպատակ մնալով մարդը, պիտոյ է յաւիտեանս յաւիտենից ապահովէր իւր անանցանելի երանութիւնը։ Այս կեանքի կենտրոնը որոնելը, և նորա գոյութեան և լինելութեան վերայ յոյս և հաւատ ունենալու սերմերը տնկած էին մարդու հոգու մէջ, երբ սա առաջին անգամ երևել էր աշխարհի երեսին։ Այնուհետև բնական աղդեցութեամբ հետևելով այս ձգտողութեանը, մարդկային զանազան ընկերութիւններ զանազան ձևերով և տեսակ տեսակ զգեստներով, իւրեանց լուսաւորութեան և հասկացողութեան համեմատ, ստեղծագործեցին գաղափարներ այդ կենդանութեան աղբիւրի մասին — Աստուծոյ մասին։ Թէ ի՛նչ կերպով Աստուծոյ մասին հասկացողութիւնը, ուրեմն և կրօնը, ժամանակ առ ժամանակ կերպարանափոխ է լինում, թէ ի՛նչպէս մարդկային բանականութեան հետ ձեռք ձեռքից բռնած յառաջ է խաղում, թէ ի՛նչ վերանորոգութիւնների է ենթարկվում, այդ բոլորը չէն մտանում լուծանելու համար մեր առաջև դրած խնդրի մէջ. դոքա աւանդվումեն կրօնների պատմութեան մէջ, որ այս բոպէիս ժամանակ չունինք հանդէս բերել։

Մենք այսչափ խօսելով կամէինք ցոյց տալ, թէ որքան անհրաժեշտ է կրօնը մարդու համար, այո՛ նոյնքան ևս բացայայտ է, որ ոչինչ մարդ չէ կարող ապրել առանց կրօնի. թող լինի նա անաստուած, ամենաստուածեան, նիւթապաշտ, ինչ կամի, թող լինի, թոյլ, կամ հաստատ իւր ուրացութեան մէջ, այնու ամենայնիւ լինումեն այդպիսի մարդու համար բոպէներ, երբ բնական աղդեցութիւնը յաղթահարելով և ընկճելով մի վայրկեան նորա կամակոր և մոլորական հասկացողութիւնը, և ազատվելով նիւթական կապանքներից, իւր ազատ ձգտողու-

թեանը հետևելով, թողնում է վերանում դէպ ի բոլորի գոյութեան պատճառը և այս կերպով դղրդեցնում է այդ մարդու կամակոր ուրացութեան սիւները, թէև մի փոքր ժամանակից յետոյ մէ այդպիսի մարդու նիւթական շրջապատի տպաւորութիւնքը աղդելով նորա դգացողութեան վերայ, յետ են դանչում այդ ազատութիւնը և փակումեն նիւթական կապանքի տակ։ Կրօնի անհրաժեշտ լինելը հերիք ապացոյց է, որ նա մեծ ազդեցութիւն ունի մի մարդու, կամ ազգի և կամ ընկերութեան վերայ։ այո, նա մի այնպիսի անօթ է, որի մէջ կերպարանագործվումեն հոգին և հոգու բոլոր ունակութիւնքը։ Մարդը ենթարկելով իւր անձը կրօնի ազդեցութեանը, ընդունում է նորա կանոնքը և պայմանքը, որոնց խորհուրդը է առնել տալ միևը, կամ թողուլ միւսը, և այս կանոնների և պայմանների պահելու մէջ մարդու հոգին դտանում է իւր մխիթարութիւնը և երջանկութիւնը։ Ամենայն մարդ, որ այնքան վատաբաղդ չէր գտանված, որ շինչաներ նորա սրտի մէջ կրօնի ճրագը, իւր գործողութիւնքը կատարելու ժամանակ, դիմում դէպ ի կրօնը և հարցանում է նորանից խորհուրդ, արդեօք այս կամ այն, որ իւր սիրտը յղացել էր, թոյլ է տալիս կրօնի պատուէրը, իրագործել, թէև ինքը այդ մարդը ստորասաբար կամ բացասաբար որոշել էր արդէն։

Այսպէս անքակտելի կապած է մարդը իւր կրօնի հետ. մարդու հոգեկան ոյժը և զօրութիւնը խիստ հասկացվում է, նայելով նորա կրօնի որպիսութեանը. ասա՛ ինձ, ո՞ր կրօնի խոստովանող ես դու, ես կ'ասեմ քեզ, թէ ո՞ր աստիճանի կամ ի՞նչ դրութեան մէջ էր քո բանականութիւնը։

Փիլիսոփայաբար նայելով, կրօնը աշխարհի երեսին բաժանվում է երկու մեծ ճիւղ, ստրկական կամ ծառայական, և ազատական կամ քրիստոնէական։ Այս տեսակ բաժանման հիմքը ամիոփվում է դոյն իսկ կրօնների բնաւորութեանների մէջ. բեր քննենք այս տեղ համառոտաբար նոյն այդ յատկացուցիչ բնաւորութիւնքը, ուշադրութիւն դարձուցանելով այն ազգերի վերայ, որ կցորդ էին այդ կրօններին։

Հեթանոսք, Հրէայք, Մոհամմեդականք, որոնց ականջին հասած չէր դեռ ևս Քրիստոսի կենարար և փրկաւէտ քարոզութեան ձայնը Աւետարանի միջնորդութեամբ, որոնց համար գիշեր էր և դեռ ևս չէր լուսացել բանական լուսաւորութեան գեղեցիկ առաւօտը, որ տակաւին չը գիտէին ազատութեան ճաշակը, որ մի բան չէին կարող այլապէս տեսանել և քննել եթէ ոչ հայելի օրինակով, որ թէև հազարաւոր տարիներով ընկճած էին մաշված ձևերի և անխորհուրդ ծէսերի լծի տակ, այնու ամենայնիւ չունին այնքան զօրութիւն հոգու, որ թօթափէին միանգամ այդ կապանքը իւրեանց վերայից, այդ ազգերը, ասու-

մենք, գտանվումեն ստրկական կրօնի ազդեցութեան տակ։ Դարձեալ, սիրելի ընթերցող, քո քննող ու ղեկավարող աչքերը այդ ազդերի վերայ, և պատասխանի՛ր մեզ, թէ այդ ազդերի բանականութիւնը, սորա լուսաւորութեան աստիճանը կարող էր հաւասարվիլ այն մարդու բանականութեան հետ, որ երջանիկ էր մասնակից լինելով ազատական կրօնին։ Արդեօք հանդիպումէ նոցա մէջ այն բարոյական մեծութիւնը, որին կարող է հասանել քրիստոնեայ մարդը ընդունելով իւր հոգու և սրտի մէջ Աւետարանի բանքը, դաստիարակվելով այդ ազատական կրօնի առաջնորդութեամբ։ Մեր խօսքը այս տեղ ընդհանուրի վերայ է և ոչ մի քանի մասնաւորի. որովհետև մարդկեղէն աշխարհի մէջ, չկայ օրէնք և կանոն առանց բացառութեան։ Գիտենք, սարսափանք էր գալու քո վերայ, տեսանելով այդպիսի ազգերի յետին հոգեկան չքաւորութիւնը յառաջացած իւրեանց ստրկական կրօնի ազդելուց։ Արդեօք, թափելու չէի՞ր արտասուքի հեղեղներ, եթէ քո մէջ կար մի աղնիւ հոգի և մի փափուկ մարդկային սիրտ, տեսանելով որ մի և նոյն մարդկութեան որդիքը այդպէս յետ մնալով անգործ էին կացուցել իւրեանց բանականութիւնը, աստուածեղէն մտքը և, անգէտ, ակամայ, հարկադրվելով իւրեանց ստրկական կրօնից, հաւասարվել էին անբան անասունների, շատանալով միայն նիւթական հնարներով, որով պահպանվումէր նոցա մարմնի շինուածքը։ Ի՞նչ կերպով կատարվումէ այս. սորան պատասխանելու համար պիտոյ է քննել այդ կրօնի բուն սկզբունքը և ուղղութիւնը։ Ստրկական կրօնի մէջ, բանականական հոգին երեւումէ իւր ահարկու մեծվայելչութեամբ. նորա համար չը կայ ոչինչ քննութիւն, ոչինչ դատաստան, նա հրամայումէ միայն, և չէ ընդունում ոչինչ պատճառաբանութիւն։ Նորա գլխաւոր էական մասունքը բաղկանումեն ամուլ և անպտուղ ծիսակատարութենից. նիւթապաշտութիւնը երկրորդական տեղ չունի այդ կրօնի մէջ. կրօնի զօրութիւնը և ոյժը կենտրոնանումէ նորա պաշտօնեաների մէջ, որ վարվումեն ազգերի հետ ամենեին նիւթականաբար, ամենեին այնպէս, որպէս վարվումէ մի հովիւ իւր ոչխարների հետ, ստանալով նորա կաթը և խուզելով բուրդը։ Ահա, այս անբնական և բարբարոս սկզբունքով չորացնումէ այդ կրօնը ամենայն բանականութեան ծիլ, որ դրել էր Աստուած մարդու մէջ, սորա ստեղծագործութեան ոգեկին, նա խաւարեցնումէ այն կայծը, որ բանականութեան ճիգը աշխատումէր վառել բորբոքել, և այսպիսի բանաւորական ներգործութեամբ ծառայ և ստրուկ է շինում այն մարդը կամ այն ազգը, որ մասնակից էր այդ կրօնին։ Ընչին և նիւթական բաները, որ վերաբերութեամբ դէպ ի հոգին, ոչինչ էին ամենեին, այդ անիսորհուրդ և ամուլ ծիսակատարութիւնը

առաջին բանը շինելով, փոխանակ իրաւունք տալու օրինաւոր կերպով քննելու այս բոլորը, պահանջելով մի կոյր և ստրկական անպայման հնազանդութիւն, ոչնչացնում մի մարդու կամ ազգի և կամ ընկերութեան մէջ ամենայն ազատ կամք, ամենայն գործունէութիւն և ամենայն կեանք. դոցա փոխանակ տարրացնում նոցա սրտի և հոգու մէջ ստրկութիւն, անգործութիւն և հոգեկան մեռելութիւն։ Եւ այդ մարդը կամ ազգը և կամ ընկերութիւնը բաժանորդ լինելով այս ողորմելի և թշուառ կրօնին, դառնում մի մեքենայ, մի աւտոմատ, որ առանց ամենայն գիտակցութեան, ղգացողութեան և անձնաճանաչութեան ներգործումն ղանազան ուժերի ազդեցութեամբ։ Եւ ի՞նչ այլ հետևանք կարելի էր յուսալ այն բանից, ուր ամենայն հոգեկան ազատ ձգտողութիւն, ամենայն կամք, հասկացողութիւն, ստուգագործութիւն և գիտակցութիւն փոխանակվում անշարժութեամբ, տգիտութեամբ, կոյր հաւատով և անպայման հնազանդութեամբ, մեքենականութեամբ և ծիսական, ջնջին, անգիտակցական և անխորհուրդ արարողութեամբք։

Այսպէս է ահա ստրկական կրօնի ուղղութիւնը և այս է այն մարդերի դրութիւնը, որ բաժանորդ էին այդ կրօնին։ Այս ողորմելի և թշուառ դրութեան մէջ էր բոլոր մարդկութիւնը մինչև Յիսուսի Քրիստոսի յայտնվիլը (1)։ Այս աստուածային անձը, լոյսը և ճշմարտութիւնը, յայտնվելով Հրէաստանի մէջ, (2) պատերազմեց կրօնական բրո-

---

(1) Ճշմարիտ է, որ Մովսէս մարգարէն եգիպտական դաստիարակութեամբ բարոյական լուսաւորութիւն ստանալով փրկեց Հրէական ժողովուրդը կռապաշտութենից, ազատեց նորան եգիպտական գերութենից և քարոզելով Ճշմարիտ Աստուածը, տնկեց այդ ժողովրդի մէջ Աստուածդիտութեան և քաղաքականութեան սերմեր։ Նայելով այն ժամանակի ազգերի լուսաւորութեան աստիճանին, այս մի մեծ կրօնական վերանորոգութիւն էր (ՌեֆՕռմացիա), թէ և ինքն ըստ ինքեան, և մանաւանդ համեմատելով ազատական կրօնի հետ, շատ նեղլիրտ։ Բայց և դա ունէր իւր մեծ խորհուրդը մարդկութեան համար, ստրկական կրօնից դէպ ի ազատականը. և որովհետև չը կան ընութեան մէջ ոստիւնք, այլ ամենայն բան կատարվում աստիճան առ աստիճան, փոքր առ փոքր, աննշմարելի կերպով, վանորոյ անհրաժեշտ էր այդ վերանորոգութիւնը, որ առաջին քայլն էր դէպ ի մարդկային ազատութիւնը։

(2) Քրիստոսի ժամանակներում, Հրէական կրօնի պաշտօնեայքը համը տարել էին իւրեանց լրբութեամբ. ամենայն կողմից աշխատում էին, որ խաւար մնայ ժողովուրդը, որպէս զի ինքեանք նիւթական օգուտներ ճարելով այս տգիտութենից, միշտ ապահով կացուցանեն իւրեանց բարեկեցութիւնը։ Նոքա խլել էին ժողովրդից և այն ազատութիւնը, որ Մովսէս թոյլ էր տալիս. սոցա այս տեսակ անօրէնութիւնքը արդէն զգալի էին ժողովրդի համար, և սա պատրաստ էր ենթարկվել մի նոր վերանորոգութեան։ Մեր ասածը ապացուցանում այն իրողութիւնը, որ ժողովուրդը սիրով ընդունեց Յովհաննէս մկրտչի քարոզութիւնքը և մկրտվում էր նորա ձեռքով։ Քահանայապետներին և միւս այլ վերևում յիշված մարդերին, թէպէտ

նակալ հոգու հետ. մերժելով անխորհուրդ և պառաւական աւանդութիւնքը, որ յարգի էին այն միջոցին առաւել քան Աստուծոյ պատուիրանքը, (1) քարոզեց ճշմարիտ Աստուածը հոգի և անկարօտ անպտուղ ծիսակատարութիւնների, զոհերի, որ Հրէական կրօնի գլխաւոր հաստատանքն էին։ Նա տարածեց մարդկային ազգի մէջ, սորա դէպ ի Աստուած ունեցած առնչութեան հայր որդիական գաղափարը, ուսուցանելով, այլապէս չը կոչել Աստուածը եթէ ոչ հօր անունով և սորանով մերժեց գաղափարը, որ Հրէական դպիրքը ստեղծագործել էին, թէ անմոտենալի է Աստուածը և թէ նորա յարաբերութիւնը դէպ ի մարդկութիւնը ամենևին այնպէս է, ինչպէս մի իշխանի յարաբերութիւն դէպ ի իւր ծառայքը։

Ա աղուց ահա հրէական ժողովուրդը, նայելով երբեմն երբեմն իւր մէջ երևեցած մարգարէների քարոզութեան, հաւատացած էր, թէ Աստուծոյ աղեղը միշտ լարված է, թէ նա մեղաւորների ատամները կը փշրէ, թէ նա ամբարիշտները կը սատակեցնէ։ Փարիսեցիները և դպիրները, դէպ ի չարը գործ դնելով այս գաղափարքը, ահարեկ էին առնում ժողովուրդը յաւելացնելով սոցա վերայ և այլ մարդկային սնոտի քարոզութիւնք, որոնց հետևանքը էր ժողովրդի ստրկութիւնը այլև նորա կոյր հաւատը դէպ ի կրօնի պաշտօնեայքը, որոնց ձեռքով միայն կարելի էր մոտենալ Աստուծոյ. այս քարոզութիւնների միայնակ խորհուրդը էր փարիսեցիների, դպիրների, քահանաների և քահանայապետների նիւթական շահաստացութիւնը։ Ժողովուրդը մնալով այս խաւար և ստրկական գաղափարների մէջ, անտարակոյս դիմելու էր դէպ ի այս միջնորդ անուանված տղամարդերը, թափելով նոցա ոտքումը իւր պղինձը, արծաթը և ոսկին։ Փրկիչը, ախոյեան դուրս գալով այս բոլոր անխորհուրդ նաներահաւատութեանը, հրապարակով քարոզեց Աստուածը գթած, ներող, անյիշաչար, նախախնամող և միշտ պատրաստ ընդունել իւր գիրկը մարդկութեան որ և իցէ անդամը, որպէս հայր իւր որդին, եթէ սա կը վերադառնար խոշարածութենից դէպ ի իւր հայրը։ Նա սովորեցուց հոգի ճանաչել Աստուածը, և նորան երկրպագութիւն տալ, ոչ թէ միայն Սամարիայի սարի վերայ կամ Երուսալէմի մէջ, այլև ամենայն տեղ, հոգով և ճշմարտութեամբ։ Նա հրապարակեց քահանայապետների արծաթասիրութիւնը (2), քահանա-

---

շատ անհաճոյ էր այս բանը, բայց դորան ընդդէմ դուրս գալ վախենումէին ժողովրդից, որովհետև սա որպէս մարգարէ ընդունումէր նորան։

(1) Մատթէոսի 15, 6., Մարկոսի 7, 13։

(2) Հրէից քահանայապետների ագահութիւնը և արծաթասիրութիւնը պիտոյ է հարկաւորապէս չափից անցանէր. պատճառ, քահանայապետութիւնը, որ սոսա-

ների ժողովուրդ կողոպտելը, փարիսեցիների կեղծաւորութիւնը և դրպիրների կոյր և կամակոր տգիտութիւնը. դոցա փոխանակ տարրացուց այն գաղափարը, թէ Աստուծոյ բանը, շնորհը, ներողութիւնը և այլ կրօնական պիտոյքը, պիտոյ է ձրիաբար բաժանվին։ Նա խլեց դպիրների ձեռքից սուրբ գիրքը, այն խաբեբայ կարդացողներից և մեկնիչներից, որ իւրեանց կամեցածի պէս հասկացնումէին ժողովրդին ամենայն բան, և տուեց ժողովրդի ձեռքը պատուիրելով քննել նորան։

Այս երկնային և աստուածային Վարդապետը, իւր սրտի վկայութիւնը, իւր ճշմարտութիւնը մարդերի սրտի մէջ աւելի խոր տպաւորելու համար, իւր մահով կնքեց և վաւերացուց իւր ուսումը, որպէս զի մարդիկ տեսանելով նորա հաստատութիւնը իւր վկայութեան վերայ մինչև Գոլգոթայի վերայ անարգաբար խաչվելը աւազակների մէջ, պատրաստական սրտով և աներկմիտ հաւատով ընդունեն նորա ճշմարտութիւնը և ազատվին սատանայի և ստութեան ծառայութենից։

Նորա փրկարար արիւնն էր, որ լուաց տարաւ մեր վերայից ստրկութեան և ծառայութեան կնիքը. նորա խաչն էր, որ խորտակեց մարդկութեան պարանոցի ծանր և անտանելի լուծը, որի տակ հազարաւոր տարիներով ահա չարչարվել էր։ Նորա մահի արդիւնքն էր, որ մարդիկ ճանաչեցին ճշմարիտ Աստուածը, իւրեանց անձը, իւրեանց ընկերքը, մարդկութիւնը, և ընդունեցին իւրեանց մէջ այն բարոյական սկզբունքը, որով լցուած էր, կատարեալ էր ինքը Քրիստոնէութեան հեղինակը, Յիսուս Քրիստոս։ Նորա վերջին կտակն էր սէր, ընկերսիրութիւն, որ Նորա բերանից ընկնելով մաքուր սրտերի մէջ և ոռոգվելով Նորա արիւնով, պտղաբերեց մարդկութեանը ազատութիւն, երջանկութիւն, խաղաղութիւն և յաւիտենական կեանք։ Նորա վարդապետութեան հիմքի վերայ պայծառացան ազգեր, կազմվեցան ընկերութիւններ, ծաղկեցաւ սէր, հնազանդութիւն, երախտագիտութիւն, յոյս և հաւատ։ Նորա արդիւնքն էր, որ գերդաստանների մէջ թագաւորեց խնամք, դարմանատարութիւն և խաղաղութիւն. մի խօսքով Նորա մահը

նումէին, թանդ արժէր նոցա։ Վերջին ժամանակներումը, հրեաների այն քաղաքական և կրօնական ընդհանուր աւերութեան միջոցին, քահանայապետութեան իրաւունքը վաճառվումէր քաղաքական կեղեքիչ կառավարութեան ձեռքով և այն մի տարի ժամանակով։ Այն տեղ, ուր մի մարդ արծաթով գնումէ մի պաշտօն, ասել է թէ յոյս ունի իւր պաշտօնից ստանալ ոչ թէ միայն այն արծաթը, որ հատուցել էր յառաջուց որպէս գին իւր պաշտօնին, այլև, աւելի մեծ արծաթի գումար։ Այս է ահա կաշառառութեան և սիմոնականութեան, այն աղտեղի և պիղծ ախտի, պղտոր և անմխիթար աղբիւրը։ Երանի՛ այն մարդուն, որ վաճառականութիւն չէ առնում խղճմտանքով։

գրաւական և ապահովութիւն եղաւ ամենայն կերպով մեր կեանքին և գոյութեանը։

Քրիստոնէութիւնը խորտակումէ ամենայն բռնակալական լուծ, փարատումէ ամենայն խաւար. հիմնված լինելով սիրու ապառաժի վերայ, ամենայն տեղ տարածումէ սէր և խաղաղութիւն, ջուր է տալիս և աճեցնումէ այն ազատութեան ալնիւ ծիլը, բողբոջը, որով մարդկային բանականութիւնը կերպարանվումէր. վեր քարշելով բանականութեան երեսից տխուր և մռայլոտ վարագոյրը հնար է տալիս նա բաց աչքով նայել լուսին և սորա միջնորդութեամբ քննել և գնահատել ամենայն բան, իւր անձը, իւր հոգին, իւր բանականութիւնը, իւր ընկերը, իւր գիտութեան և հասկացողութեան չափը։ Նա ընդդէմ է ամենայն մռելութեան, ամենայն անշարժութեան, որ փոխանակումէ կենդանութեամբ և մշտնջենական շարժողութեամբ։ Աղբիւր լինելով ամենայն բարոյականութեան, ամենայն արդարութեան, հաւասարապէս բաշխումէ ամենեցուն մի և նոյն չափով իրաւունք և ազատութիւն։ Նորա գլխաւոր հաստատանը ճշմարտութիւն լինելով, ապահովումէ մարդկային ընկերութիւններ, նոցա փոխադարձ միմեանց վերայ ունեցած հաւատով։

Քրիստոնէութիւնը չէ պահանջում ամուլ և անխորհուրդ մեքենականութիւն, նա կամի, որ ամենայն բան քննվի, ուսանվի և հոգու գիտակցութեամբ հիմնաւորապէս ընդունվի. նորան ընդունելի չէ անասունների արիւնը, նա չէ հոտոտում ղոհերի սեղանը, նորա առաջև ոչինչ է ամենայն փարիսականութիւն. նա կամի մաքուր սիրտ, անարատ խղճմտանք, ամրիծ հաւատ և մանկական պարզահոգութիւն։

Մի մարդ սնանելով այսպիսի կրօնի մէջ, նստած լինելով այսպիսի կենդանարար աղբիւրի մօտ, ուստի բղխումէր պարզ և վճիտ սէր, ճշմարտութիւն և ազատութիւն, ինչ զարմանք է, որ նախապատիւ և գերապատիւ լինի միւս ազգերից, որոնք մնալով դեռ ևս ստրկական կրօնի խաւարի մէջ, պիտոյ է խարխափելով քայլէին և այն կառած ու կապած անտանելի ծանր շղթաներով, մինչդեռ քրիստոնեան, ազատութեան կնիքը ճակատին, արձակ համարձակ կարող էր ընթանալ այն տիեզերական լապտերի լուսով, որի իւղը էր փրկողն արիւնը։ Ոչինչ զարմանալու բան չկայ. «Ծառը իւր պտղէն է ճանաչվում,» — քարոզումէ Քրիստոսը, — թզենին թուզ կը բերէ, իսկ փուշը, փուշ։

Այդ տեսակ առաջնութիւնը և նախամեծարութիւնը ազգերի, որպէս և դորա հակառակ, նոցա յետ մնալը և թշուառութիւնը, այդ բոլորը, ասումենք, շատ բնական կերպով, նոցա կրօնի հետևանքն է։ Կրօնի մէջ կերպարանագործվումէ մարդու հոգին և բանականութիւնա-

և այս կրօնն է նորա հոգեկան և բանական գործունէութեան աղբիւրը և շարժառիթը։

Այսչափ կրօնի վերայ. մեր խորհուրդն էր ցոյց տալ միայն կրօնի ինչութիւնը և խորհուրդը (¹). բեր այժմ խօսենք իւր կարգով և պապականութեան վերայ, որովհետև դա երկրորդ մասն է այս յօդուածի մէջ լուծանելու խնդրին։

Ի՞նչ է պապականութիւնը. մեր համար ծանր լուծանելու խնդիր, որովհետև մեր ազգը մինչև այսօր առաջնորդվելով պապական արեղաների գրած գրքերով, մի անմոռնալի վարագուրի տակ ծածկած լինելով նորա աչքից պապականութեան ստոյգ ինչութիւնը. միւս կողմից, անտեղեակ լինելով ընդհանուր մարդկութեան պատմութեանը, մեր խոհ-

---

(¹) Այս առարկայի առաւել մանրամասն քննութիւնների հանդէսը է աստուածաբանական գիտութիւնների մէջ. իսկ մեք, առ այժմ, Աստուածաբանութիւն գրելու միտք չունինք. վանորոյ թող հերիք լինի մեր խօսածը կրօնի վերայ. մանաւանդ, երկարաբանելով այդ մասին կը հեռանայինք մեր ուղղակի խորհրդից և գուցէ վշտացնէինք ևս մի քանի սխօլաստիկների անձնասիրութիւն, որոնք կարդալով Բիլուարդի, Հաբերտի և Ալբերտի Աստուածաբանութիւնը, այլև հատ ու կոտոր տեղեկութիւններ քաղելով եկեղեցական սուրբ հայրց մասին, մեր ազգային հեղինակների գործերից, իւրեանց համար Մագիստրոսանում և Վարդապետանումէին երաշխերում։ Մի հատ է այս ողբալի բանի պատճառը, — կոյր և կամակոր ագիտութիւնը, որ մեր սիրական Հայերի արմատական սխալերից մինն է։ Այս ծանր խօսքը ասումենք, ոչ թէ նայելով ազգի այժմեան սառնութեանը դէպ ի ուսումնականութիւն, ոչ թէ տեսանելով այժմեան ա՞սպտութիւնը դէպ ի լուսաւորութիւն, այլ մանաւանդ վկայ ունինք մեր խօսքերին անզուգական Մովսէս Խորենացին, այն պատկառելի և խնկելի ծերունին, որ իւր օրերումը տեսանելով Հայերի փախչելը լուսաւորութենից, կարծումէ, ոչ թէ այդ բանը եղած է միայն իւր օրերումը, այլ և հին ժամանակներում. թող խօսէ ինքը Քերթողահայրը, «Այլ ինձ թուի, որպէս այժմ և առ հինն Հայաստանեայց լեալ անսիրելութիւն խնաստութեան և երգարանաց բանաւորաց։» (Խորէն. պատմ. Հայոց, Գլ. 3։)

Ճշմարի՛տ է, Հայերը սովոր էին միշտ կարդալ միակողմանի Հայ սխօլաստիկների գովեստները Հայոց ազգին. մի չնչին անհիմն և ազգային անխորհուրդ գովեստ, բայց մի հատ է մեր խորհուրդը, — «անուանք պաշտօնեայ լինել ծշմարտութեան.» իսկ անաչառ դատաստանի առաջև մի և նոյն է մերկացուցանել թէ իւրայինների և թէ օտարի ամօթը։ Մահացու մեղք համարումենք մեզ, տեսանելով մի բարբարական խոց մեր ազգի վերայ, ծածկել նորան. դիցուք թէ վարագուրումէինք առ ժամանակ այդ վէրքը օտարի աչքից, ո՞չ ապաքէն մի փոքր ժամանակից, դոյն այդ վէրքը փտելով, և ճարակելով անդարման թողած մարմինը, յայտնելու էր իւր ներկայութիւնը խոցի սեպհական գարշահոտութեամբ և նոյն ժամանակ խայտառակելու էր մեր խարեբայութիւնը։ Ըե. հեռևինք Քրիստոսի խրատին, նա չէ հրամայում պահել մեր վերայ այն գգայարանը, որ գայթակղեցնումէր մեզ, նա դրականապէս պատուիրումէ «կորել և դուրս ձգել այդպիսի գայթակղեցուցիչ անդամը»։ Վանորոյ թող ներվի մեզ այսպէս ասել, որ Հայոց ազգի համար ուսումնականութիւն, գիտութիւն և լուսաւորութիւն ասած բանը, եղած է միշտ այնպիսի սասներորդա-

սելիքը երևելու էին մի օտար աշխարհից եկած ձայն, նոքա զարմացած ապշելու էին, եթէ մեք համարձակ ձեռքով ճեղքելով այդ թագուցիչ վարագոյրը, մերկացնէինք պապականութիւնը աղգի առաջև իւր բոլոր սարսափելի փառահեղութեամբ։ Մեզ պատերազմ է սպասում հաղարաւոր նախապաշարված խելքերի հետ, պատերազմ պապական աբեղաների կողմից. բայց վահանափակելով մեր անձը իրողութեանների ստուգութեամբ, ճշմարտութեան մուրճը մեր ձեռքին դուրս ենք գալիս հրապարակ, որպէս հաւատարիմ ղենուոր ճշմարտութեան Վարդապետին, որպէս ղենուոր, որի թիկունքը տեսանելու չէին թշնամիք։

Խօսելով կրօնի վերայ, մեք ցոյց տուեցինք ստրկական և աղատական կրօնի բնաւորութիւնքը և յարաբերութիւնքը, տեսանք, թէ ինչ դին է արժել մարդկութեան աղատութիւնը ստրկական կրօնի երկաթի

կան կամ քսաներորդական առարկայ, որի վերայ կարելի էր հաղար տարիներից յետոյ ևս մտածել, կամ ամենևին չմտածել. սկզբից մինչև այսօր Հայ մարդը սովորել է նիւթականովը միայն շատանալ, իւր փառաւոր ապրուստի վերայ հոգալ։ Մեք այն ազգն ենք, որի մէջ առաջին անգամ հայոց նշանագիրքը և նոցա ուսուցիչքը պիտոյ է Բիւզանդական դայիսանի ուժով բռնութեամբ ներս մտանէին։ Այն ազգն ենք, որ ճշմարիտ խօսողը համարուելինք մեզ թշնամի, այն ազգն ենք, որի Կաթողիկոսը և աբեղայքը Մովսէս Խորենացու պէս մարդուն, որ հայրն էր մեր մատենագրութեան և գլխաւոր թարգմանիչ Սուրբ գրքին, մինչև ի մահ ելանելուց յետոյ, ոսկերքը ևս հանգիստ չը թողեցին գերեզմանի ձէջ, այլ հանեցին ու գետը թափեցին. չեմ ասում, որ ոտաբոկիկ վանքից քշեցին Ղազար Փարպեցու պէս մարդուն, և իւրեանց յիմար ընթացքովը յուսահատութեան ձէջ սպանեցին Խորովիկը։ (Տես Ղազարայ Փարպեցւոյ թուղթ առ Վահան տէրն Մամիկոնէից. Մոսկվա, 1853, երես 63—65։)

Այո՛, սիրելի ընթերցողք, դիտեմ, դառն է ձեզ կարդալ այսպիսի բաներ մեր գրչի տակից, բայց որքան դառն է ձեզ կարդալ, հարիւր անգամ դառնագոյն մեզ դրել։ Երանի՜ թէ ունենայինք գովեստի արժանաւոր բաներ, ի՛նչ ուրախութեամբ փառաւորելու էինք այդ իրողութիւնքը և նոցա միջի ներգործող անձինքը։ Այն Հայերից, որ նեղբրտելու էին մեր այսպէս խօսածի վերայ, հարցանումենք — ի՞նչ մի աղջոգուտ գործ են կատարել, քանի՞ ուսումնարանք ունին, ո՞րքան վարժապետք ու աշակերտք. մեք կը պատասխանենք, ոչ մի։ Ո՛չ թէ միայն չունի աղգը աշխարհական դպրոց տղաների և աղջիկների համար, այլև ոչ եկեղեցականների համար, որի վերին աստիճանի կարօտութիւնը գալի է ամեն մի քրիստոնեայ մարդու համար, թէև գանգատուելիք ապա հոգևորների տգիտութեան վերայ։ Աղգը իրաւունք չունի գանգատելու այդ մասին. պատճառ, գիտուն քահանայք դաշտում չեն բուսանում, գիտուն հոգևորներ ունենալուց յառաջ, պիտոյ է պատրաստել ուսումնարաններ, տպարաններ, որոնց միջնորդութեամբ կարելի էր ստանալ ոչ երազում այլ արթնութեան մէջ Մագիստրոսներ և Վարդապետներ, գիտուն և խելացի եպիսկոպոսներ, լուսաւոր Կաթողիկոսներ, որ կարող էին հայր դառնալ աղգին, խնամել և հովուել ժողովուրդը, հոգալով նորա հոգեկան պիտոյքը։ Երանի՛ էր մեզ եթէ ապառաժի վերայ չը լինէր մեր սերմանածը, երանի՛ էր մեզ եթէ ցոյց տալով հրապարակով այս ազգային պակասութիւնքը կարողանայինք պատճառ դառնալ մեր աղգի հարուստներին և իշխաններին խորհուրդ կատարել այս բանի վերայ

լծի տակից, սարսափելի գին — Քրիստոսի արիւնը։ այժմ պիտոյ է տեսանենք թէ ինչպէս այդ մեծագին աղատութիւնը հետ զհետէ կապանքի տակ է դրվում պապերի ձեռքով, որ օգուտ քաղելով աղգերի տգիտութենից փակումէն նոցա աչքերը։ Պիտոյ է տեսանենք մորմնքվելու համար, թէ ինչպէս այն սրտերը, որ ընդարձակվել էին, ցողվելով Քրիստոսի անմեղ արիւնով, կաշկանդվումեն և կարկամվումեն պապականութեան շնչելուց։

Ա աղուց ահա պապերը սովորել էին մտածել, թէ սուրբ գրքի մէջ եղած ամենայն աղատութեան գաղափար ասված էր իւրեանց օգտի համար։ շատ վաղ ժամանակներից քարոզումէին իւրեանց անձը անմիջական երեսփոխան Աստուծոյ, աշխարհի վերայ, և այն, անսխալելի և անմեղանչական երեսփոխան։ շատ ժամանակ էր որ քարոզումէին պապերը և նոցա արքանեակքը, թէ երկնքի արքայութեան բանալիքը կախված է Վատիկանի պատի վերայ։ Մինչդեռ մարդկութիւնը նոր դեռ ևս աղատվելով սատանայի գերութենից և հոգևորված պատրաստ էր ամենայն զոհաբերութիւն յանձն առնուլ աղատական կրօնի անունով, մինչդեռ միւս կողմից զանազան աշխարհներում անքրիստոնեայ աղգերը չարչարումէին և հարստահարումէին քրիստոնեայ բնակիչքը, պապերը մի կերպով իւրեանց անձը գլուխ եկեղեցու ցոյց տալու մտքով, միւս կողմից աղգերի մտածութիւնքը իւրեանց վերայից հեռացնելու համար, պարապեցնումէին այդ աղգերը խաչակիր ղենուորութիւններով անհաւատների ընդդէմ։ Մի ղենուորութիւնը չարդ ու փշուր վերադարձած արշաւանքից, և ահա, պապական կոնդակները եկեղեցու բեմերը դղրդումեն, երկրորդը քարոզելով։ Երկու էր այս բաների խորհուրդը, մին, որ ցոյց տային թէ պաշտպան են քրիստոնէութեան և դորանով սովորեցնէին աղգերը նայել պապի վերայ որպէս եկեղեցու գլխի վերայ։ երկրորդ որ աղգերը և մանաւանդ նոցա իշխանքը զբաղվելով այդ անվերջանալի արշաւանքներովը, ժամանակ չը գտանէին ուշադրութիւն դարձուցանել պապերի և առ հասարակ եկեղեցականների անկարգ գործերի վերայ։

Դեռ ևս շատ յառաջ այս իրողութիւններից ստեղծագործել էին պապերը իւրեանց տիեզերական իրաւասութեան գաղափարը։ Նոքա հաստատված ծնանումէին այն մտքի վերայ, թէ ոչխարքը հովուի համար են և ոչ հովիւը ոչխարի համար։ Հեռացնելով ժողովուրդը սուրբ գրքի ընթերցանութենից, պատճառելով թէ աղգերը տգէտ լինելով թիւր կը հասկանային և կը գայթակղվէին, օր ըստ օրէ պատումէին աղգերի միտքը մարդադիր չնչին և մոտի կանոնների թանձր մառա-

խուզով, որպէս զի նոցա աչքը չը կարողանայ տեսանել պապականութեան գործերը։

Ո՞ր գործերը։ մի՞թէ պապերը անվայել գործեր էին գործում, մի՞թէ Աստուծոյ անմեղանչական երեսփոխանքը, որ ընտրվումէին Հռոմով սրբով, իւրեանց անխաբելի ընթացքով կարող էին դայթակղութիւն պատճառել ազգերին, որոնց ոտքի վերայ հաստատ պահելու համար նոցա արարիչը կանգնել էր Հռովմէական դատաւորի առաջև։

Աչքերս ձգենք մի հարիւր յիսուն տարու ժամանակամիջոցի վերայ մինչև Կարլովինգեան տան վերջանալը, և տեսանումենք ահա, որ քսան և չորս պապերից, որ այս միջոցին Նստան Հռովմէական եկեղեցու աթոռի վերայ, երկուքը սպանվեցան, հինգը աքսորվեցան, երեքը ինքեանք հրաժարվեցան այս վտանգաւոր իշխանութենից, ոմանք զէնքի ուժով հասան այս բարձր աստիճանին, ուրիշները արծաթով, երկուքը ստացան այս արժանաւորութիւնը սիրական կին մարդերի ձեռքից, մինը ինքը իւրեան պապ ընտրեց։ Հրաժարականը պապական աթոռից միանգամ գնվեցաւ քսակով, երկրորդումը գեղեցիկ հարսնացուի փաղաքշական խօսքերով։ Մինը Հռովմի քահանայապետներից կողոպտեց եկեղեցական գանձը, իւր աւարով հանդերձ դուրս փախաւ Հռովմից, և յետոյ վերադարձաւ շուտով, հալածեց իւր յաջորդը և խեղացուց նորան ամենադարշելի կերպով։ Պատմութեան թերթի մի երեսի վերայ կարդումենք այն սարսափելի անցքը, թէ ինչպէս հակապապի մեռած մարմինը բերվումէ նոր պապի առաջև իւր դահընկեցութեան դատակնիքը լսելու համար, իսկ երկրորդ երեսում տեսանումենք, թէ ինքը այդ դատաւորը ինչպէս լսումէ իւր այդօրինակ դատակնիքը, թէև առանց այն զզուելի հանդիսաւորութեան։ Յետոյ, պապերից մինը վարձու է առնում իւր անմեղանչականութիւնը տասն և ութն տարեկան հասակում. միւսը տասներկուսից յառաջ։ Տեսանումենք մի պապ, որ փոխանորդ է ընտրում ինքեան այն պատճառով, որ անձամբ անձին կարողանայ առաջնորդել զօրքերի խումբին, որ դուրս էին գնում Հռովմից պատերազմի համար. միւս պապը, մեծ արծաթ ստանալով, յօժարումէ Կոստանդնուպօլսի պատրիարգը գլուխ եկեղեցու ճանաչել։ Ամենայն սուրբ բան դառնումէ վաճառելի, արատը և անառակութիւնը թագաւորումեն Վատիկանի կամարների տակ, իսկ որբացած եկեղեցին, հարսնացած մի և նոյն ժամանակ երեք փեսայի (այսպէս էին ասում այն ժամանակ) հարկադրված է ներկայ լինել երեք որպէս թէ միմեանց ներհակ պատարագի խորհրդակատարութեան, որ կատարվումէին մի և նոյն քրիստոնեայ աշխարհում։ Արդեօք դժոխքի դուռները պիտոյ է յաղթահարէին վերջապէս պապական աթոռը։ Ապացուցանելու համար, թէ այսպիսի մի վտանգ կարելի բան էր,

հերիք է ցոյց տալ Բարոնիոս, եկեղեցական պատմիչի վկայութեան վերայ։

Ահա այն իրողութիւնքը, որ չէ պիտոյ համեմատէր ժողովուրդը Սուրբ գրքի և Աւետարանի Վարդապետութեան հետ։ պապականութիւնը պահանջումէր աղդերից կոյր և անպայման հաւատ։ հաւատ, ոչ թէ անմիջապէս դէպ ի Աստուած, այլ պապի միջնորդութեամբ, որով։ հետև արքայութեան բանալին նորա ձեռքումն էր։

Բայն տեղ, ուր կրօնի բոլոր աղատութիւնը, Յիսուսի Քրիստոսի արիւնով մարդկութեանը պարգևած, կենտրոնանումէ մի մարդու մէջ, ուր մի հողեղէն մարդ հարկադրումէ ժողովրդին իւր պառաւական տրամաբանութեամբ, բաց աչքով անմեղանչական և անսխալելի ճանաչել նորա անձը, ուր ժողովուրդը իրաւունք չունի ընթեռնուլ, քննել և հասկանալ սուրբ գիրքը և հարկադրված է ոչ թէ սրտի վկայութեամբ, այլ մեքենական հպատակութեամբ ընդունել այս կամ այն ճշմարտութիւն ասված բանը, ուր մարդկային աղդի բարոյականութիւնը սանձի տակ է դրվում ահարեկ լինելով սպառնալիքից, որ տալիս է պապականութիւնը։ այդպիսի մի կրօնի ինչ անուն ունէիր տալու, սիրելի ընթերցող, եթէ ոչ բուն ստրկական, աղատութեամբ դիմակաւորված։ մանաւանդ, որ տեսել էիր այս տեղ ստրկական և աղատական կրօնների ընաւորութիւնքը։

Ի՞նչ է պապականութեան խորհուրդը, որ ներդործումէ այսպէս։ այս խորհուրդը մեծ է։ բայց որքան մեծ, այնքան և կորստական մարդկութեան համար։ Նա ներդործումէ կրօնի և կրօնապաշտութեան դիմակի տակ, բայց դոքա երկրորդական բան են համեմատութեամբ առաջին նպատակին, որին կամի հասանել։ Նորա մնացածին և կարծիքական տիեզերական հոգևոր իրաւասութեան տակ թաղնված է տիեզերական քաղաքական իրաւասութիւն։

Մեր ասածի վկայութեան համար հարկաւոր էր դնել այս տեղ պապական պատմութենից մի քանի իրողութիւնք, բայց այդ բոլորը թողնելով եկեղեցական պատմութիւնը Հայոց աղգի մէջ հերոսաբար հանդէս հանելոցին, հերիքանումենք պատմելով մի կարճ բան Գրիգոր եօթներորդ պապի կեանքից։ Մինչև այս պապը, արևմուտքի թագաւորքը իւրեանց հողի վերայ իշխանութիւն ունէին եպիսկոպոս և վանահայր կարգելու, մինչև սորա ժամանակը պապերի անկախութիւնը մնացած էր լոկ խօսքերով միայն, բայց Գրիգորը, որի խելքով և կառավարութեամբ հինգ պապ նստել էին պապական գահը, որ մի զարմանալի յաջողութեամբ անցել էր պապական աթոռը, որ պապ դառնալուց մի քանի շաբաթ յետոյ առանձին ժողովով վճռել էր, որ ոչ թէ միայն քա-

հանայք անկին լինին այնուհետև, այլ ով որ և կին ուներ, նա ևս բաժանվի, թելադրելով ժողովրդին ներկայ չը լինել այն եկեղեցական աստուածպաշտութեանը, որ պիտոյ է կատարվեր ամուսնաւոր քահանայի ձեռքով, այս պապը, ասումեմ, հրապարակով յայտնեց աշխարհին, թէ ամենայն մարդկային իշխանութիւնք կարգված են Աստուծուց, թէ ինքը Տերը, հաւատացել է իւր, մարդկային ազգի վերայ իշխանութիւնը Սուրբ Պետրոսին, թէ իւրաքանչիւր քրիստոնեայ պարտական է հնազանդ լինել սուրբ գահին, ուրեմն և հռովմէական քահանայապետներին, և թէ սոյա ծայրագոյն իշխանութիւնը բոլոր կայսրերի, թագաւորների, բոլոր պատրիարգների և եպիսկոպոսների վերայ, որ պարտական էին պապի ձեռքից ստանալ իւրեանց թագ ու սաղաւարտը, անմիջապէս յանձնած էր հռովմի պապին մեծ առաքելու ձեռքով։

Կայելով այս պապի նամակներին, ամենայն տեղ տեսանումես այս վարդապետութիւնը։ Նա յայտնումէ Ֆրանսիացոց թագաւորին, թէ նորա տերութեան մէջ գտանված իւրաքանչիւր գերդաստան, պարտական է հարկ տալ ամենայն տարի երկու սու, և հրամայումէ իւր դեսպաններին ժողովել այս հարկը, որպէս Ֆրանսիայի դէպ ի սուրբ գահը հպատակութեան նշան։ Նա հաւատացնումէ Հունգարացոց Սալոմոն թագաւորին, թէ սորա տերութիւնը հռովմէական եկեղեցու սեպհականութիւնն է։ Սալոմոնը չը հաւատալով և կամակորվելով գահընկեց է լինում և նորա յաջորդը Վլադիսլաւ աւելի խոհեմ գտանվելով, հրատարակումէ իւր անձը պապի գործակալ և համաձայնումէ հարկ տալ նորան որպէս տերութեան իսկական տիրոջ։ Կորսիկա դեսպան ուղարկվեցաւ պապական սեպհականութիւնքը կառավարելու այս կղզու մէջ և Սարակինոսների յափշտակած երկիրը յետ դարձուցանելու։ Սարդինիա կոնդակ ուղարկվեցաւ նոյնպէս, որի մէջ աւանդվումէր պապի ծայրագոյն իշխանութիւնը այդ կղզու վերայ, իսկ թէ վէճ բացվելու լինէր, այն ժամանակ, սպառնացած էր նորմանդացոց ասպատակութիւնը։ Ցայտնի է նոյնպէս, որ պապը պարգևեց Դմիտրի Դալմաթեան դուքսին թագաւորի պատուանուն, այն պայմանով, որ իւրաքանչիւր տարի երկու հա. իւր մարկա արծաթ հարկ վճարէ Գրիգոր պապին և նորա օրինաւոր յաջորդներին, սոյա Դալմաթիու վերայ ունեցած բարձրագոյն իշխանութեան համար դին կամ տարեկան վարձ։ Այդ միջոցին հռովմի մէջ գտանվումէր մի երիտասարդ մարդ, որ Գրիգոր պապի նամակներից մինի մէջ, անուանվումէ Ռուսաց թագաւորի որդի։ Այս նամակով ծանօթութիւն էին տալիս Ռուսաց թագաւորին, թէ պապը գնչանելով երիտասարդ արքայազնի խնդրին, ընդունել է նորա, դէպ ի սուրբ Պետրոսը և դէպ ի նորա յաջորդքը հաւատարմու-

թեան երդումը, առանց երկբայելու, թէ «այսպիսի ընթացքին երիտասարդ արքայազնի պիտոյ է հաւանի թագաւորը և տէրութեան բոլոր երևելի մարդիկը. պատճառ, Առաքեալը այդ օրից սկսած նայելով Ռուսսիայի վերայ որպէս իւր սեպհականութեան վերայ, պիտոյ է նորա պաշտպանը լինի»։ Պապը մի և նոյն երդումը պահանջեց Սվենոն Դանեմարքացուց։ Լև հայցներից, որ այն ժամանակ դեռ նոր ընդունել էին պապականութիւնը, Գրիգորը, մէջ բերելով իւր ծայրագոյն իշխանութիւնը նոցա աշխարհի վերայ, տարեկան հարկ պահանջեց հարիւր մարկա արծաթի։ Ծայրագոյն հրովարտակներով Եւրոպայի ամենայն տեղերից Հռոմ գանչվեցան շատ եպիսկոպոսք, որոնց մի քանիքը զրկվեցան կարգից, իսկ միւսերը հաստատվեցան նոր աթոռների վերայ։ Ֆրանսիայի, Սպանիայի և Գերմանիայի մէջ պապական դեսպանքը ունէին պապի իշխանութիւն, որոնց թուլութեան կամ սաստկութեան վերայ բարձրանումն գանգատներ Գրիգորի նա հակադրութեանների մէջ։

Դեռ ևս շատ բաներ ունէինք հանդէս բերելու, բայց ժամանակի սղութիւնը հարկադրումէ մեզ հերիքանալ այս փոքր ի շատէ ծանօթաբանութեամբք, այն իրողութեանների մասին, որ կարող էին գաղափար տալ մեր աղգին, թէ ինչպէս էր պապականութեան ուղղութիւնը և խորամանկ քաղաքականութիւնը։

Այսպէս ահա, միջին դարերում, պապականութիւնը մեծամեծ քայլերով յառաջ գնաց դէպ ի իւր դատապարտելի և անքրիստոնեայ նպատակը, բռնանալ մարդկութեան վերայ, գերի և ստրուկ շինել նորան. Նոյն իսկ վերևում յիշված Գրիգոր եօթներորդի պահանջողութեամբ Հենրիկոս չորրորդ Գերմանիայի կայսրը, յուրտ ձմեռան մէջ երեք օր գլխաբաց և ոտաբոկիկ կանգնած եկեղեցու դռնումը պիտոյ է ապաշխարէր։ Դեսպանքը միւս Հենրիկոս չորրորդի, որ ընկել էր Սիքստոս հինգերորդի նղովքի տակ, եկեղեցու մէջ, եկեղեցական զգեստներով զգեստաւորված կարդինալների ձեռքով ծեծվեցան Կլեմենտ ութերորդ պապի ներկայութեամբ։

Կրակով ու սրով կապեցին պապերը մարդկութեան բերանը, նորա բանականութեան ազատ հոսանքը. և միլիոնաւոր անդամք մարդկութեան, որ չը կամէին դլուխ խոնարհեցնել պապական անբնական հրամաններին, խոնարհեցուցին իւրեանց դլուխը պապականութեան անգութ կացնի տակ։ Շատերի մոխիրը ցրուեց տարաւ քամին էշաֆոտների վերայից, մինչ պապականութիւնը, անձնատուր եղած սպանդարամետական զգացմունքի, զմայլումէր, տեսանելով գօսացած դիակները սիւների վերայ, որոնց սիւնից վայր իջուցանելու համար, ինքը Յիսուս Քրիստոսը բարձրացել էր խաչի վերայ։ Շատերը ոչխարի նման մորթ-

վեցան պապականութեան ձեռքով այն խորհրդաւոր երեկոյին, երբ ինքը Թագաւորը (Կարոլոս 9-րդը) իւր ձեռքով հրացաններ արձակեց իւր աւետարանական հպատակներից մի քանիքը չքացնելու աղագաւ, և որի յիշատակի համար մեդալիոններ կտրվեցան ու դոհարանական աղօթքներ կատարվեցան առ Աստուած։

Ոչինչ էր պապականութեան աչքումը այսքան մարդերի կորուստը. նոցա արիւնով ոռոգումէր նա և ամեցնումէր կոյր հնազանդութեան ծիլը պապական մարդերի հոգու մէջ։

Խեղճ ողորմելի Սպանիան ոչնչվեցաւ իւր գործունեայ և հարուստ հպատակներից, որպիսի էին Մաւրիտանացիք. այո մի մասնով և Հրէայք կէս մի կրակով չքացնելով, կէս մի ողորմելի դրութեան մէջ հալածական քշելով իւրեանց ընակութիւններից. Ինկվիզիցիոն պահանջումէր այս, պապի քաղաքականութիւնը պահանջումէր արիւն, մահ, հուր և սուր։ Քրիստոս ինքը մեռաւ աղգերի փրկութեան համար, պապականութիւնը աղգեր չքացուց իւր ապահովութեան համար և դեռ ևս պաշտպան քրիստոնէութեան հրատարակելով իւր անձը։ Ճշմարտութեան դիտանոցից նայելով պապականութեան վերայ, մի թէ կարելի՞ է չտեսանել, որ նա ներգործումէր ամենեին քաղաքական գաղափարների հետևելով, կարելի՞ է համաձայնել թէ նորա կրօնը և քրիստոնէութեան պաշտպան ձևանալը չէր մի դիմակ, պահպանող աշխարհի հանգամանքներից, եւրոպացի թագաւորների, այո և աղգերի երեսից։

Ա՛հա այն սկզբունքը, որոնց մէջ ամեել է Մխիթարեան ընկերութիւնը, ահա այն դայեակը, որի հիւթախտութեամբ վարակված կաթը ծծելով կերպարանագործվել էին հայկական ջատագովքը պապականութեան. տեսանելով այս, որպէս մեք, նոյնպէս և ամենայն անաչառ մարդ մեր ընթերցողներից համաձայնելու չէ դերապատիւ Գաբրիէլ Վարդապետ Այվազեանի հետ, թէ Մխիթարեանց պապականութիւնը լոկ դիմակ էր, թէ ամենայն բոպէ կարելի էր վայր ձգել երեսի վերայից այդ խաւարատեսիլ դիմակը։

Ընդդէմ չենք, գուցէ լինին մարդիկ դոցա մէջ, որոնց հոգու բարոյական ղօրութիւնը մեծ լինելով, այլև արտաքին կերպով (կեղծաւորաբար) պապական ձևացած լինելով, կարող էին մի խորհրդաւոր ժամուտ դուրս երևեցուցանել իւրեանց սրտի և հոգու վկայութիւնը և այս կերպով բաց ձգել պապականութեան լուծը իւրեանց պարանոցի վերայից, բայց այս մի այնպիսի բան է, որ հարիւր անգամ արժանի էր կասկածանքի և երկբայութեան տակ ընկնելու։ Մեք խօսումենք այսպէս ճիշտ կրօնական մտքով. ընդհանրապէս չէ կարելի ասել, որովհետև աշխարհի հանգամանքները երբեմն շատ բաներ ստիպումեն կատարել,

թէև մի այդպիսի մարդ ամենևին պատրաստված չէր իւր հոգու տրամադրութեամբ։

Մեք ամենայն հոգով ցանկանումէինք մեր ազգի կրօնական միութեանը, ուստի և գրկաբաց ողջունելու ենք մի մարդ, որ փախչելով օտար դայեակի գրկից, վազեր դէպ ի իւր ծնող բուն հայկական եկեղեցին։

* * *

Բ.

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։

—

Մի մարդու, մի ընկերութեան կամ մի ամբողջ ազգի բարոյականութիւն երկու աղբիւր ունի. առաջինը և գլխաւորը կրօնը, երկրորդը լուսաւորութիւնը. թէև կարելի էր երրորդ աղբիւրի տեղ դասել և քաղաքականութիւնը, բայց քաղաքականութեան ուղղութիւնը անմիջական հետևանք է կրօնի և լուսաւորութեան։ Եթէ ճիշդ լոգիկաբար քննենք, և լուսաւորութիւնը հետևանք է կրօնի, ինչպէս նախընթաց գլխումը ասել ենք, ուրեմն Մխիթարեանց բարոյականութեան տարերքը որոնելու համար դարձեալ պիտոյ է մեղ դիմել դէպ ի նոցա կրօնը, որ է պապականութիւն։ Թէ ի՞նչ է պապականութիւնը, ասել ենք նախընթաց գլխումը։

Մարդկութեան տառապանքը, այն ամենադառն փորձերը, որ հաղարաւոր տարիներով կատարել է նա, իւր կեանքը և գոյութիւնը ենթարկելով այս փորձութիւններին և այս բոլորը ստրկութեան և ծառայութեան մէջ, այս իրողութիւնների ճիշդ պատմութիւնը գրել է մեր առաջև այն անխորտակելի ճշմարտութիւնը, թէ ստրկութիւնը մայր է ամենայն անբարոյականութեան։ Աւելորդ չէ մի փոքր պարզել այս եզրակացութիւնը մեր ընթերցողների առաջև, որով և ապացուցանել, թէ ի՞նչ կերպով կամ ի՞նչ ճանապարհով ստրկութիւնը մայր է լինում ամենայն անբարոյականութեան, որ, իւր կողմից նոյնպէս, ծնող է և գործարան սոսկալի և սարսափելի յանցանքների։ Մեր խօսքը այս կերպով յառաջ տանելով ասումենք, թէ մարդը որոշվումէ այլ կենդանածին անասուններից իւր բանականութեամբ։ Քննութեան տակ ձգելով մարդը ֆիզիկական և հոգեբանական կողմից, նկատումենք, որ նորա կազմուածքը ցոյց է տալիս մի այնպիսի կենտրոն, արարչի ձեռ-

քից դուրս եկած գործարանաւոր մարմինների մէջ, ուր ժողովված են բոլոր մարմնեղէն կատարելութիւնքը, որ ցեր ու ցան երևումեն առանձին առանձին կենդանական և բուսական թագաւորութիւնների մէջ. նկատումենք հոգեկան կարողութիւնք և ունակութիւնք, որ միւս շընչաւորների մէջ փոխանակվումեն բնական աղդեցութեամբ։ Այս բոլոր նկատողութիւնքը հաւանեցնումեն մեզ, թէ մարդը ստեղծուած է ազատ լինելու համար. նորա ազատութիւնը հետևանք է նորա ֆիզիկական կատարեալ կազմութեանը և անհիւթ և իմացական կարողութեանը։ Ազատութիւնը, կամ, ազատութեան վերամբարձ ցանկութիւնը, որով միայն մարդը որպէս բանական էակ դիտակցաբար ճանաչած է լինում իւր արժանաւորութիւնը այլ արարածների մէջ, վառվումէ բորբոքվումէ մանաւանդ, եթէ մի սեղանապիղծ ձեռք կամ իրողութիւն, փորձ փորձէր կապել այս ինքնագոյ, հոգեկան ձգտողութեան և անձնզգայութեան բնական իրաւունքը։

Ու ճշմարիտ. ոչ մեղանից բողոքելու չէր, եթէ մի բարբարոս և բռնակալ ձեռք կապէր մեզ թէ նիւթապէս և թէ բարոյապէս, կամ արդելանքի տակ դնէր մեր ազատութիւնը, մեր կամքը որ հետևանք էին մեր հոգեկան և ֆիզիկական կատարելութեանը։

Ով կայ է պատմութիւնը, որ ապստամբութիւնք, խռովութիւնք, սպանութիւնք, հրկէղք, յափշտակութիւնք և այլ սոսկալի մոլութիւնք ծնեցան բռնակալութենից։ Բռնակալական հոգին, որ պաշտպան է ստրկութեան. բռնակալութիւնը, որ չկամի խոստովանել մարդկային հաւասարութիւնը, անիրաւաբար մոտենալով ուրիշի ստացուածին և իրաւունքին, առաջին անգամ մերկացուց երկաթը անպօրի և անպաշտպանի պարանոցի վերայ։

Բռնակալութիւնը, դահիճ դառնալով մարդկային հոգու ազատ կարողութիւններին, ջուր է տալիս և աճեցնումէ չնչին վնասակար և տմարդի ընդունակութիւնք և մոլութիւնք, որոնց կարդումն են կեղծաւորութիւնը, սուտը, դաւաճանութիւնը և այլ սոցա նման արատներ, որով զրահաւորվել հարկադրվումէ ամեն մի ստրուկ մարդ, իւր դէմքը և բարեկենդանութիւնը մի կերպով ապահով կացուցանելու համար բռնակալութեան երեսից։ Պապականութիւնը իւր մէջ կենտրոնացնելով ամենայն իրաւունք աշխարհի երեսին, որ ցած էր միայն Աստուծոյ իրաւունքից, երբէք համարված չէ և համարվելու չէ ազատութեան պաշտպան. նորա կանոնադրութիւնքը, հոգևոր կարգերը և այլ անհամար իրողութիւնք մարդկութեան պատմագրքի մէջ վկայութեամբ հաստատումեն, թէ դա խլելով բոլորի ազատութիւնը և կամքը, իւր մէջ կաղմել է մի ազատութեան շտեմարան, և նորա ծայրացեալ աղա-

տութիւնը ամենայն բանի մէջ մարդկեղէն աշխարհում, այն է որ ուրիշ խօսքերով անուանվում պապական անմեղանչականութիւն. ինչո՞ւ նորա համար, որ նա ապատ է, որ նա վերադաս է համարում իւր անձը բոլոր մարդկութենից և սորան հլու հպատակ իւրեան, ուրեմն և անմեղանչական, որովհետև մեղանչել կարելի է դժրելով մի արգելանքի. ապա եթէ չը կար ոչինչ արգելք ու խափան որ և իցէ թէ նիւթական և թէ բարոյական կողմից, եթէ դորա փոխանակ ղեահաւորված էր լիակատար աղատութեամբ, ուրեմն ինչպէս պիտոյ է նա մեղանչէր։ Եւ աղատութիւն ասացեալը ինչպէս ասել ենք սեպհականութիւն լինելով ամբողջ մարդկութեան, սորա իւրաքանչիւր անդամը հաւասարաչափ ունէր նորան, և այլապէս մեծանալու ծովանալու չէր մի անդամի աղատութիւն, եթէ չը խլէր նա մի այլ իւր պէս մարդկութեան անդամներից։ Այս մի անժխտելի օրէնք է մարդկեղէն աշխարհի մէջ, որի միլիոնաւոր ապացոյցքը ամենայն մարդ տեսանում, որ աչք ունէր տեսանելու։ Մխիթարեանց բարոյականութեան կրօնական աղբիւրը պապականութիւնն էր. աւելորդ է երկարաբանել, ով որ ականջ ունի լսելու, թող լսէ, ով որ հասկանալու գործարան ունի խելապատակումը թող հասկանայ։

Ուր այժմ քննենք Մխիթարեանց բարոյականութեան երկրորդ աղբիւրը, որ է լուսաւորութիւն։ Ասացինք թէ ճիշդ լոգիկաբար քննելով, լուսաւորութիւնը հետևանք է կրօնի. ասացինք այս ճառի առաջին գլխումը, թէ «ասա ինձ որ կրօնի խոստովանող ես դու, ես կ'ասեմ քեզ, թէ որ աստիճանի կամ ի՞նչ վիճակի մէջ էր քո բանականութիւնը.» արդարև պապականութիւնը լինելով մի իմանալի և հոգևոր Չինաստան, ուր ոչ ոք և ոչինչ օտարական չէր կարող ներս մըտանել, ունի իւր սեպհական հայեացքը ամենայն բանի վերայ։ Աշխարհի ընդհանուր լուսաւորութիւնը նորա համար չէ. եթէ լաւ գնահատենք լուսաւորութիւն բառիս արժանաւորութիւնը. և ճշմարի՞տ, ինչպէս կարող էր ստոյգ լուսաւորութիւնը տեղ գտանել մի աշխարհում, որի հիմքերը և տարերքը էին բռնակալութիւն և ստրկութիւն, որի գլխաւորը Աստուծոյ ամենակալի երեսփոխան քարոզելով իւր անձը, նոյն պատիւը պահանջումէր ժողովրդից, որ պարտական էր միայն Աստուծոյ հատուցանել, որի մելեկրօն արեղայքը, — այդ ստրկութեան որդիքը և բռնակալութեան խաւարատեսիլ և դժոխադեմ ղեկնուորքը — եկեղեցու բեմերը թնդեցնումէին նղովք ու դատապարտութիւն կարդալով այն մարդերի վերայ, որ համարձակվել էին որպէս ճշմարտութեան պաշտօնեայ մնտենալ առիւծի աւարին . . . . Այո, շատերի համար իւրեանց ճշմարտութիւնը և լուսաւորութեան քարոզութիւնը եղած է

մահու դատակնիք։ Պապական կրակն ու սուրը այրել ու կտրել են այն լեղուքը և այն գլուխները, որոնց անմիջական քարոզութեամբ խլրտվել էր մի ճշմարտութեան լոյս պապական անմսիթար և մեայլոտ աշխարհի սահմաններում։ Ճշմարտութեան և լուսաւորութեան շատ քարոզիչք փչել են իւրեանց վերջին շունչը պապական բանտերի բորբոսած պատերի տակին չարագործների և աւազակների հետ միասին մի խուրձ յարդի վերայ . . . . .

Ա.յն տեղ, ուր մի կողմից սաստիկ նախապաշարված են մտքերը պապականութեան օգտի համար, միւս կողմից բռնութիւնը և ստրկութիւնը հարկադրումեն հրաժարվել այս և այն քննութենից, հնազանդվել և հպատակվել այն ձայնին, որ բարձր աղաղակումէ, «անսխալ եմ», որ խելապատակումը ուղեղ ունեցող մարդը ճշմարիտ լուսաւորութիւն կը յուսայ գտանել այդ աղդի ընդհանուրի մէջ։ Տարակոյս չկայ, որ կան ուսումնարանք, տպարանք, մատենադարանք, հնութեան թանգարանք և այլն և այլն. բայց աւա՜ղ, դոքա բոլորը նման են այն թղենուն, որին հանդիպեցաւ միանգամ Քրիստոսը Երիքովից Երուսալէմ գնալու ժամանակ. դա մի արտաքին փայլ է. այդ դուրսից միայն գործունէութիւն ցոյց տուող շարժողութեան տակ պահված է սարսափելի անգործութիւն և անշարժութիւն։

Ուսումը և լուսաւորութիւնը, պապական դայեակների ձեռքով մատակարարված մարդկային ազգին, նման է օպիումից շինած քաղցրեղէնին, որ դայեակները (Ասիացոց մէջ), սովոր են տալ երեխաներին քնեցնելու համար, բայց քաղցրութիւն խառնելով այդ թմրեցուցիչ հիւթի մէջ, որպէս զի մանուկը քաղցրութեամբ խաբվելով յօժարի ընդունել։ Մեր ասածի վկայութիւնը պարտական ենք որոնել մարդկութեան պատմագրքի մէջ, որ մարդկութեան կեանքի և գործերի յիշատակարանը լինելով, կարող էր աւելի լուսափայլ կացուցանել մի ճշմարտութիւն։ Եւ այսպէս հարցանումենք պատմութենից, թէ ինչ վիճակի և որ աստիճանի մէջ էր Եւրոպացոց լուսաւորութիւնը, մինչև այդ աշխարհի ամենայն տեսակ գիտութիւնքը փակված էին վանական և կալուածատիրական շինուածքների աշտարակաղարդ պարիսպների մէջ. մինչև այդ գիտութիւնների սպասաւորքը էին զանազան պապական կարգերի արեղայք։ Արդեօք, այդ գիտութիւնքը, ինչպէս այժմ, ցոյց էին տալիս իւրեանց մէջ, որպէս մի գործարանաւոր էակի մէջ կեանք և շարժողութիւն, արդեօք, արեդակի տարեկան շրջանառութիւնքը աղդեցութիւն ունէին այդ դիտութիւնների վերայ, յարաբերութեամբ դէպ ի նոցա յառաջադիմութիւնը։ Պատմութիւնը պատասխանումէ. քա՜ չէ՛ցի։ Մինչին դարերումը, մինչդեռ ժողովրդի դաստիարակութեա-

նը հոգաբարձու էին պապական հոգևորք, ցնծումէր նեղսիրտ դպրոցականութիւնը իւր սուիեստութենով և լոլոր մեծվայելչութեամբ։ Դիտութիւնքը, կապված կաշկանդված, որպէս մի չորացուցած մեռեալ դիակ, լոլանդակվումէին երբեակ և քառեակ ասացեալ արուեստների մէջ, որք էին, քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն, երաժշտութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն և աստեղաբաշխութիւն, որ ներս էին մտել Եւրոպա վեցերորդ դարումը Կասսիոդորոսի, Իզիդորոսի և Մարկիանոսի անձոնի գրքերով։

Այս գիտութիւնքը այժմեան ժամանակումն ունին մի արդարացի արժանաւորութիւն մարդկային դատաստանի առաջև. պատճառ, դուրս գալով իւրեանց շղթայակապ արգելանքներից, կամ աւելի լաւ ասել ճեղքելով իւրեանց մեռելապատանքը, կենդանացնել, աճել ու յառաջացել էին։ Իսկ այն ժամանակ մինչ մտել էին այս գիտութիւնքը Եւրոպա, մինչ ամբողջ հինգ և վեց դար, ամենայն մատենագրական գործունէութիւն ցոյց էր տալիս իւր մէջ մի միայն ստրկաբար փոխառութիւն այս առաջիններից. մինչ բոլորի խելքերը դառնումէին և ոգևորվումէին Երուսալէմի ազատութեամբ, կամ այս և այն ժողովքը կազմելու որ և իցէ անլաղդ մարդ դատապարտելու համար, մինչ ամենայն հոգեկան գործունէութիւն կենտրոնանումէր հոգևոր ասպետութենների մէջ, ի՞նչ աստիճանում կարող էր լինել գիտութիւնը և լուսաւորութիւնը, բաշխված մարդկային ազգին պապական դաստիարակների ձեռքով։

Ի՞նչպէս ուրեմն յառաջացաւ Եւրոպայի լուսաւորութիւնը. թող խօսք պատմութիւնը. Եւրոպական մարդկութեան այժը և զօրութիւնքը քամվեցան խաչակիր արշաւանքներից, ասպետները ընկան Արմիդայի ձեռքը. խեղճութիւնը նիւթականապէս պատճառ տուեց կամ լաւ ասել, որպէս մի խթանով ծակեց քնած ազգերի կողքը. զարթեցան և նայեցան իւրեանց տխուր և վշատեցուցիչ անցեալի վերայ, հոգ տարան բարւոքել ներկայն, որ սա ապագայումը դեղեցիկ և երջանիկ օրերի մայր դառնայ։ Ազգերը, որ մինչև այժմ առաջնորդվումէին հոգևոր դաստիարակների ձեռքով, գոհանալով իւրեանց հոգևորների աշխատութենից, հրաժարվեցան այնուհետև նոցա առաջնորդութեան տակ մնալուց. ինքեանք սկսեցին լինել իւրեանց դաստիարակը և այս տեղ էր ահա Եւրոպայի այժմեան լուսաւորութեան սերմը, սկիզբը կամ դարագլուխը։

Այս մեծակշիռ յեղափոխութեան սկիզբը, տեսանումենք տասնեւերեք երորդ դարումը, որ մինչև տասնեւհինգ-երորդ դարը խմորվելով, վերջապէս այս դարումը դուրս երևեցաւ ամենայն տեղից հեղեղի յորձանքներով։

Այն Եւրոպական լուսաւորութիւնը, որին ձրիաբար կարող է այժմ մասնակից լինել մարդկութեան ամեն մի անդամը, արիւնի գին արժէ Եւրոպային։ Սա ամբողջ կէս դար մանուկ զօրութեամբ սուրը ձեռքին պատերազմեց մի իրաւունքից զրկված հզօր պառաւի հետ, որի գիշերատեսիլ զինուորքը շատ էին քան թէ լուսաւորութեան որդիքը։ Արիւնով լուացվեցաւ Եւրոպան այս ընդհանուր գործողութեան ժամանակ։ զարմանալի բան։ ճշմարտութիւնը և լոյսը, ասես թէ միշտ պիտոյ է պատերազմ լով յաղթեն խաւարին և ստութեան և յափշտակեն յաղթութեան ձիթենին։ Այսպէս է աշխարհի կարգը, այո և նախանամութեան կամքը, որպէս զի ընտրեալքը երևին։ Մեր խնդրից դուրս է խօսել այս տեղ Եւրոպական լուսաւորութեան աստիճան առ աստիճան յառաջխաղացութեան մասին, այդ բոլորը աւանդվումեն նոցա գրականութեան պատմութեան մէջ, բայց քերվելով անցանել այս խնդրի մօտից անհրաժեշտ էր մեզ, ցուցանելու համար պապական լուսաւորութեան որպիսութիւնը, որի մէջ որոնումէինք Մխիթարեանց բարոյականութեան երկրորդ աղբիւրը։ տեսանք ահա այդ աղբիւրը, և այժմ մնումէ մեզ յառաջ խաղալ մեր ընթացքումը, հետևեալ գլխին պահելով խօսել բուն Մխիթարեանց լուսաւորութեան վերայ, որովհետև ինչ որ մինչև այժմ ասվեցաւ վերաբերվումէր ընդհանուր պապականութեան։—

Անցանենք այժմ քննել Մխիթարեանց բարոյականութեան երրորդ աղբիւրը, որ է պապական քաղաքականութիւնը։

Ա աղուց ահա պապերը իւրեանց անձը Յիսուսի Քրիստոսի անսխալելի և անմեղանչական երեսփոխան քարոզելով, մի բարակ կերպով ներս էին բերել պապական շրջապատի մէջ այն գաղափարը, թէ ամբողջ երկրագունդը պարտական է խոստովանել այս գերմարդկային իրաւասութիւնը նորա։ Նոքա, հոգևոր իրաւասութեան հետ բոլորելով իւրեանց մէջ և քաղաքական արժանաւորութիւնը այն վարդապետութեամբ, թէ Հռովմէական եկեղեցուց դուրս չկայ փրկութիւն, և թէ Քրիստոսը խոստացել էր մի հօտ և մի հովիւ շինել բոլոր մարդկային աղգը, քարոզումէին ազգերին, թէ (առ ժամն) կրօնական մտքով պիտոյ է հարկաւորաբար լսել այս հովուի ձայնին միայն և պաշտպանվել նորա հովանաւորութեան տակ։ Պապական զանազան կարգերը (ordo) նախանձաւոր գործարանք էին կամ այսպէս ասել ընտրութեան անօթք, այս գաղափարը ազգերի սրտի և հոգու մէջ իրագործելու համար։ սոցա քարոզիչքը ծով և ցամաք ոտի տակ առած հողմի թևերով թռչումէին անհաւատալի տարածութիւններ, Սպանիայի ծովեզերեայքից սկսած մինչև Չինաստանի անհիւրընկալ, ժանգոտ երկաթի դուռները։ Ամենայն

տեղ քարոզվումէր կոյր հնազանդութիւն դէպ ի պապը. ամենայն տեղ ներվումէին բոլոր մեղքերը, ընդունելով միայն պապական իրաւասութիւնը։ Դեռ ևս պապական իրաւասութեան ընդունելը բաւական մեծ բան էր, բաւական խորհրդաւոր բան, որի համար պիտոյ էր ներողութիւն տալ մեղքերին հարկաւորապէս. բայց առաւել փոքր բաների համար, միայն թէ դա մի կերպով օգտակար լինէր պապականութեանը, սա իսկոյն պատրաստ էր անտես առնել Աստուծոյ ձայնը, Քրիստոսի պատուէրը։ Շատ օրինակներ կան պատմութեան մէջ, որ ապացուցանումէին մեր ասածը, բայց մեք յիշենք այս տեղ մի իրողութիւն, որի մասին միանգամ խօսած ենք այլ տեղում։

Հենրիկոս չորրորդ Ֆրանսիայի թագաւորը կամենալով բաժան վել իւր Մարգարիտ թագուհուց և սորա կենդանութեամբ կին առնուլ Մարիա Մեդիչիսը, հարկաւորապէս բանախօսութիւն բացեց Կլեմենտ ութերորդ պապի հետ, որ միայն կարող էր լուծանել ամուսնութեան կապը և հրաման տալ վերստին ամուսնանալու։ Ամենայն Քրիստոնեայ մարդ համաձայնելու է, թէ այս բանը ընդդէմ էր Աստուծոյ օրէնքին. բայց պապը խոստանումէ կատարել Հենրիկոսի խնդիրը, այն պայմանով միայն, որ սա յետ դանչէր աքսորից Ցիսուսեան արեղաքը։

Հենրիկոս չորրորդը խոստացաւ. պապը լուծեց նորա ամուսնութեան կապը Մարգարիտի հետ և թոյլ տուեց ամուսնանալ Մարիա Մեդիչիսի հետ։ Ցիսուսեանք յետ եկան աքսորից և իւրեանց երախտագիտութիւնը ցոյց տուեցին Հենրիկոս չորրորդին ցցելով նորա կուրծքի մէջ Ռավայլեակի դանակը։

Պապականութիւնը շատ դիպուածներում զոհումէր իւր անսխալելի կանոնադրութիւնքը, շատ մեծամեծ մեղքեր, որ պապին միայն տուած էր ներելու իրաւունք, ներվումէին մի հասարակ Ցիսուսեան արեղայի ձեռքով, նպատակին հասանելու համար. մնացել էր պապին սեպհական թողութիւն տալ այն մեղքերին միայն, որ յիշված էին Հաղորդութեան ասված կոնդակի մէջ։ Այս բոլոր բաները լինումէին աղգերին առաջնորդելու դէպ ի փրկութեան ճանապարհը . . . . .

Մի կողմից, քարոզիչների խորամանկ և աղատ ներդործութիւնը ճանապարհ էր բանում ոտք չը կոխված և հեռաւոր աշխարհների մէջ, միւս կողմից, իսկոյն նոցա քամակից կրակը և երկաթը բարձրացնումէին պապականութեան դրօշակը ուտելով ու մաշելով այդ աշխարհների ամենայն աղատ շարժողութիւնը։

Զարմանալի է ճակատագրի կամեցողութիւնը Հռոմի մասին։ Քրիստոնէութեան արևը ծագելուց յետոյ, մանաւանդ այն օրից, երբ

լուսաւոր կերպով և հոգու դիտակցութեամբ հասկացան Քրիստոնէութեան փրկարար խորհուրդը, շատ քաղաքներ, որոնց մէջ մի տեղ հաւաքված էին ամբողջ աղգերի ղօրութիւնք, բոլորովին կերպարանափոխ եղան. դորա հակառակ յաւիտենական քաղաքը հիմնված լինելով ստրկութեան վերայ, պահումէ այս տարրը իւր քաղաքականութեան։

Ահա այն աղբիւրքը, որոնցից անմիջապէս պիտոյ է բղխէր Մխիթարեանց բարոյականութիւնը, այն հողը, որի վերայ պիտոյ է բուսանէր, և այն ատմոսֆերան որի մէջ պիտոյ է ծաղկէր նա։ Բայց այս բոլորը ընդհանուր աղբիւրք էին բարոյականութեան համար բոլոր պապականների. բաց ի սորանից հարկաւոր էր հանդէս բերել մի այլ իրողութիւն, որ իսկոյն մերկացնելու էր Մխիթարեանց բարոյականութեան մասնաւոր և սեպհական աղբիւրը. մեր խօսքը այն կանոնադրութեան վերայ է, որով վարվումէին Մխիթարեանք։ Ինչ կանոնադրութիւն է այդ. փառք և պարծանք Մխիթարեանց անուանը. Յիսուսեան ապիրատ կարգի, աշխարհին յայտնի կանոնադրութիւնը, որ Իգնատիոս Լոյոլայի երևելի աշակերտ Լայենեցի աշխատասիրութիւնն էր, թէև, որպէս բուն Լոյոլայի գործ, Կոնդարինի Կարդինալի ձեռքով առաջարկվեցաւ Պաւլոս երրորդ պապին հաստատութեան համար, այն աշխատասիրութիւնը, որ այս պապը կարդալով բացագանչել էր ուրախութենից «Spiritus Dei est hic» և որ նոյն պապի կոնդակով 1540 թուականի դեկտեմբերի 27 օրումը հաստատված էր։ Այս կանոնադրութեան վերայ Լոյոլան յաւելացուց վերջումը և այլ կանոններ. բաց ի սորանից Յիսուսեանք ունէին և «Exercitia Spiritualia» — «Հոգևոր վարժութիւնք» անուանված հրահանգը. այս կանոններով դաստիարակվումէին Յիսուսեանք և սոքա էին նոցա լուսաւորութեան, բարոյականութեան և քաղաքականութեան աղբիւրքը։ Այս կանոնադրութիւնքն էին, որ Լուդովիկոս տասն և հինգերորդի օրերին, տարի ու կէս քննվելով Փարիզի պարլամենտի մէջ դատապարտվեցան նորա վճռահատութեամբ, որ յայտնի է անունով — «Recueil monstrueux des assertions soutenues et enseignées par la compagnie des Jesuites»։ Այս վճռահատութեան մէջ ասացուցվեցաւ, որ երկու Յիսուսեանք իւրեանց շարադրութիւնների մէջ, թոյլ էին տալիս շնութիւն ու անառակութիւն. երեսուն վեց Յիսուսեանք թոյլ էին տալիս մարդասպանութիւն. երկու Յիսուսեանք անձնասպանութիւն. և եօթանասուն հինգ Յիսուսեանք թագաւորասպանութիւն։

Կարծեմ այսուհետև աւելորդ էր մեզ երկարաբանել Մխիթարեանց բարոյականութիւնը սահմանելու համար. թող մեր ասածը կատարելագործէ Գերապատիւ Գաբրիէլ վարդապետ Այվազեանը խօսելով

Ուրուագծի (տպած Փարիզ· 1857·) 75 երեսում· — «Արդ որովհետև «այժմուս Մխիթարեանց սահմանադրութիւնն ալ ճիզվիթներուն սահ- «մանադրութեան գրեթէ բառական թարգմանութիւնն է, հարկաւ պիտի «դտնուին մէջերնին անոր կանոնները ճիշդ պահողներ, որ ըսել է հայ «ճիզվիթներ։ Եւ մենք այնպիսի անձինք տեսեր ենք դժբաղդութեամբ «վանքին մէջ որ ոչ միայն վարուք ճիզվիթ էին, այլև ճիզվիթ ըսուիլը «իրենց մեծ պարծանք կը համարէին»։ — Այս խօսքերը գրումէ մի այն- պիսի մարդ, որ երեսուն երկու տարի անդամ էր այդ միաբանութեան, և այն, ակամաւոր անդամ։

Տեղիք չունին դերապատիւ Գաբրիէլ վարդապետի խօսքերը երկ- բայութեանտակ ընկնելու· պատճառ, Մխիթարեանք իւրեանց բոլոր գոր- ծողութեանների և ընթացքի մէջ արդարացնումեն և իրաւացնումեն նորա խօսքերը, և մի այնպիսի մարդու, որ կասկածումէր այս բանի վերայ, խոր- հուրդ ենք տալիս կարդալ այն գրուածքը Մխիթարեանց, որ յարա- բերվումէին կամ Հայոց ազգին և կամ պապականութեան· սոցա մէջ երևումէ նոցա Յիսուսականութիւնը։ Այսքանը թող բաւական համար- վի Մխիթարեանց բարոյականութեան ընդհանուր բնաւորութիւնը սահմանելու համար· հետևեալ գլուխների մէջ հանդիպելու ենք նոցա բարոյականութեան մասնաւոր նկարագրութեանը, որ գործական կեր- պով հանդէս է գալիս զանազան իրողութեանների մէջ։ Յառաջենք այժմ դէպ ի ճառիս երրորդ գլուխը, ուր պիտոյ է քննվի նոցա գործու- նէութիւնը Հայկական լեզուի մէջ։

* * *

Գ·

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ·

—

Այս գլխի մէջ պիտոյ է քննենք Մխիթարեանց լոկ մատենագրա- կան գործունէութիւնը Հայկական լեզուի հանդիսում, առանց դնահա- տելու այս գործունէութեան արժանաւորութիւնը, որ պահել ենք հե- տևեալ գլխին, որ և, յառաջուց քննելով և իմաստասիրելով այս գոր- ծունէութեան շարժառիթը, առաւել արդարացի կերպով կարող է դնահատվիլ, հաշուի ու համարի տակ դնելով շատ հանդամանք, որ անմիջաբար առիթ էին այդ գործունէութեանը։

Առաջին յօդուածի մէջ տեսանք մեր ազգի ընդհանուր աւերումը Մխիթարի օրերումը, խոստովանեցինք մեր հոգևորների անգործութիւնը, տգիտութիւնը, խաւարասիրութիւնը և դատարկապորտութիւնը. ասացինք նոյնպէս, թէ մինչև ո՞ր աստիճան բարձի թողի արած էր մայրենի լեզուն, մեր Արամ քաջ նահապետի նուիրականը. այս գլխի մէջ պիտոյ է տեսանենք շարժողութիւն Հայկական մատենագրութեան մէջ։ Հայոց հնախօս, բայց բարձի թողի արած աւերված ու խանգարված լեզուն շինվումէ և կարգի է դրվում Մխիթարեանց հոգաբարձութեամբ։ Ինքը Մխիթարը չէ կարող համարվիլ մեծ պտղաբեր հեղինակ այս վերստին նորոգութեան, որովհետև նա չէր ստացել ո՛չ այն դաստիարակութիւնը և ո՛չ ունեցել էր ճանապարհ ուսումնասիրելու հին լեզուի յիշատակարանքը, որ նորա աշակերտքը հետ ղհետէ ձեռք բերելով սկսեցին ուսումնասիրել երկաթի համբերութեամբ և անձանձիր աշխատելով։ Ահա այս համբերութեան և անձանձիր աշխատութեան արդիւնքն է, որ հինգերորդ դարու հայախօսութիւնը կենդանացաւ տասն և ութ — տասն և ինն դարերի մէջ ապրող մի քանի մասնաւոր մարդերի համար։ Թող ինքը Մխիթարը չը լինէր դեղեցիկ հայկաբան, թող դրէր նա աւերված ու խանգարված ոճով, այնու ամենայնիւ Հայոց հնախօս լեզուն իւր վերստին կեանք և շարժողութիւն ստանալու համար պարտական է Մխիթարին, որովհետև նա է հիմնադիրը այն միաբանութեան, որ մշակագործեց ու հանեց Հայոց լեզուն դարերի փոշիների տակից։ Այս տեղ կեանք, կենդանութիւն, շարժողութիւն և այլն և այլն. որ ասումենք, այդ բոլորը մասնաւոր բան է, մասնաւորների համար, այսինքն ուսումնականների համար, ապա թէ ո՛չ, ամբողջ ազգի համար, քառասուն Մխիթար և նոյնքան միաբանութիւնք չէին կարողանալու կենդանացնել մի մեռեալ լեզու, որ չէ ժամանակի և ազգի կենդանութեան հոգեղէն ձև ու կերպարանքը։

Մխիթարեանք կամելով պահպանել կորստից հնախօս լեզուի յիշատակարանքը, ուրեմն և հին գրոց լեզուն, սկսեցին տպագրել, այո՛, և տպագրեցին ըստ մեծի մասին հինգերորդ դարու հեղինակների գործերը, որքան կարողացան ժողովել և ձեռք բերել։ Մխիթարեանք հոգացին կազմել Հայոց լեզուի համար մի փոքր ի շատե մարդավայել քերականութիւն, քրքրելով Հայոց բոլոր դպրութիւնը և քննելով, թէ մեր մայրենի լեզուն, ի՞նչ կերպարանքներով, ի՞նչ ձևերով և առանձնութիւններով երևումէ զանազան Հայ հեղինակների գրչի տակից։ Մխիթարեանք, դիշեր ու ցերեկ աշխատելով, շինեցին ու տպեցին Հայոց լեզուի համար բառարաններ, զանազան ձևերով և զանազան խորհրդով։ Բաց ի բուն Հայ հեղինակներից, այո՛, թարգմանեցին ու տպեցին

նոքա զանազան գործեր հին և նոր Եւրոպական լեզուներից, և այսպի սի թարգմանութիւններով մեծապէս մշակագործեցին և ճոխացուցին հին Հայկական դպրութիւնը։ Թողունք, որ շատ բան ևս թարգմանված է Մխիթարեանց ձեռքով բոլորովին անխորհուրդ և առանց որ և իցէ աղնիւ նպատակի։ Թողունք որ Մխիթարեանք մինչև այս օրս լոկ թարգմանիչք են եղած և մի երևելի հեղինակութիւն չէ յառաջացել նոցանից որ և իցէ ուսումնական հանդիսում։

Ա. հասարակ այն խնդիրը, որ պիտի լուծանէր Մխիթարեանց դիաքանութիւնը մեր հին դպրութեան հանդիսում, էր հին լեզուի լոկ պահպանութիւնը և մշակութիւնը. ընդհանուր լուսաւորութիւն տարածել մեր ազգի մէջ, նորա դործը չէր և նա բոլորովին ապարդիւն դտանվեցաւ։ Մխիթարեանք, ուսանելով մի դպրոցի մէջ, որի աշակերտքը պատրաստվումէին դէպի կրօնաւորութիւն, լարումէին իւրեանց ոյժը լեզուներ ուսանելու համար, և շատ բնական կերպով յառաջացան լեզուագիտութեան հանդիսում. դոցա մէջ երևեցան քաջ Ցունի գէտք, Անգլիագէտք, Ֆրանսիագէտք, Իտալագէտք և այլն. իսկ առ հասարակ այլ գիտութիւնների հանդէսը շատ սահմանափակ լինելով այդ դպրոցում, ոչինչ ուշադրութեան արժանի երևոյթ չերևեցաւ Մխիթարեանց մէջ։ Մինչև այս օրս չէ երևեցած դոցա մէջ մի ուսումնական անձն, եւրոպական բաղմակողմանի և տիեզերական կրթութեամբ. դոցա գիտութիւնքը այս և այն ուսման ճիւղի մէջ են Էնցիկլոպէդիկական հատ ու կոտոր տեղեկութիւնք. իսկ կապակից ուսումն, ամենևին եւրոպական կարգով, եւրոպական հայեացքով չէր կարող. այդ, ոտքի տեղ գտանել մի այնպիսի դպրոցում, կամ մի այնպիսի ընկերութեան մէջ, ուր պատմութիւնը հնազանդվումէ պապականութեան քաղաքական տեսութիւններին, ուր փիլիսոփայութիւնը, ազատ և վերհամբարձ մտածութիւնը ստրկանումն պապի յանդգնամիտ անմեղանչականութեանը։

Գիտենք, որ մի քանի նախապաշարված մարդիկ գոռալու էին, — «Մխիթարեանք չունին բաղմահայեաց եւրոպական կրթութիւն», — այդ, — պատասխանումենք, որովհետև Մխիթարեանց պապական լինելը ղրկումէր նորանց ամենայն ստոյգ լուսաւորութենից։ Եւ ոչ միայն Մխիթարեանք, որ շատ ցած են իւրեանց գիտութեամբ և ուսումնականութեամբ Ցիսուսեաններից, այլև սոքա այս հռչակաւոր Ցիսուսեանքը յայտնի են եւրոպական դպրութեան և աշխարհի մէջ, որպէս լեզուագէտք և որպէս խորամանկ քաղաքագէտք տոդորված Մաքիավելու հոգով։ Իսկ Մխիթարեանց ու Ցիսուսեանց մէջ սար ու ձորեր կան, չը նայելով, որ Մխիթարեանք ևս առաջնորդվումէին Ցիսուսեան կար-

գի կանոնադրութեամբ։ Մեր ասածը կը հասկանան եւրոպացի մարդիկ, այլև մեր եւրոպական դպրոցներում կրթութիւն ստացած ուսումնական հայրենակիցքը Ռուսսիայում, Տաճկաստանում կամ ուր և իցէ։ Աչքի առաջև ունենալով այս հանգամանքները, մեք հարկադրվումենք կրկին շնորհակալութիւն մատուցանել Մխիթարեան միաբանութեանը, առաջին. այն պատճառով, որ մշակագործեցին ու ծաղկեցուցին Հայոց հին լեզուն և վեր քարշեցին նորան այն ողորմելի վիճակի միջից, ինչ վիճակի մէջ մնացած էր մեր հոգևորների անփոյթութենից. երկրորդ այն պատճառով, որ Մխիթարեանք շնորհեցին իւրեանց անձը գիտութիւնք տարածելու մեր ազգի մէջ. պատճառ, այն լոյսը, որ ծագումէր պապական հորիզոնից, նայելով աշխարհի երեսին կատարված ճիշդ բարոյական-քիմիական փորձերին, հաւասարվումէ ճախնային կամ դերեղմանական ասված մոլորական կրակների լուսին։ Ասածներիս ապացոյցը երևումէ նոցա մի քանի ձեռ ու ծուռ պատմաբանական գրքերից, որ բոլորովին յարմարած են պապականութեան օգտին. այսպիսի գրքերի կարգումեն և Զամչեան «Հայոց պատմութիւն» ասված հատորները, ուր Ցաղկերտներ, Լանկթամուրներ, Թամարներ, Ցոյներ և այլ օտար ազգեր աւերումեն Հայաստանը, այն պատճառով, որ Աստուած բարկացել էր Հայաստանի վերայ, առանց մէջ բերելու քաղաքական պատճառները, առանց կրիտիկոսի աչքով գնահատելու որ և իցէ իրողութիւն ազգային կեանքի մէջ. այն հատորները, ուր Հայոց կաթողիկոսքը և եպիսկոպոսքը անդադար հպատակութեան թղթեր են գրում Հռովմի պապին։ —Խօսելով այս բաները չէ պիտոյ մոռանալ, որ եթէ Հայոց ազգի լոյսը մնացած լինէր մեր հայկական աբեղաների շնորհքին, մեր հին լեզուն մնացած կը լինէր այժմ այն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ էր վերջին անգամ Մխիթարի օրերումը։ Այո՛, տպագրութիւնը ևս հասանելու չէր այն կատարելութեան աստիճանին, ինչ աստիճանի հասաւ նա Մխիթարեանց հոգաբարձութեամբ։

Մատթէոս Ծարեցու, Ոսկան վարդապետի և Ղուկաս Վանանդեցու խեղճ ողորմելի վիճատական դրութիւնը Հոլանդայի մէջ, այլև մեր կաթողիկոսների կիսասիրտ գործակցութիւնը նոցա հետ, չէին կարող խոստանալ մի լաւ ապագայ հայկական գրատպութեանը։ Նախախնամութեան կամքն էր, որ Հայոց գրատպութիւնը ևս աճէր ու հասակ առնուր Իտալիայի երկնքի տակ. և Հայերը անհոգ նստած իւրեանց աշխարհում թողեցին պանդխտական, Մխիթարեան քաջագոտի աբեղաների խնամատարութեանը այդ հանդէսը, ուրեմն և պարծանքի պատկը, որ միշտ ծաղկելու է, որքան Հայ մարդը կարող էր մի հայերէն գիրք առնուլ իւր ձեռքը։

Մխիթարեան միաբանութիւնը, այդ մեղանից ընկած հատուածը, օտարութեան մէջ, պատերազմելով բազմադիմի նեղութիւնների հետ, քունը կտրել է Հայոց հին լեզուն մշակելու և ծաղկեցնելու համար. և եւրոպական մարդը այսօր ճանաչում է Հայոց ազգը Մխիթարեանց շնորհքով։ Ահա այն բոլորը ինչ որ ունէինք ասելու Մխիթարեանց մատենագրական գործունէութեան մասին. անցանենք այժմ քննել այս գործունէութեան շարժառիթքը։

(Շարունակութիւնը յետագայ տետրակներում։)

Մ. Նալբանդեանց։

ՐՆԱԳԻՏԱԿԱՆ.

ԼՈՒՍԻՆԸ.

ԼՈՒՍՆԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ.

Երբ որ մի ճանապարհորդ օտար աշխարհներից վերադարձած էր, սովոր էինք մեք յօժարութեամբ ականջ դնել նորա դլխի վերայ անցածների պատմութեանը և նորա, հեռաւոր տեղերում տեսած հրաշալի բաների նկարագրութեանը։ Արդարև պիտոյ էր մտածել թէ աստեղաբաշխին, որ ոտք էր կոխած այնպիսի ճանապարհների վերայ, որ աւելի հեռաւոր էին ամենօրեայ սովորական շաւիղներից, որ քննած ու գնած էր երկնքի տարածութիւնքը, զարմանալի ձևեր ու որպիսութիւնք հարցափորձել էր, և այն մշտնջենաւոր կարգ ու օրէնքը, որ այն տեղ թագաւորումեն, հետաքննել էր նոցա ներդործութեան հանդէսի մէջ, այդպիսի աստեղաբաշխ մարդուն պիտոյ է հանդիպէինք մեք մի ճշմարիտ հոգևորութեամբ, պիտոյ է յարձակվէինք նորա վերայ նորասիրական հարցուածներով։ Բայց ոչ. աստեղաբաշխին գլխացաւութիւն չեն տալիս. նորա գրուածքը կարդում չեն, հոգս չունին նորա

յայտնագործութիւնների մասին։ Ցիրաւի, ասումեն, թէ աստեղաբաշխի պատմութիւնը անհասկանալի են. շնչաւորքը և բուսականքը, աշխարհի սահմանները, բնութեան բերքերը գոնեայ աւելի մօտ էին այն բանին, որ ամեն մարդու աչքի առաջև էր. բայց աստեղալից երկնքին սկսեալ մանկութեան օրերից, չեն ցոյց տուած ուշադրութիւն. արդարև մի վատ բան էր այս։ Բայց տիեզերական մարմինների բնութիւնը, նոցա շարժողութիւնը, նոցա փոխադարձ ներգործութիւնքը միմեանց վերայ, ունին գոնեայ նոյնչափ իսկ աղդակցութիւն երկրաւոր իրողութիւնների հետ, որչափ զանազան աշխարհաբաժինների բերքերը միմեանց հետ, և չեն աւելի հեռաւոր մեր կեանքի ու մտածութեան համար։ Ոչ թէ աստեղալարդ երկնքի օտարութիւնն է, որ խրտնեցնում մեզ մոտենալ կամ ցողին. դորա հակառակ, մարդս սիրում որոնել օտար բաները, հեռաւոր և դժուարին ճանապարհները։ Իմացիր դու ոչ թէ նիւթական հեռաւորութիւնը — պատճառ, մարդուս մտածութիւնը երկիւղ չունի ոչինչ տարածութենից — այլ գիտութեան, հաշվողութեան և նկատողութեան բաղմաճիւղ ճանապարհները։

Այս պատճառով ես հրաւիրում մեր ընթերցողքը ամենևին հաւասարած ճանապարհով հետևել ինձ դէպ ի այն հրաշալի աշխարհը երկնքի և նախ և յառաջ իմ հետ դադար առնուլ մեր դրացի աշխարհի, այսինքն լուսնի վերայ։ Ես չեմ առաջարկում նորան, որ մի պարզակայ լուսնակ գիշերում զբօսնու իմ հետ, որովհետև ձմեռնային ցրտումը անախորժ էր այդպիսի թափառանք. և ոչ պահանջում նորանից որ հեռացոյցը ձեռք առնու, ինքն հաշուէ ու գրէ. միայն խնդրում նորանից, որ փոխադրէ իւր անձը այնպիսի կացութեան մէջ, որպէս թէ յանկարծ տարած ու ձգած էր ովկիանոսի մի կղզու եղերքի վերայ։

Եւ ահա 50,000 մղոնի ճանապարհ կտրած էինք մէք. պատճառ, այդքան որպէս թէ, հեռաւոր է երկիրը լուսնից։ Այնուհետև գտանվում էինք մէք մի աշխարհի վերայ որ աւելի մեծ չէ քան թէ Ամերիկա, և որի վերայ կարելի չէր մեզ աւելի հեռի ճանապարհորդել, քան թէ Ասիայի երկայնութեան վերայ, որովհետև լուսինը իւր բովանդակութեան մասին $49^1/_2$ անգամ, իւր տարածութեան մասին, $13^3/_4$ անգամ աւելի փոքր է քան թէ երկիրը, մի գունդ որի միջոցաչափը (լայնաչափը) է 648 մղոն։ Թող այժմ նկատենք այն աշխարհը որ պարզվում մեր աչքի առաջև, որ և արդէն գուշակում ենք այն պայծառ ու մութն բիծերի խառնակութեան մէջ, որ լուսնի լրութիւնը ցուցանում մերկահայեաց (առանց հեռացոյցի նկատող) աչքին։ Այժմ մոխրագոյն աշխարհները փոխվում են տափարակներ, պայծառները սարեր։ Թէ լուսնի

փայլուն բիծերը սարեր էին, այդ բանին տեղեկանումենք նոցա ստուերներից, որ միշտ արեգակի ներհակ կողմումն են և այնքան աւելի երկար, ինչքան որ աւելի ցած էր արեգակի կայքը նոցա համար։ Բայց այն շատ փայլուն կէտերը չեն սարեր, այլ մանաւանդ զառ ի թափ ցած իջանող խորութիւնք, որոնց կողերից արևալոյսը բացարձակվումէ։

Մենք նախ և յառաջ գնումենք մի լեռնային սահման լուսնի։ Ինչպէս ուրիշ է այս տեղ քան թէ Եւրոպայի Ալպեան սարերի մէջ նոցա հսկայաձև դէպ ի վեր ցցուած ատամներովը, երկար սարաքամակովը և ախորժելի ձորերովը. ինչպէս ուրիշ է այս քան թէ Ամերիկայի ահագին Կորդիլիերեան սարերը իւրեանց բարձր կամարակապ կատարներով, իւրեանց զառ ի վեր բլուրներով։ Լուսնի վերայ տեսանումենք բոլորակ պարիսպներ որ շրջափակումէին զառ ի թափ խորքեր որ մի տեղ ցուցանումեն 2—10 մղոնի լայնաչափ, միւս տեղ աւելի ընդարձակվումեն, և նոցա պարիսպները պատռվելով շրջափակումեն լայնատարած դաշտեր։ Նոցա անուն են տուել օղաձև սարեր, սոցա պարսպաւոր տափարակներ. առաւել փոքրիկ և կանոնաւոր կերպարանքները, որովհետև նոքա նմանութիւն ունէին երկրի վերայ եղած ինչ ինչ ձևերի հետ, անուանումեն հրաբղխութեան լեռնաբերանք և վիրապներ. թէպէտ զգուշալի էր եզրափակել սոցանից որպէս թէ լուսնի մէջ կային հրաբուղխ սարեր. այսպիսիք չունի լուսինը, և այն մեղմ վառուն կէտերը լուսնի գիշերային կողմի վերայ, ինչպէս Հեռուշել աստեղաբաշխը անուն է տուել նոցա, են միայն բարձր սարերի ծայրեր, որ շողշողումէին արեգակի փայլողութեան մէջ։

Այժմ մեք փոխադրումենք մեր անձը այն պարսպաւոր տափարակների մինի վերայ. դոցա առաւել մեծը գտանվումէ լուսնի հարաւահայեաց արևմտեան կողմումը։ Դոքա, պիտոյ է մտածել, թէ պատկանումէին առաւել վաղաժամանակեայ կերպաւորութիւններին, որ յետոյ ամենայն տեսակ փոփոխվելով, այնպէս խանգարվել էին, որ չէ կարելի վերստին ճանաչել նորանց։ Նոցա պարիսպների մէջ տեսանումենք լեռնաբերաններ, ձեղքուածք, երկար ակօսաձև գոգաւորված ձորածակեր, և նոցա մէջը ցուցանումէ շատ զմայլեցուցիչ բազմօրինակ սահմաններ, բլուրների համակարգութիւնք, լայն վերնավայրք, նեղ լեռնաղնացք, սարաբերանների պէս ձևաւորված գոգաւորութիւնք և ուռուցաձև դէպ ի վեր ցցուածք։

Մեր հայեացքը գրաւումէ դէպ ի իւր կողմը մինը այն կանոնաւոր և այդ պատճառով աւելի մանկահասակ շրջանաւոր սարերից. որոնց թիւը հաշվումեն 1000-ից աւելի, որ և մի քանի սահմաններումը լուսնի

այնպէս խիտ առ խիտ գտանվումեն միասին, որ տալիս են նոցա գրեթէ մի բջջաւոր հիւսուածքի կերպարանք։

Նոցա պարիսպները ունին գրեթէ հաւասար բարձրութիւն շուրջանակի, կրումեն իւրեանց վերայ ջոկ ջոկ ցած կատարներ և ներսից ու դուրսից վայր են իջանում հողաբլուրների պէս, կամ թէ դէպ ի ամենայն կողմ ուղարկումեն բաղուկներ։ Ներսումը գտանվումէ սովորաբար մի կենտրոնական սար, երբեմն ձևանալով որպէս ցած բլուր կամ բարձր սրածայր, և երբեմն որպէս փոքրիկ լայնամարմին լեռնակոյտք։ Կենտրոնական սարը երբէք չէ բարձրանում այնքան, որ հաւասարվի պարսպի բարձրութեանը, և սակաւ տեղերում միայն մինչև սահմանակից տափարակի բարձրութիւնը։ Նոցանից մի մի հատ դուրս են բարձրանում խորքից 4—5,000 ոտնաչափ, բայց շրջակայ պարիսպները այնուհետև վեր են ելանում 12—16,000 ոտնաչափ բարձր։

Երևումէ նոյնպէս, թէ կային օղաւոր պարիսպներ, որ իւրեանց մէջ չէն շրջափակում ոչինչ կենտրոնական սար։ Գոնեայ դորա մասին ակնարկութիւն է առնում նոցա ներսի հաւասարապէս մոյգ մոխրային գոյնը։ Բայց արդարև ներսի փայլողութիւնը և գոյնը շատ անգամ այնպէս խառնվումէ պարսպի և շրջապատի հետ (օղաւոր սարերի մէջ և տիրապէս այնպիսիների մէջ, որ առաւել փառահեղքն էին և առաւել խոր դէպ ի ցած էին գլորվում և աւելի բազմաբնակ ճիւղաւորված էին), որ նորանց երբէք չէ կարելի պանապանել լուսնի լրութեան միջոցին, հապա թէ նորա քառորդներումը, որոնց միջոցին այնու ամենայնիւ նոցա ստուերքը ցուցանումեն սարերի ստուգութիւնը։

Եթէ զարմանալի էր մեզ օղաւոր սարերի բազմութիւնը, ապա պիտոյ է հիացք բերէր մեր վերայ փոքրիկ սարաբերանների բազմութիւնը, որովհետև նոյն իսկ չափաւոր սաստիկ հեռացոյցը ցուցանումէ մօտ 20,000 այդպիսի բերաններ։ Դէպ ի ներս խորտակվելով ձևացնումեն նոքա անօրինակ խորութիւնք, որոնց մէջ չէ կարող թափանցել արեգակը, թէև նա 20° բարձրացած էր հորիզոնի վերայ։ և նոցա խաւար ստուերների բազմութիւնը տալիս է այս և այն սահմանին գրեթէ մի ծակոտած կերպարանք։ Երբ որ այդ սարաբերանքը կատարելապէս լուսաւորված էին, այսինքն լուսնի լրութեան միջոցին, այնուհետև նոցանից մի քանիքը ճառագայթումին շատ լուսապայծառ փայլով, ըստ որում արեգակի լոյսը նոցա գոգաւորութենից որպէս թէ մի վառողական հայելուց բացարձակվումէր, մինչ միւսերը ցուցանումեն իւրեանց եղերքը միայն լուսաւորված, մի քնքուշ լուսաւոր օղի պէս խաւար ներսի չորս կողմով։ Շատ անգամ երևումեն երկու կամ աւելի սարաբերաններ մարգարիտների պէս շարակից միմեանց հետ, երբեմն

միջանցքներով կապակից միմեանց հետ, և երբեմն երկու երկու շրջափակված մի հասարակաց պարսպով։

Ինչպիսի լեռնագօտիք, ինչպէս Ալպեան սարերը և Կորդիլիերքը ձևացնումէին մեր երկրի վերայ, սակաւ են գտանվում լուսնի վերայ, կամ թէ փոքրատարած էին, անձիւղաւոր, ուրեմն առանց ձորերի, և ծածկած էին կատարաւոր կամ թէ սրածայր գլուխներով։ Ամենամեծ շղթայակապ սարերը ձգվումեն 90 մղոն երկայնութեամբ և կրումեն իւրեանց վերայ 17,000 ոտնաչափ բարձրութեամբ կատարներ։ Սորա հակառակ ծածկած է լուսինը անհամար ջոկ ջոկ դէպ ի վեր ցցուած սարակոնոներով, որ հիւսիսեան կիսամասնումը համակարգվումեն որպէս մի լայն, 200 մղոն երկայնութեամբ գօտի բլրաւոր սահմանների։

Լուսնի ընդարձակ դաշտավայրերի միջով անց են կենում երկայն բաղմապատիկ կորացած սարաքամակներ, որ ասվումեն լեռնային երակներ, որ և մի մղոնից աւելի լայն, հաղիւ թէ բարձրանումեն 50 ոտնաչափից աւելի, և շատ սակաւ մինչև 1,000 ոտնաչափ, և այդ պատճառով կարող են միայն ստուեր ձգել, երբ որ շատ ցած էր արեգակի դիրքը։ Շատ անգամ վերջանումէին սոքա բլուրներով կամ թէ սարաբերաններով, կամ թէ սոքա միջից կտրումէին նորանց։

Եթէ այս լոլոր ձևակերպութիւնքը այլօրինակ են քան թէ մեր երկրի վերայ եղածքը, այնու ամենայնիւ առաւել խորթ էին մեր համար այն օտարոտի փողովակները, նեղ և խոր ակօսներ, որ համարեա թէ ուղղագիծ ձգվումեն տափարակների և լեռնային սահմանների միջով, կտրումեն միջից նոյն իսկ լեռնաբերաններ կամ թէ ինքեանք ընդարձակվումեն լեռնաբերանների պէս։ Նոքա երևումեն մեղ լուսնի լրութեան միջոցին որպէս փայլուն լուսեղէն գիծեր, բայց միւս ժամանակում որպէս սևագոյն թելեր և այս պատճառով ունին հաղարաւոր ոտնաչափ լայնութիւն։ Մեր երկրի վերայ չունինք մեք նոցա նման բաներ. պատճառ, նոյն իսկ ահարկու ճեղքուածները որ կտրատումեն Ֆեքսաս աշխարհի մարգագետինքը, ոչնչանումեն գոցա առաջև։ Բայց ինչքան որ աշխատած էին աստեղաբաշխները նմանութիւններ գտանել լուսնի և երկրի մէջ, և այս պատճառով կամեցած էին լուսնի մոխրագոյն բիծերը համարել ծովեր, և աւելի լուսաւորները, ցամաքահողեր, ի հարկէ և այս փողովակները պիտոյ է խսկոյն երևէին կամ գետեր, կամ թէ արուեստաւոր ջրանցքներ կամ թէ ճանապարհներ։ Բայց այս տեսութիւնը հերքվումէ (ջրվումէ) կէս մի յիշեալ փողովակների մեծ և կանոնաւոր լայնութեամբը, այլև այն իրողութիւնով, որ նոքա միջից կտրումեն վառ ի թափ և բարձր սարեր և յառաջ են գնում ձևացնելով լեռնաբերաններ որ ունէին իւրեանց սեփական պարիսպները։ այլև որ

նոցա սկիզբը և վերջը դետեղված էին մի և նոյն տափարակի վերայ։ Ջրանցքներ և ճանապարհներ առ հասարակ կարող էր տեսանել լուսնի մէջ նա, որ տեսանումէր նորա մէջ և քաղաքներ ու ամրոցներ։ Անպատճառ, պիտոյ է լինէին դոքա առաւել մանուկ կերպարանագործութիւնքը լուսնի, որովհետև նոյն իսկ լեռնաբերանները խոտորվումեն իւրեանց ուղղութենից։

Արպիսի ահագին յեղափոխութիւնք պիտոյ է պատահած լինէին, որ կարողացան յառաջացնել լուսնի վերայ այս հսկայամարմին, շատ տեղ մինչև 26,000 ոտնաչափ բարձր սարեր, այս օտարոտի պարիսպները, այս խորութիւնքը և ճեղքուածները։ Համեմատելով դոցա հետ, որչափ աննշան էին դուցէ թէ յեղափոխութիւնքը որ եղած են մեր աւելի մեծ երկրի վերայ, ուր հպարտ Էտնա սարը չէր կարող դեռ ևս հանդէպ դուրս գալ լուսնի սարաբերանների առաւել փոքրի առաջև։ Նոցա հասարակաց հակամիտութիւնը դէպ ի բոլորակ ձևեր, ստիպումէ մեզ հաւատալ վստահապէս, թէ այն ամենայն բարձրութիւնքը և խորութիւնքը լուսնի ունեցած են մի ընդհանուր պատճառ գոյացութեան։ Ամենայն բան հարկադրումէ մեզ նկարագրել մտքով, թէ լուսինը սկզբումը էր մի հեղանուտ մարմին, և մինչև նա կը սառչէր ու կը կարծրանար, գոյացած էին նորա ներսումը զօրութիւններ, պատճառելով թնդադին պատառումնք, զոր օրինակ օդեղէն պղպջակներ մի խիստատեսակ մարմնի միջից դուրս են բարձրանում և մակերևութի վերայ պատառվելով յետ են թողում մի շրջանաձև բարձրացած եզը մի խորացած միջնավայրի չորս կողմով։ Եւ ստուգապէս պատահած են այդպիսի անցքեր շատ հետ պՀետէ, ինչպէս պարսպաւոր տափարակներ, օղաձև սարեր, լեռնաբերաններ և լեռնային երակներ երևումեն մեզ զանազան հասակի կերպաւորութիւնք։ Համարեա թէ բոլորովին կարծրացած նիւթի մէջ յառաջացան ամենից յետոյ, ինչպէս հաւանական է, ճեղքուածները, ինչպէս ցուցանումեն մեզ փողվակները, որոնց առաւել հինը դուցէ թէ կրկին լցուելցաւ ներսից դուրս բղխած վառուն նիւթերով, և այդպէս կերպաւորվեցան լեռնային երակները։ Երևումէ, թէ առաւել ներգործական է դտանվել ներքին զօրութիւնը բևեռների մօտակայքումը, ուր և այդ պատճառով յառաջացան անհամար բարձրութիւններ, մինչ Հասարակածի (Էկվատորի) սահմանումը փոխ առ փոխ հանդիպումեն սարեր ու լեռնաբերաններ լայնարձակ դաշտերով միասին։ Այսպէս ահա վստահանումէ երկրաքաղաքացի բնակիչը լուսարանել գաղտնածածուկ անցքերը մի տիեզերական մարմնի վերայ, ուր նա երբէք ոտք չէ կոխած։

Բայց ոչ թէ միայն ձևացուցած են լուսնի մակերևութի պատկերացոյցներ և չափած են նորա սարերը, այլև անուններ են տուած նոցա սարերին ու աշխարհներին։ Վաղ ժամանակներումը ընտրած են այդ բանի համար առաւել հռչակաւոր փիլիսոփաների անունները. բայց նոր ժամանակներում բարուք են տեսած, հանգուցեալ և դեռ ևս կենդանի աստեղաբաշխների, որ իւրեանց դարու մարդերից ապերախտութիւն էին ստացած յաճախ, կալուածներ ընծայել լուսնի մէջ։ Այսպէս, Կեպլեր ականաւոր գերմանացի աստեղաբաշխին, որ կայսրի և թագաւորութեան անհոգութեամբ քաղցած մեռաւ, բաժին տուեցին ամենափայլուն լուսնասարերից մի հատը, և Տիխո դէ Բրահէ, Կոպերնիկոս, Հիպպարքոս և Ալբաթեգնիոս աստեղաբաշխները, առանց միտ դնելու այն դարուն որի մէջ կացած էին, այն աշխարհին ու հաւատին, որին պատկանումէին նոքա, արժանապէս դասակից արվեցան Կեպլերին։ Նոյն իսկ Հումբոլդը ունի արդէն իւր ստացուածը լուսնի մէջ։

Դարձեալ շրջենք միանգամ մեր աչքերը լուսնի մակերևութի վերայով։ Ի՞նչ է նորա զանազան տեսակ լուսի պատճառը. ուստի՞ է այն պայծառութիւնը և խաւարը նորա բաժիններին մէջ։ Բացայայտ է, որ դոքա յառաջանումեն լուսնի յատակի առանձին որպիսութենից։ Խաւար մասունքը ակնարկութիւն են առնում դէպ ի մի փուխր հողայատակ, և մի քանի տարածութենների կանաչափայլութիւնը պատճառ է տուել ոմանց կարծելու, թէ կային լուսնի մէջ բուսականք։ Թէպէտ և չենք կարող մերժել այն մտածութիւնը, թէ լուսնի բուսական կենդանութիւնը ևս որպէս միջնորդող փրկիչ նիւթի, խաւարից դէպ ի լոյս, իցէ թէ այն միջնորդող կանաչութիւնը ցուցանումէր մարդու աչքին, թէև ոչ լուսնի բնակիչների աչքին. այնու ամենայնիւ տարակուսական է թէ ինչպէս այդ տպաւորութիւնը կարող էր այդքան հեռի տարածվիլ։ Միւս մասերի պայծառ լուսաւորութիւնը, պիտոյ է յառաջանար կարծր նիւթերից և ցոլացուցիչ բարձրութենների։ Մի շատ խորթ տպաւորութիւն առնումեն մեր վերայ և այն լուսեղէն շերտերը, որ երբեմն առանձին առանձին, և երբեմն ձևացնելով ճառագայթների համակարգութիւնք, տարածվումեն արձակ սահմանների վերայ։ Փայլուն օղաձև սարերը կերպաւորումեն սովորաբար նոցա կենտրոնները, և սհագին Տիխո լեառնը արձակումէ իւր շառաւիղքը աւելի քան թէ լուսնի ամբողջ բոլորակի քառորդի վերայ, տարածվելով սար ու ձորի և դաշտերի վերայ։ Դոքա երբեմն հաղիւ թէ $^1/_4$ մղոն, ապա դարձեալ 3—4 մղոն լայնութեամբ միաւորվելով յաճախ, ձևանումեն լուսեղէն կնջիներ (կապեր), կամ թէ լայն լուսանիւթեր։ Սարերի գոտիք կամ թէ լաւայի հեղեղներ, որ համարված էին նոքա յառաջուց, չեն անցանում

սարերի վերայից։ Բայց գուցէ թէ այն միջոցին, երբ պղպջակաձև արտաձգութիւնքը կերպաւորեցին օղաձև սարեր և լեռնաբերաններ, ներգործական էին օդեղէն հոսանքներ որ մեծակայ մակերևութի տակից յառաջ գնալով, հաւաքվեցան մի տեղ և դուրս մղեցին պղպջակը։ Եւ այնուհետև պիտոյ է այս ջերմ օդեղէն հոսանքները յեղափոխէին այն պատենի կազմուածքը որ ծածկումէր նորանց, և յառաջ խաղալով դարձուցանէին նորան ապակի կամ կրանիւթ և դորանով տային նորան աւելի կարողութիւն ցոլացուցանելու լոյսը։ Մեր երկրաւոր մոլորակի գետնի մասին չունինք արդարև ոչինչ նմանապիսի անցք որ կարելի լինէր համեմատել լուսնի հետ, բայց ի մի մասամբ, այն յեղափոխութիւնքը քարեղէն նիւթերի որ կային մեր հրաբուղխ սարերի փոքրիկ շրջանակումը։

Բայց մեք տեսանք մեր անձը մենակ լուսնի վերայ, և որպէս թէ մի մեռած անապատի մէջ։ Մի՛ թէ չէր պիտոյ հանդիպել մեզ այն տեղ կենդանի, իւրեանց անձը ճանաչող էակների։ Բայց թէ ի՛նչպէս պիտոյ է լինէր այդ էակների կեանք ու վարքը. թէ որպիսի բնութիւն էր գոյացնում նոցա տիեզերական մարմնի ծանրութիւնը, նոցա ատմոսֆերայի և գետնի յատկութիւնը. արդեօք շինած էին գոքա քաղաքներ, մերոնց նման. արդեօք ծիծաղո՞ւմէր նոցա վերայ մի կապտագոյն երկնակամար, և նոցա համար մեղմանոց հոսումէին զովացուցիչ աղբիւրներ.—այսպիսի հարցուածներ էի լսում որ միշտ առնումէր ինձ նորասիրութիւնը, և դա պիտոյ է լցուցանվի, եթէ մեր ընթերցողները կամք ունենային պատրաստվիլ երկրորդ անգամ ճանապարհորդելու մեր հետ լուսնի վերայ։

Ս. Նազարեանց։

ԲԱՐՈՅԱԿԱՆ։

ԿԻՆ ՄԱՐԴՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՈՂՄԸ։

—

Ամեն առարկայ ունի իւր յարգը և արժանաւորութիւնը, և փոքր ի շատէ արժանի է ուշադրութեան։ Այս մասին կարող եմ համարձակ ասել, թէ բացումէ՛ խօսակցութիւն մի ամենակարևոր և գեղեցիկ առարկայի վերայ։ Եւ արդարև, նայեցէ՛ք ձեր չորս կողմը, տեսէ՛ք արարածների անսահման բազմութիւնը։ Արդեօք ի՞նչ կարող է լինել մի նաղելի կին մարդուց առաւել հրապուրող և զմայլեցուցիչ. ով կարող է սառն մնալ լսելով այն խնդիրը, թէ ի՞նչ է կին մարդը. որի՞ վերայ չէ եկել սորանից հիացութիւն ու զարմացք. վերջապէս ով չէ տեսել այս քնքուշ և վշտակից էակը, խորհրդաւոր և ծանր դրութիւնների մէջ, անկեղծ հաւատարմութեան և մեծահոգի անձնազոհութեան հանդէսների մէջ։ Ով տեսել է ու չէ հասկացել և չէ զգում այս բոլորը, նա կամ մարդ չէ, կամ բնաւին մայր չէ ունեցել և երբէ՛ք սիրած կամ սիրված չէ։

Մայրը, կին մարդը միայն, նստելով մանուկի օրօրոցի մօտ կարող է մոռանալ քնի անյաղթելի կարիքը, աշխատելով իմանալ նորա անհանգստութեան ամեն մի չնչին պատճառը. լսել ուշադրութեամբ նորա ամեն մի ձայնը, շնչառութիւնը. օգնել, հանդարտեցնել և արբուցանել նորան իւր կենդանի աղբիւրից։ Մի՞ թէ կայ մի առաւել գեղեցիկ և սրտառուչ տեսարան, քան թէ մի սիրող կնամարդ, մանուկը գրկի մէջ. կա՛յ արդեօք լաց ի մայրական սրտից մի առաւել սուրբ և անարատ տաճար։ Մայրը, կին մարդը, սովորեցնում է մեզ առնել առաջին քայլափոխը, արտաբերել առաջին բառը. նա է մեր առաջին ուրախակից ու վշտակիցը. նա քննում է մեր առաջին զգայմունքը։ Նորանով է ծնանում և պայծառանում մեր հոգու մէջ առաջին դաղափարը, առաջին միտքը։ Նա հաղորդակից ու վկայ է մեր առաջին տպաւորութիւններին, որ կենդանի մարմնի գործարանի մէջ, կամաց կամաց շարժումն ինչպական կեանքը։ Պահպանողը և տնտեսը այն սերմերի, որ ընկնում են դալար և կոյս երկրի վերայ, ուր և ժամանակով բուսանում է և աճում բարոյական մարդը, դարձեալ մայրն է։ Մի խօսքով, կին մարդը տալիս է մեզ առաջին դաստիարակութիւնը, որ անզգալի կերպով հաստատվելով և դառնալով ապագայ բնաւորութեան հիմք, տալիս է բարոյական ուղղութիւն բոլոր կեանքի համար։

Երբ մանուկը մեծանալով դառնում է երիտասարդ, երբ նորա ջերմացած արիւնի մէջ սկսում է բորբոքվել ախտերի կրակը և մի նոր անիմանալի զգացումն իւր յատուկ ճառագայթներով լուսաւորում է և զարդարում նորա համար բոլոր աշխարհը, այնուհետև հարկաւորութիւնը բացայայտելու այս զգացմունքը ուրիշին քարշում է նորան դէպ ի շրջակայ առարկայքը, և այն ժամանակ երիտասարդը ամենայն ինչ պատրաստ է սիրել, ամեն մարդու ցանկանում մանաւորել իւր սէրը, որ սահմանած էր մի անյայտի համար։ Երիտասարդը որոնում է բարեկամութիւն, ուրախութիւն և ձգում է սէրը այս կամ այն բանի վերայ, բայց սորանով չէ հերիքանում նորա ագահ հոգին. նա դարձեալ չարչարվում է և տանջվում է և միշտ ինդրում առաւել շատ։

Կին մարդը երևելով, և ահա ծագում է լոյս և փարատում է խաւարը. տղամարդը հիանալով ճանաչում է այն անձը, դէպ ի ուր թռչում էր իւր սիրտը. և որի համար պէտք էր նորան զոհ բերել միայնակեցութեան անտանելի ապատութիւնը և ծանրութիւնը։ Կին մարդը առանց խօսքերի իմանում է թէ ում է պատահել. նա կարմրում է և պարծենում է իւր ընտրողութեամբը. նորան վրդովումն երկիւղ և հիացումն։ Նորա հայեացքը բացայայտել է արդէն բոլորը, բայց տղամարդը դեռ ևս որոնում է, նայում է ուշադրութեամբ և ոչինչ չէ տեսանում. նորան հարկաւոր են կատարեալ, յայտնի և պարզ ապացոյցներ։ Եւ վերջապէս այն կախարդական բառը — «էր», ընկնում է նորա ախտաբորբոքած սրտի մէջ։ Այժմ հասկանում է նա սիրու լիակատար խորհուրդը. որպէս թէ նորից ծնում է նա և ստանում է նոր կեանք. նորա մէջ գոյանում է մի ձգտողութեան նպատակ։ Եթէ ընտրողութեան մէջ չկայ սխալանք, ոչ նիւթական հաշիւ, և ամուսնութեան սրբազան կապերը հաստատումն սիրու ճշմարիտ ուխտը, այնուհետև նորա համար «ամուսին» բառը պարունակում է իւր մէջ շատ ընդարձակ խորհրդաւոր և անսպառելի միտք։ Դա լինում կեանքի ուղեկից, դառնում օգնական և աշխատակից, ուրախութեան և տրտմութեան մէջ մտիկ բարեկամ և ընկեր։ Դառնում այր մարդու գործողութիւններին մասնակից ու լծակից, որով շարժում է, հեշտացնում, հանգստացնում և վարձատրում նորան։ Ուստի այր մարդը խաղաղ մտքով, հանդարտ սրտով խոստովանում է, թէ «ահա հասել է մի կատարեալ դրութեան, որ սահմանած է բնութենից և սրբազանած է կրօնի ձեռքով և հաստատած քաղաքական կարգերով։

Այսպիսի կերպով բաղդաւորը կարող է ունենալ մի փափաք միայն, այսինքն, որ ամուսինը դառնայ երեխաների մայր. և այս նոր ցանկութիւնը լինում է դարձեալ նոր ուրախութիւնների աղբիւր, որ հասկա-

նալի է նոցա միայն, որ փորձել են. և ամուսնական սէրը ճոխանալով նորընծայ ծնողների սիրով, ամրացնում է նոցա սուրբ ուխտը նոր, անբաժանելի կապերով։

Եթէ այր մարդուն հասանին յանկարծ զրպարտութիւնք, նեղութիւնք, կորուստներ, անբաղդութիւնք, կամ թէ ընկնի նա մի մահապատճառ հիւանդութեան մէջ. այն միջոցին ով արդեօք կ'առնու իւր վերայ բեռի կէսը, կամ ով պատրաստ կը լինի բոլորովին յանձն առնուլ դորան։ Ո՞վ կը հանգստացնէ, կը մխիթարէ և կը քաջալերէ նորան. — ի հարկէ կին մարդը։ Ո՞վ կարող է նորանից առաւել հնարագէտ լինել. ով է այնքան զգոյշ, ով գիտէ այնքան լաւ թագուցանել մարմնաւոր ու հոգևոր վշտեր. ով է կարող այնպէս հմտաբար զուարթացնել, յոյս տալ հիւանդին, այն ժամանակ ևս, երբ անյուսալի էր հիւանդութիւնը։ — Ո՞վ է այն անձը, որ կարող էր իւր ջերմեռանդութեան և հաւատարմութեան փոխարէն յանձն առնուլ զանազան սրտցաւութիւնք և ապերախտութիւն. ով ընդունակ է մոռանալու իւր անձը միանգամայն, իւր սիրած մարդու համար։ Որքան բաղդի հարուածները սաստիկ են, այնքան ևս հաստատ, վեր և յաղթող է նորա մեծահոգութիւնը։

Եթէ պատահի, որ այր մարդը իւր բաղդաւորութեան, հարստութեան և փառքի դագաթնակէտից, ուր նա շրջապատած էր իւր բարեկամներով և ընկերներով, յանկարծ ցած ընկնի և տեսանէ իւր անձը միայնակ թողած, իւր անցեալ երջանկութեան աւերակների մէջ. ով արդեօք կը մնայ նորա մօտ այսպիսի դառն ժամանակում. — միայն կին մարդը և ամուսինը։

Երբ մի դժբաղդ կեանքից յետոյ, ժամանակը բերում է այն տրրտում լուրը, թէ ահա ժամ է մնաս բարեաւ ասելու կեանքին, և երբ կէս ու կէս ուրախ և տրտում եղերերգութիւնը (այս երկրաւոր կեանքը) աւարտվում է սև մահով. ով մնալու էր սառն մահճի մօտ, ամենից երկար. ով կ'ունենար այնքան ուժեղ և ամուր սիրտ, որ մահուան տանջանքից չդարձուցանէր իւր արտասուալից աչքերը, որ ձգէր իւր ձեռքը և քանի մի րոպէ պահպանէր գնացողին դէպ ի յաւիտենականութիւն. ով իւր կուրծքի վերայ կը հանգստացնէր իւր խոնարհված գլուխը և զսպելով իւր սեփական արտասուքը, կը գտանէր դարձեալ մի կաթոգին ժպիտ, խրախուսելու համար. ով դողալով կը լսէր վերջին խօսքերը և կ'առնուր վերջին հառաչանքը և համբոյրները սառած շրթունքից, և վերջապէս կը փակէր խաւարած աչքերը. — կին մարդը, դարձեալ սիրող ամուսինը։ Ահա այսպէս, կին մարդը լինում է տղամարդու նպաստի կենակիցը, և ճշմարիտ պահապանը նորա բոլոր կեանքի

միջոցում, թէ երեխայութեան և թէ ծերութեան ժամանակին, թէ բաղդաւորութեան և թէ դժբաղդութեան մէջ, թէ առողջութեան և թէ հիւանդութեան մահճի մօտ։ Մի խօսքով, նորա բոլոր կեանքը զոհ-վում էր այր մարդու զբօսանքի, ուրախութեան և կեանքի համար. նա սպառվում էր սիրու մէջ։

Եւ այսպէս կին մարդը և կամ ամուսին կինը մտանելով յաւէր-ժական հարսերի կարգը, պսակվում էին անթառամ պսակով։

Յարութիւն Համասդիւրեան։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Կոմն Էմմանուէլի օրագրական թերթերից։

—

Մի մարդու առաքինի կամ վատթար լինելու շարժառիթը գտան-վում էր նոյն այդ մարդու մէջ, թէ նորա շրջակայ ընկերութեան մէջ. մի մարդ, որ այժմ առաքինի էր, կարող էր դա վատթար մարդ լինել, եթէ մնած ու ամած լինէր մի վատթար շրջակայքի մէջ, կամ մի վատ-թար մարդ առաքինի լինել գտանվելով առաքինի շրջակայքում. այս խորհրդածութեանով պարապված է միտքս այս բոպէիս, մինչ գրում եմ յիշատակարանիս այս տողերը, Մայիսի 30-ին։

Շատ փորձեր և օրինակներ ստորասարար պատասխանում են այս խնդրին, այո և իմ սեպհական նկատողութիւնքը, ուրիշ շատ մարդե-րի նկատողութիւնների հետ, դրականապէս հաստատում են այս բանը, թէ մարդը ծնանելով չունի իւր մէջ առաքինութեան կամ վատթա-րութեան սկիզբն կամ տարր, և հոգու այդ ունակութիւնքը հետևանք են նորա լաւ կամ վատ շրջակայքի ազդեցութենից։

Արտասուելի՜ բան. մարդը, որ կարող էր առաքինի լինել, լինու-մէ մի վատթար, մի չարագործ էակ, դատապարտութեան արժանի և մարդկային և աստուածային դատաստանի առաջև։

Արի՛ մի փոքր ֆիզիկապէս և բարոյապէս, քննենք այս խնդիրը և տեսանենք, թէ կայի՞ն այնպիսի օրէնքներ բնական և բարոյական աշ-խարհներում, որ թոյլ տային այսպիսի յեղափոխութիւն։

Առնունք մի բոյս, որ դիցուք թէ բուսանումէր Հայաստանում և բերենք տնկենք նորան Ռուսսիայի հողի վերայ և նկատենք, թէ այդ բոյսը պահումէ՞ արդեօք իւր բնական որակութիւնքը, որ ունէր կամ դեռ ևս պիտոյ է ստանար մնալով իւր հայրենի հողի վերայ։ Այս խնդիրը լուծանելու համար հարկաւոր է քննել այն պայմանքը, որոնց ազդեցութեան տակ պիտոյ է կերպարանագործվէր այդ բոյսը։ Ի՞նչ պայմաններ են դոքա. հողը, օդը, ջուրը։ Եթէ անտարակոյս էր Հայաստանի և Ռուսսիայի հողերի, օդերի և ջրերի ղանազանութիւնը, կարելի՞ է ուրեմն թոյլ տալ, որ մի բոյս, այս տեղից այն տեղ տարած, կամ՝, այն տեղից այս տեղ բերած անփոփոխ պահէր իւր բուն յատկութիւնը, մինչդեռ փոփոխվելու էին նորա վերայ ազդող և ներգործող արտաքին պատճառքը, մինչդեռ այդ բուսականի գոյութիւնը, աճելութիւնը և կերպարանագործութիւնը կախվումէր հողից, օդից և ջրից։ Մի բուսական կամ մի ծառ, առնունք, ղոր օրինակ, փշատը, որ Հայաստանում տալիս է քաղցրահամ պտուղ, այդ ծառը տնկվելով հարաւային Ռուսսիայում կորուսանումէ իւր պտղատու որակութիւնը, թէև բացումէր հոտաւէտ ծաղիկներ. դոյն այդ ծառը, տնկվելով Մեծ Ռուսսիայի մէջ, կորուսանումէ և ծաղիկ բանալու որակութիւնը։ Այս ի՞նչ բան է. ո՞չ ապաքէն այդ ծառը ունէր իւր մէջ պտուղ բերելու ընդունակ գործարանները, ո՞չ ապաքէն ոչինչ բան աւելված ու պակասած չէ նորա ներքին կազմակերպութեան միջից, ինչո՞ւ ենթարկվումէ այսպէս զգալի փոփոխութեան. նորա համար որ փոխվումէին արտաքին ներգործողքը նորա վերայ, և նա բնական և աստուածադիր օրէնքով, այն ժամանակ միայն կարող էր պահել իւր բուն յատկութիւնը, եթէ իւր անձնաւորութեան և արտաքին շրջապատի մէջ կար մի ներդաշնակութիւն, մի համակրութիւն։ Եթէ այսպէս ցոյց է տալիս փորձը, ուրեմն մարդը, իւր կամեցածի պէս որակութիւն տալու համար մի բոյսի, կարող էր նորան պահել այնպիսի շրջապատի մէջ, որի արդիւնքը (результатъ) համաձայն էին նորա մտքին. ամենևին այդպէս։

Առնունք այժմ մի կենդանի, որ ծնել էր դիցուք թէ հարաւային Ամերիկայում, և բերենք այդ կենդանին Հայաստան, արդեօք կարո՞ղ էր պահել դա իւր բուն յատկութիւնքը, ասենք թէ չէր մեռանում այն տեղ, կարո՞ղ էր պահպանել իւր մարմնի կանոնաւոր մեծութիւնը, ծննդականութիւնը, բուրդի յատկութիւնը, գոյնը և բնութիւնը։ Հարկաւոր չէր այդքան հեռաւոր տեղափոխութիւն. աւելի մոտը ասեմ. Վանքաղաքից Էջմիածին տարված երկայն բրդով մեծ մեծ կատուներ, մի քանի պորտ անցանելով, կորուսին իւրեանց բրդի այդ յատկութիւնը և կամաց կամաց ընկան տեղական կատուների կարգը, թեթև

ղանաղանութեամբ, թէև ոչինչ բնական կապակցութիւն չէր պատահած այդ օտար երկրայի կատուների հետ։ Այսպէս ևս Սիբիրիայից Ռուսսիա բերված կատուքը կորուսանումեն իւրեանց բրդի յատկութիւնը։ Շատ կան այսպիսի օրինակներ, բայց մեք այս փոքրից ևս տեսանումենք ահա, որ բնական աշխարհի օրէնքը թոյլ է տալիս անհատի մէջ յեղափոխութիւն, թէև միայն փոխված էր նորա արտաքին շրջակայքը։

Ասանենք այժմ բարոյական աշխարհը և առնունք մի առաքինի մարդու զաւակ, որի բնաւորութիւնը կերպարանագործված չէր դեռ ևս, և ձգենք այդ մանուկը աւազակների և գողերի ընկերութեան մէջ. մի քանի տարի վերայովը անցանելուց յետոյ հանդիպելով նորան, արդեօք տեսանելու չէինք, որ նա ևս դարձել էր մի արիունկշակ գող և աւազակ. կամ սորա հակառակ, եթէ մի աւազակի որդի, որի բնաւորութիւնը դեռ ևս կերպարանագործված չէր, որ դեռ ևս չունէր գիտակցութիւն, եթէ մի այդպիսի մանուկ առնունք և տայինք առաքինի դաստիարակի ձեռք, յետոյ դնէինք նորան մի բարեկարգ և բարոյական դպրոցի մէջ, այնուհետև շրջապատէին նորան առաքինի մարդիկ, այդ մանուկը չափահաս լինելով կարող էր առանց զզուելու նայել իւր հօր կամ եղբայրների դատապարտելի գործի վերայ,—ամենևին ոչ. պատճառ, նա չէր տեսել իւր շրջապատի մէջ, որ, իբրև մի սովորական բան, գործվէին այդպիսի անօրէնութիւնք. դորա հակառակ, նորա հոգու մէջ տնկել էին առաքինութեան սերմերը, որ հետ զՀետէ աճում ու զօրանումէին, նորան անդադար քարոզել էին, թէ ինչ աստիճանի զզուելի և դարշելի բան է մի այդպիսի անօրէն գործողութիւն, նորան ուսուցել էին ճանաչել իւր անձը, իւր ընկերը, իւր աղգը և մարդկութիւնը։ Երեխայն, որի բնաւորութիւնը կերպարանագործված չէր դեռ ևս, մի հայելի է, որի մէջ կը ցոլանայ այն, ինչ որ ցոյց կը տաս. նա մի և նոյն է իւրեան շրջապատող արտաքին աշխարհի և ընկերութեան ձեռքում ինչպէս կաւը բրուտի ձեռքում, որին սա կարող էր ամենայն ձև տալ։

Երեխայն աճումէ, բայց մնումեն նորա հոգեկան ընդունակութիւնքը, բայց այդ ընդունակութիւնքը գտանվումեն մի անտարբեր վիճակի մէջ. այդ ընդունակութիւնքը, աճած ու անտարբեր, նման են մի վարած հողի, որ այն կը բուսուցանէ, ինչ որ սերմանէիր։ Այսպիսի երեխայքը, մանաւանդ դոցա միջից նոքա, որ աւելի հոգի ունէին (энергія), երկար չեն մնում անտարբեր վիճակի մէջ. զարթած թէ չը զարթած նոցա հոգեկան ընդունակութիւնքը, այնուհետև շատ անգամ, պատահական ուղղութեանն են հետևում. եթէ գտանվումեն առաքինի մարդերի մէջ,

ապա սկսանումեն ինքեանք ևս օրէ օր առաքինանալ, եթէ դտանվումեն անբարոյական մարդերի մէջ, ամենևին բնականաբար վատթարանալ։ Թէև առաքինութեան կամ՝ վատթարութեան կերպարանագործութիւնը կարօտ է ժամանակի, բայց դոյա նշանքը կ՚երևին իսկոյն, ի հարկէ փոքր դրութեամբ, եթէ մի բանագէտ և հետախոյզ մարդ, թէև սակաւ միջոց, կենակից լինէր մի այդպիսի մանուկի հետ։

Այսպիսի փորձական քննութիւնք հաւաստումեն մեզ, թէ մարդու առաքինի կամ՝ վատթար լինելը պատահական բան է և կախված նորա դաստիարակութենից և կրթութենից, նորա ընկերութենից և շրջապատից. այլապէս, արդար չէր լինելու Աստուծոյ մտտեսութիւնը, մինը առաքինի և միւսը վատթար ստեղծելով, և այնուհետև այդ վատթար մարդը ինքը չէր լինելու մեղաւոր իւր վատթարութեան մասին, որովհետև Աստուած ստեղծել էր նորան վատթար լինելու համարքաւ լեցի այսպիսի ամբարշտութիւն։ Առաքինի մարդը ևս կորուսանելու էր իւր արժանաւորութիւնը, ըստ որում՝ նորա առաքինութիւնը իւր վաստակը չէր, վասն զի Աստուած առաքինի էր ստեղծել նորան։ Ամենակալ Տերը արդար է և հաւասար աչքով նայումէ ոչ թէ միայն բոլոր մարդկութեան վերայ անխտիր, այլև բոլոր աշխարհների, բոլոր արարածների վերայ, որ քարոզումէին նորա ամենակարողութիւնը և փառքը։

Արդու առաքինութիւնը և վատթարութիւնը կախված է նորա դաստիարակութենից. հնձվումէ սերմանվածը։ Մի մարդ որ կամի, թէ իւր զաւակը առաքինի դառնայ, ապա նախ և յառաջ թող ինքը առաքինութեան օրինակ լինի իւր զաւակի առաջև, թող ոչ թէ միայն գիշեր ցերեկ առաքինութիւն քարոզէ իւր զաւակներին, այդ շատ փոքր էր, այլև թող իւր գործերը ևս յարմար ընթացուցանէ միշտ իւր քարոզութեանը. ապա թէ ոչ, երեխայն իսկոյն կը նկատէ իւր հօր քարոզութեան և նորա գործերի մէջ դտանված հակառակութիւնը, և այդ բանը կը դառնայ նորա համար մի դայթակղութեան քար։

Ամենայն բանական մարդ, թէև պարտական է միշտ, ճիշդ կերպով պաշտել բարոյականութեան սուրբ օրէնքը, բայց մանաւանդ այս խստութիւնը պիտոյ է գործ դնել իւր անձին վերայ եթէ կենակից էր երեխաների։ Մի անզգուշութիւն, մի անտեղի խօսք, մի անպատշաճ գործողութիւն, որ կատարվումէր երեխայի մօտ, նման է մի կայծի, որ ընկնելով մի դիւրավառ նիւթի մէջ յառաջացնումէր մի մեծ հրկէզ ու անթիւ աւերածք։ Ի՞նչ տեսակ կին կարող էին դառնալ ապագայումը այն աղջիկ թոռները, որ իւրեանց մեծ մօրից լսումէին հետևանալ խօսքերը.

ՄԵԾ ՄԱՅՐ.

—

Պառաւը, մի փոքր հարբած,
Իւր թոռների առաջև,
Թառամ գլուխը շարժելով
Մեղքերն յայտնեց բացերև։

«Կեանքիս անցած օրերում,
Ո՞րքան մարդ էր ինձ սիրում.
Ես ապրել լաւ գիտէի.
Ո՞ւր ես իմ ջերմ մանկութիւն,
Իմ սպիտակ ձեռք փափկամորթ,
Կանոնաւոր, սիրուն ոտք։»

—Ա՛յ թէ թոյլ էիր տալիս,
Մեծ մայր.—թոռները հարց արին.
«Ո՛հ զաւակներս, գիտէի
Գեղեցկութեան իմ գինը,
Մինչ հասակս չէր անցել
Տասն և հինգի միւս կողմը,
Չէի քնում գիշերներ....
Ես ապրել լաւ գիտէի.
Ո՞ւր ես իմ ջերմ մանկութիւն.
Իմ սպիտակ ձեռք փափկամորթ,
Կանոնաւոր, սիրուն ոտք.»

—Ու դու մեծ մայր, դու նորանց
Սիրումէիր, ինչպէս քեզ
Պաշտումէին սիրողքդ,
Որ պատմումես այժմ մեզ։—

«Ստուած ինձ սիրտ էր տուել
Ապա ի՞նչ բանի համար.
Սիրականիս շուտ գտայ,
Նա ևս չբսպասեց ինձ երկար։
Ես ապրել լաւ գիտէի.
Ո՞ւր ես իմ ջերմ մանկութիւն.
Իմ սպիտակ ձեռք փափկամորթ,
Կանոնաւոր, սիրուն ոտք։»

—Մեծ մայր, դու, քնքուշ սիրով
Սիրումէիր այն մարդուն։ —

«Քնքուշ սիրով նորա հետ
Վարվումէի. բայց յաճախ
Օր անց կացնում առաւել,
Ուրիշի հետ քնքշութեամբ։
Ես ապրել լաւ գիտէի.
Ո՞ւր ես իմ ջերմ մանկութիւն.
Իմ սպիտակ ձեռք փափկամորթ,
Կանոնաւոր, սիրուն ոտք։»

—Ուրիշի հետ, հարազատ,
Ասումես չամաչելով։ —

«Իմ բոլոր սիրականքը
Ցիմար չէին, այլ գիտուն,
Բայց ես նոցանից խելք
Գտանվեցայ, հաստատուն,
Եկեղեցու միջումը
Օրհնքով պսակվելով։
Ես ապրել լաւ գիտէի.
Ո՞ւր ես իմ ջերմ մանկութիւն.
Իմ սպիտակ ձեռք փափկամորթ,
Կանոնաւոր, սիրուն ոտք։»

—Մեծ մայր, զարհուրելի չէր
Քեզ, ամուսնուդ հանդիպել։ —

«Նորա խելքը թռել էր
Սիրով վառված իմ վերայ,
Շատ բան տեսնել կարող էր . . . .
Զտեսաւ. թէև էր ներկայ . . . .
Ես ապրել լաւ գիտէի.
Ո՞ւր ես իմ ջերմ մանկութիւն.
Իմ սպիտակ ձեռք փափկամորթ,
Կանոնաւոր, սիրուն ոտք։»

—Բայց, մեծ մայր, ձեր ամուսնուն
Չէի՞ք խաբում կամ նենգում։ —

«Այդ ինչ կարելի բան է,
Որ անմեղ օր անցանէ.
Բայց ես իմ քահանայիս,
Խոստովանքի միջոցին,
Բոլոր գործած մեղքերիս
Հաղիւ կասեմ պարզ, մեկին։
Ես ապրել լաւ գիտէի.
Ո՞ւր ես իմ ջերմ մանկութիւն.
Իմ սպիտակ ձեռք փափկամորթ,
Կանոնաւոր, սիրուն ոտք։»

— Օրկվեցա՞ք վերջապէս,
Մեծ մայր, դուք ձեր ամուսնուց։ —

«Այո՛, բայց մեծ զրկանք չէր.
Նոր չէր թէև տաճարը,
Բայց շատ ջերմեռանդ զոհեր,
Միշտ ըստանումէր կուռքը։
Ես ապրել լաւ գիտէի.
Ո՞ւր ես իմ ջերմ մանկութիւն.
Իմ սպիտակ ձեռք փափկամորթ,
Կանոնաւոր, սիրուն ոտք։»

— Մեծ մայր, արդեօք արժա՞ն էր
Եւ մեղ ապրել, ինչպէս դուք
Ապրել էիք ձեր կեանքում. —
Թոռներն արեցին հարցմունք։

«Ո՜հ զաւակներս, այդ մասն է
Կին մարդերի վիճակվել,
Մեծ մարք գործեցին եթէ,
Զեղ, Աստուած է հրամայել։
Ես ապրել լաւ գիտէի.
Ո՞ւր ես իմ ջերմ մանկութիւն.
Իմ սպիտակ ձեռք փափկամորթ,
Կանոնաւոր, սիրուն ոտք։»

Տարակոյս չը կայ, որ դպրոցների և համալսարանների մէջ աւանդված գիտութիւնքը և ուսմունքը շատ մեծ խորհուրդ ունին մի աշակերտի կամ մի ուսանողի համար, բայց դորանից եթէ մեծ չը լինի,

գոնէ փոքր չէ մի երեխայի սկզբնական, ընտանեկան դաստիարակութիւնը իւր ծնողքի ձեռքով։ Շատ անգամ, մի զաւակ տան մէջ հոգու վատթար ուղղութիւն ստանալով, արդէն փոքր կերպարանքով իւր հոգին տրամադրած լինելով դէպ ի չարը, կրթվելով մի օրինաւոր դպրոցում կամ համալսարանում, լուսաւորութիւնը կը շինէ իւր համար մի չարութեան գործիք, և կ՚աշխատի նորանով ծնուցանել և կերպարանագործել այն չարութիւնքը, որ վաղուց յղացած էր իւր սրտի մէջ և անծին թողած, որովհետև հնար չունէր այն ժամանակ իւր դաղափարը իրագործելու։ Առանին, կամ ծնողական դաստիարակութիւնը ստանում երեխայն գլխաւորապէս իւր մօր ձեռքով. ուրեմն նախ և յառաջ հարկաւոր է մեծ ուշադրութիւն դարձուցանել աղջիկ զաւակների կրթութեան և դաստիարակութեան վերայ, բանադէտ և առաքինի մայրեր պատրաստելու համար։ Առանց այս հոդաբարձութեան սուտ է ամենայն կատարեալ և ընդհանուր լուսաւորութիւն մի ազգի։ Զաւակ ասացեալը, իւր մօր ձեռքով պիտոյ է կրթվի և դաստիարակվի Աստուծոյ երկիւղի մէջ. մայրը, կաթից յետոյ պիտոյ է կերակրէ իւր զաւակը այդ վերին հոգևոր կերակուրներով. դորանից յետոյ դպրոցական և համալսարանական կրթութիւնը կարող է յառաջացնել մի այդպիսի տղայի մէջ ցանկալի հետևանքը։

Այս աչքով նայելով այս ծանրակշիռ և մեծախորհուրդ բանի վերայ, որքան ծանր դատապարտութեան արժանի էին այն ծնողքը, որ իւրեանց ձեռքումը նիւթական հնար ունենալով անտես էին առնում իւրեանց զաւակների դաստիարակութիւնը, և կերակրելով, և զգեստաւորելով, և վերջապէս ամենայնայնելով նորանց, համարումէին, թէ լեռվին ահա կատարած էին իւրեանց ծնողական պարտականութիւնը։ Այս պարտականութիւնը մի սուրբ և մեծ պարտականութիւն է, որ այլապէս պիտոյ էր կատարել. իսկ այնպէս կատարել ինչպէս յիշեցինք, այդ ծնողական բարբարոսութիւն ճանաչվում մեզանում։

Ծնողն գլխաւոր խորհուրդը և նպատակը չէ պիտոյ այն լինի, որ աշխատի, իւր մահից յետոյ, յետ ձգել իւր ժառանգներին շատ արծաթ, մեծ հարստութիւն, փայլուն կոչումն և այլն և այլն. դրա չեն մարդկային առաքինութեան տարերքը, դրա խանդարիչք են առաքինութեան, եթէ մի մարդ, ունենալով այդ բոլորը, զուրկ էր ըստոյգ դաստիարակութենից և կրթութենից. ծնողն գլխաւոր ջանքը և փոյթը պիտոյ է լինի յառաջ յառաջ հոդաբարձու լինել իւր զաւակների դաստիարակութեան մասին, որովհետև այդ դաստիարակութեան մէջ պարունակվումեն նորա զաւակի ապագայ առաքինութեան, երջանկութեան, վատթարութեան և թշուառութեան սերմերը։

Այնպէս ստոյգ դաստիարակութիւն և լուսաւորութիւն տալ չէ, եթէ մի ծնող դնումէ իւր որդին մի օտար ազգի դպրոցի մէջ. նա այն օտար շրջակայքի մէջ կը փոխէ իւր բուն յատկութիւնքը, ինչպէս բուսականը կամ կենդանին տեղափոխված իւրեանց սեպհական շրջակայքից, որի մասին մի քանի տող յառաջ գրեցի յիշատակարանիս մէջ։ Ստոյգ և աստուածադիր դաստիարակութիւնը այն է, որ ամենայն ծնող կրթէ իւր որդին ազգային սեպհական դպրոցի մէջ. ամենայն բոյս պիտոյ է աճէ իւր հողի վերայ, ամենայն կենդանի պիտոյ է ապրի իւր աշխարհումը։ Այդ օտար դպրոցներ ուղարկված զաւակներից, շատ փոքր պատահումէ, որ նմանէին մեղուի թոյնը թողած և մի միայն մեղրը և մոմը քաղելով յետ դառնային իւրեանց տեղը. այս մի շատ քնքուշ խնդիր է անտես մնացած մեր ազգից մինչև այսօր։

Ի՞նչ է մարդկային կեանքի խորհուրդը, մի՞ թէ լաւ ուտել, լաւ խմել, լաւ հագնել, փառաւոր ապրել, հարստութիւն ճարել, փառք ու պատիւ ստանալ. մի՞ թէ մարդը չունի մի բարոյական խորհուրդ իւր կեանքումը, մի՞ թէ այդ բանի համար է ստեղծել մեզ Աստուած, մի՞ թէ Քրիստոս մեռաւ, որ հարստութիւն և փառք պարգևէ մարդկութեան, քաւ լիցի. հեռի՞ այսպիսի մոլորութիւն։ Մարդը անմահ է ստեղծուած. նա, իւր կեանքումը պիտոյ է նմանի Աստուծոյ, որ մահից յետոյ ժառանգէ նորա երկնային արքայութիւնը։ Աստուծոյ նմանելու համար պիտոյ է լինել առաքինի և բարոյական մարդ, որովհետև Աստուած աղբիւր է և կենտրոն ամենայն առաքինութեան և բարոյականութեան. իսկ մարդը հարստութիւն ճարելով, փառք պատիւ գտանելով չէր կարող առաքինի դառնալ, նորա առաքինութեան շարժարանը գտանվումէ դաստիարակութեան և կրթութեան մէջ։ Մարդը պարտական է դաստիարակվել, կրթվել, յետոյ, սոցա աղդեցութեամբ առաքինանալով, Աստուծոյ նմանել և վայելել մի հոգեկան և յաւիտենական երջանկութիւն։

Ո՛վ չէ ցանկանում վայելել այս երանութիւնը. բայց ով որ կամի, պիտոյ է արժանի կացուցանէ իւր մարդկութիւնը այս շնորհին, իւր առաքինական գործերով, ուրեմն, պիտոյ է լուսաւորէ և հարստացնէ իւր բանականութիւնը, պիտոյ է ուսանի ճանաչել՝ Աստուածը, իւր ընկերը, իւր անձը, իւր ազգը և առ հասարակ բոլոր Աստուծոյ գործերը, նա պիտի սիրէ սորանց բոլորին, և այս բաները հնարաւոր են միայն դաստիարակութեան միջնորդութեամբ։ Որքան մեծ պարտականութիւն կայ ամենայն ծնողի վերայ հոգաբարձու լինել իւր զաւակի դաստիարակութեան համար, որովհետև դորա մէջ պարունակվումէր նորա մարմնաւոր և հոգեկան երջանկութեան ապահով դրաւականը, և որքան մեծ է այս պարտականութիւնը, որքան երանելի է մի ծնող լիապէս կատա-

ելով այս պարտականութիւնը, նոյն չափով և նոյն կշռով թշուառ է մի ծնող և ամենայն դատապարտութեան արժանի, եթէ պանցառու էր այդ սուրբ պարտականութեան մասին։

Իւ ամենայն ծնող, որ հնար ունէր դաստիարակելու և լուսաւորելու իւր զաւակը և չէր գործ դնում այդ հնարը կամ անհոգ լինելով իւր զաւակի բարոյական կրթութեան մասին, իւր արծաթը վատնումէր աշխարհային ունայն և անցաւոր վայելչութիւնների համար, և եթէ մի այդպիսի զաւակ իւր հօր անհոգութենից անկիրթ ու խաւար մնալով ապագայումը դառնար մի վատթար մարդ, Աստուծոյ և մարդկութեան ատելի, այդպիսի մի զաւակի մեղքի համար նորա թշուառ ծնողը պիտոյ է պատասխան տայ Աստուծոյ ահեղ դատաստանի առաջև։

Հայազգի ծնողներ, զգուշացէք այս ծանր պատասխանատուութենից. հերի՛ք է, եթէ մեղանից իւրաքանչիւր ոք իւր համար միայն կարողանայ պատասխան տալ Աստուծոյ արդար դատաստանի առաջև. հարկաւոր չէ իւր վերայ առնուլ և զաւակների պատասխանատուութիւնը։

Այս միջոցներում ստացած նամակներից, հետևեալ նամակը կարող եմ մէջ բերել յիշատակարանիս մէջ։

ՊԱՐՈՆ ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԷԼ,

Մայիսի 17, 1858. Բեռլին։

Վերջին նամակովս, որի հետ ուղարկել էի իմ քանի մի նկատողութիւնքը Պ. Իսահակեանցի գրուածքի վերայ «Հրաւիրակ Հայրենասիրութեան», խոստացել էի գրել և հասուցանել ձեզ այն տպաւորութիւնը, որ գործել էր իմ վերայ Պ. Յովհաննիսեանի «Նոր Քնար Հայաստանի» անունով չորրորդ տետրակը (տպած Մոսկվա, 1858.). Անհաւասիկ կատարումեմ իմ խոստմունքս. այս նամակիս հետ ուղարկումեմ մի փոքր տետրակ, որի մէջ գրել եմ իմ դատողութիւնը Պ. Յովհաննիսեանի Նոր Քնարի և առ հասարակ աղգային երգ անունով աշուղների գրած կամ ասած բաների վերայ ընդհանրապէս, իսկ, դոյն այդ Քնարի չորրորդ տետրակի և մանաւանդ Նորա յառաջաբանի վերայ մանաւորապէս (*)։

(*) Հետևեալ ամնատետրակներից մինի մէջ կը հրատարակենք Պ. Շահբեգի դատողութիւնը մեր նկատողութեամբ հանդերձ այդ դատողութեան վերայ։

Ծան. Հրատարակողի կողմից։

Այս տեղ չկան նորութիւնք, որոնց մասին կարողանայի ծանոթութիւն տալ ձեզ. վարուեմ մի ձանձրալի և միօրինակ կեանք։ Շատ անգամ սրտիս նեղութենից դնում եմ ծովի ափը և տեսանելով սև ծովի սպիտակ փրփուրները, որ շատ հեռի տեղերից երևումեն ալիքների գագաթի վերայ, և որոնք աղատութեամբ շարժվումեն յետ և յառաջ, ակամայ երանի եմ տալիս մինչև անգամ այդ անշունչ էակի անդիտակից աղատութեանը։ Սև ծով ասացի, միտքս եկաւ. Նորերումս այդ ծովի մէջ, մի նաւ անցանելով Սինոպի առաջևից նստաւ ցամաքի վերայ։ Երբ մի այլ նաւից օգնութիւն ստանալով դուրս եկաւ այդ վտանգաւոր դրութենից, նաւապետը նկատեց, որ մագնիսեան սլաքը ընդունեց ամենևին այլ ուղղութիւն, քան թէ սովորականը։ Այս բանը լինելով մի նորանշան երևոյթ, նաւապետը ծանօթութիւն տուեց Սինոպի ծովապետին, որ իսկոյն մի նաւ ուղարկելով հանդերձ բանագէտ մարդերով, տեղեկութիւն ստացաւ, թէ արդարև նաւը մօտենալով այդ տեղին, մագնիսեան սլաքը սկսումէ դողդողալով փոխել իւր ուղղութիւնը և հեռանալ հիւսիսային բևեռից։ Այս բանի մանրամասն քննութիւնը յանձնվելով գիտնական ընագէտների ստուգվեցաւ, որ այդ տեղերումը ծովի տակին կան շատ երկաթահանք, և մագնիսաքար, որ պատճառումէին այդ ազդեցութիւնը մագնիսեան սլաքի վերայ։

Ոչինչ այլ բան չունիմ առ ժամն ձեզ գրելու, մնացէք բարեաւ մինչև ցմիւս նամակս։ Ցանկալով ձեզ ողջութիւն և յաջողութիւն մնամ Ձեզ միշտ բարեացակամ եղբայր,

Ս. Խ. Շահբէգ։

Ես շատ շնորհակալ եմ այս Պարոնից, դա միշտ կերակուր է տալիս իմ յիշատակարանին։ Անցեալները գրումէր մի Պարոնի տեսութիւնը, առանց ծոցից արծաթ դուրս տալու իւր պարտքերը հատուցանելու մասին։

«Մի Պարոն» — գրումէր նա — «որ պարտական էր մնացած մի «կառավարութեան մի արծաթի մեծ գումար, շատ տարիներով կամա- «կորվումէր և չէր կամենում հատուցանել այդ գումարը, արդեօք «այն պատճառով, որ այդ պարտքը հատուցանելով խանգարելու էր «իւր վաճառականութեան ընթացքը, թէ ագահութիւնը ստիպումէր նո- «ցան ձեռքից չը հանել այդ գանձը, չը գիտեմ. միայն երբ վերջապէս «օրինաւոր դատաստան լանալով սկսեցին պահանջել այդ գումարը և

«Նա դարձեալ կամակորվեցաւ. այն ժամանակ պահանջողքը իրաւաբա-
«նական կարգով արգելք դրեցին նորա անշարժ կայքերի վերայ, որ
«բաւական մեծ գումար արժէին։

«Այդ Պարոնը, մի քանի ժամանակ անցանելուց յետոյ, բողո-
«քումէ, թէ անօրինաբար վարվել են իւրեան հետ, և թէ նա, իւր
«պարտապահանջների ապօրինի ընթացքի պատճառով հասել է մեծ
»վնասի, որ դուրս էր բերում հետևեալ կերպով։ Նա գրումէ իւր բո-
«ղոքի մէջ թէ իւր կայքը այսքան արժելով, կարող էր գրաւ դնել
«և ստանալ այսքան արծաթ, որ գործ դնելով վաճառականութեան
«մէջ պիտի անպատճառ շահվէր այսքան գումար—աւելի շատ, քան
«թէ ինքը իւր իմաստուն հաշվումը ցոյց էր տալիս իւրեան պարտա-
«կան—բայց որովհետև արգելք են դրել կայքի վերայ, վանորոյ չէ
«կարողացել գրաւ դնել, չէ կարողացել արծաթ առնուլ ուրեմն և
«այն մեծ շահը շահվել։

«Այժմ դատաստան է բացել իւր պարտապահանջների հետ և
«պահանջումէ նոցանից իւր չկրած, մտացածին վնասը, նա կամի այդ
«գումարով հատուցանել իւր պարտքը և մնացորդը գործ դնել Շամ-
«պայն դնելու համար, որովհետև շատ է սիրում նա այդ գինին։

«Տես թէ որ տեղ է հասել աշխարհիս բանը. պարտականը ոչ
«թէ միայն չը կամի հատուցանել իւր պարտքը,—ոչ, հերիք չէ
«այդ—այլև մի մեծ գումար ևս կամի ստանալ իւր պարտապահանջ-
«ներից, որպէս տուդանք։ Եւ պատմումեն, թէ այդ մարդը ունի մի
«քանի ցախ աւելով հաւաքած կողմնակից մարդիկ, որ արդարացնու-
«մեին նորա ոչ թէ միայն այդ ընթացքը, այլև բոլոր անօրէնու-
«թիւնքը, որ գործած էր իւր կեանքում։»

Ընթէ այս տեսութիւնը կապակից չը լինէր խաբեբայութեան և
անբարոյականութեան հետ—պարտք հատուցանել առանց իւր ծոցից
արծաթ դուրս տալու — շատ լաւ բան էր, բայց որովհետև դա հիմնված
է ստութեան և խարդախութեան վերայ, այդ պատճառով պիտոյ է
միշտ մնայ գող և աւազակ մարդերի սեպհական։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ՝

—

ՀԻՍԻՍԱՓԱՅԼ ՕՐԱԳԻՐԸ, Աստուծոյ ամենակարողի յաջողելովը, աւարտելով իւր տարեկան ընթացքի կէս ճանապարհը, ժամանակ է արդէն մեր բարեմիտ ընթերցողների հետ միասին աղօթք ու գոհութիւն մատուցանել Պարգևատուին ամենայն յաջողութեան, այլև յայտնել իմ շնորհակալութիւնը այն ազգասէր ալևիւ Պարոններին, որ թէ իւրեանց աշխատաւոր գործակցութեամբ և թէ իւրեանց չափաւոր մասնակցութեամբ մեր Օրագրին, հնարք էին տուել մեզ յառաջ տանելու մի, ազգային օգտի նուիրած ձեռնարկութիւն։ Անպատմելի ուրախ է հոգիս, մեր սիրելի ազգի բարեմիտների պարծանքը քարոզել հանդիսաբար և խոստովանել թէ այն բարի յոյսը, որ ունէի ես մեր ազգի առողջ բանականութեան և ալևիւ պատուասիրութեան վերայ, ունայն չեղաւ, իմ ազգասիրական հրաւէրը անպղտոր սրտերի մէջ ձայնակցութիւն գտաւ, իմ սկսուածը անկատար չմնաց։ Մի քանի դարանագործ ամբարիշտ մարդերի արարք, որ իւրեանց չար որոմնացանութեամբ ժողովրդի մէջ կամեցած էին որպէս թէ վնասել ինձ և իմ ձեռնարկութեանը, չկամիմ յիշել այս տեղ վրդովելով իմ և բարեկամներիս հոգու խաղաղութիւնը։ Կը դայ մի օր, որ և հեռի չէ արդէն, երբ այդ պատուելիքը իւրեանց թշուառ պարծանքը Կլիջի արդարակշիռ ձեռքով արձանագրած կը տեսանեն պատմութեան տախտակների վերայ այն պարծանքների շարքումը, որ գտել են աշխարհիս մէջ Հերոստրատոս Ցոյնը, Հրէական աղգի դպիրք ու փարիսեցիքը, Դանթէի թշնամիքը և Գալիլէու հալածողքը պապական Իտալիայի մէջ։ Մեր Հայեացքը շրջելով այդ դարշելի հոգեսպան կերպարանքներից, դարձուցանումնք մի հոգեպայծառ հանդիսի վերայ, ուր Հայկական հոգու առաքինութիւնը բողբոջելով և կանաչելով օր ըստ օրէ, տալիս է մեզ մխիթարական յոյսեր յետոյ գալոց օրերի համար։ Հաստատենք մեր ասածը, ազգի առաջև դնելով իւր վաստակած պատիւ ու պարծանքը, այն իւր հայրենասիրական գործակցութիւնը և մասնակցութիւնը, որ ցուցել է նա Հիւսիսափայլի հրապարակութեանը։ Ամենայն, իւր ազգի յառաջադիմութեան ցանկացող բարեխորհուրդ Հայը, կարող էր ներքևումը դրած ցուցակից ուրախութեամբ եղրակացուցանել, թէ կան մեր Հայերի մէջ եթէ ոչ

բաղմութիւն, գոնեայ բաւական շատ մարդիկ որ կամէին լսել ճշմարտութեան ձայնը, թէպէտ և դա մի մի անգամ խիստ ու հարուածող էր, կամէին մի բան ուսանել, հասկանալ իւրեանց ազգի դրութիւնը, դրան առաջև կանգնած ժամանակի խնդիրքը, հասկանալ իւրեանց անձը, իւրեանց կեանքի խորհուրդը աշխարհիս վերայ, ճանաչել իւրեանց պակասութիւնքը և թերութիւնքը, որով արդէն կիսով չափ հնարաւորված էր ուղղութեան և բարեկարգութեան գործը։ Այժմ, յառաջ եկեցէք մեր սիրելի, բարեմիտ Հայեր, եղբարք ու ընկերք. ամենայն հայաբնակ քաղաքի և ամենայն Հայ մարդու հոգեղէն վաստակը դրած է իւր առաջև. թող իւրաքանչիւրը ձեղանից առնու իւր պատկանելին, հնձէ իւր սերմանածը և ճանաչէ իւր անձը իւր տնկած ծառի պտուղներից։ Մեք այդու մշակ ենք, բայց այդին ազգինն է, և դորա պտուղքը, շատ կամ փոքր, նորա հոգաբարձութեան վաստակքն են. առատ խնամատարութիւն և առատ պտղաստացութիւն. մեր սիրտը միշտ ջերմապէս ղարկելու է Հայկական անուան պարծանքի համար, միայն թէ կամեցող լինէր մեր սիրելի Հայը խնդրել իւր համար մի ճշմարիտ, հաստատուն պարծանք։

ՀԻՍՍԻՍԱՓԱՑԼ ՕՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ.

—

ՍԱՆԿՏՊԵՏԵՐԲՈՒՐԳ.

1. Քաջափայլ Պարոն Խաչատուր Յովակիմեան Լազարեանց։
2. Եփրեմ Վարդապետ Ալթնեանց, Ասպետ։
3. Քաջափայլ Պարոն Մկրտիչ Բերոյեանց, Ուսումնապետ։
4. Մկրտիչ Սարգիսեան Սանասարեանց։
5. Նիկոլայոս Ագաթոնեան Ակիմեանց։
6. Յարութիւն Աչեմեանց։
7. Գէորգ Դաւթեան Եարալեանց։
8. Կարապետ Յարութիւնեան Եղեանց։
9. Ղազարոս Խաֆաֆեանց։
10. Редакція Журнала для Акціонеровъ.

ԴՕՐՊԱՏ.

11. Ֆրիդրիկոս-Եսայիաս Ստեփանոսեան Նազարեանց։

ՄՈՍԿՎԱ.

12. Վաչատիայլ Պ. Լազարեանց Լիցէոն Արևելեան լեզուների։
13. Աւագերէց Մովսէս Այամխանեանց, Ասպետ։
14. Յարութիւն քահանայ Գեօղչէեանց, Ասպետ։
15. Մկրտիչ Յովսեփեան Էմին։
16. Յովհաննէս Ստեփանոսեան Անանեանց։
17. Ալէքսանդր Ստեփանոսեան Անանեանց։
18. Ուրարակիր Յովհաննէս Տէր Աբրահամեան Տէր Յովհաննէսեանց, Գանձակեցի։
19 Ուսանողք Մոսկվայի Համալսարանուէն, Կովկասեան Կոմիտեի ծախքով։
20. Աստուածատուր Բուրջալեանց։
21. Ստեփանոս Խատիսեանց։
22. Բաղշի Կիրակոսեան Խալաթեանց։
23. Յովհաննէս Դանիէլեան Լօռիս-Մելիքեանց։
24. Միքայէլ Նիկոլայոսեան Գողալեանց։
25. Առաքել Նաղարեանց։
26. Յովսէփ Անանեանց։
27. Կարապետ Կիրիլեան Յուսիկեանց։
28. Առաքել Աւետիսեան Մաղաքիէլեանց։
29. Պօղոս Աղամալեանց։
30. Մինաս Արասխանեանց։
31. Մարտիրոս Տէր Մկրտիչեանց։
32. Բարսեղ Քետխուդեանց։
33. Միքայէլ Յարութիւնեան Ստեփանեանց։
34. Յակոբ Բարսեղեան Մելիքեանց։
35. Յովսէփ Սարգիսեան Սապարեանց։
36. Մարտիրոս Եսայեան Շախմուրադեանց։
37. Սողոմոն Ստեփանեան Միրզոյեանց։
38. Մելքոն Գասպարեան Փանեանց։
39. Յովակիմ Յարութիւնեան Բաբանոսեանց։
40. Անդրէաս Յովհաննէսեան Ղերքասեանց։
41. Յարութիւն Մանուէլեանց։
42. Նիկոլայոս Աւետիսեան Եղեանց։

ՆԱԽԻՋԵՒԱՆ ԴՕՆ ԳԵՏԻ ՎԵՐԱՑ.

43. Ժառանգական պատուամեծար քաղաքացի Կարապետ Մարգարեան Հայրապետեանց։

44· Տէր Եղիա Շապոշնիկեանց։
45· Տէր Գէորգ Պետրոսեան։
46· Տէր Պօղոս Ստեփանոսեանց։
47· Տէր Կարապետ Խալտրաուլեանց։
48· Տէր Յարութիւն Կարաքաշեան։
49· Տէր Յովհաննէս Տէր Կարապետեանց։
50· Տէր Միքայէլ Տէր Միքայէլեանց։
51· Տէր Առաքել քահանայ Պապուկեանց։
52· Տէր Մկրտիչ Յովհաննէսեանց։
53· Տէր Պօղոս Խըոջիեանց։
54· Տէր Բարսեղ Կարապետեան։
55· Գրիգոր Կարապետեան Սալտիկեանց։
56· Կոչեժսկիյ Սեկրետար Դանիէլ Կարաքաշ։
57· Թումաջան Գրիգորեան Ասմայեանց։
58· Մարտիրոս Մեսանիկեանց։
59· Լուկիանոս Կարապետեան Սալտիկեանց։
60· Յակոբ Ստեփանոսեան Հալաջեանց։
61· Տիտուլնարնիյ Սովետնիկ Նատալեանց։
62· Նաղար Զերքէսեանց։
63· Ստեփան Զօլոտարեանց։
64· Էմմանուէլ Պոպովեան։
65· Սարգիս Սարիեանց։
66· Սիմէոն Ալաջալեանց։
67· Ալէքսանդր Ալաջալեանց։
68· Կարապետ Շիլթեանց։
69· Յովհան Գողպետլիեանց։
70· Եղիա Բալաբանեանց։
71· Պօղոս Հիւանդեանց։
72· Պետրոս Դանիէլեան Սախավեանց։
73· Մկրտիչ Պետրոսեան Բաբասինեանց։
74· Գրիգոր Զերեպիշնիկեանց։
75· Թէոդորոս Զաիրաստեանց։
76· Պետրոս Քաջախեանց։
77· Կարապետ Զուգայեանց։
78· Մարտիրոս Բրիլիանշչիկեանց։
79· Սարգիս Ոսկերիչ։
80· Քրիստափոր Յովհաննիսեանց։
81· Կարապետ Միսերեանց։

82· Յակոբ Խլբթջեանց։
83· Մարտիրոս Բաբասինեանց։
84· Գալուստ Գօդչէեանց։
85· Վարթեվան Խլբթջեանց։
86· Յարութիւն Շօրբարօնեանց։
87· Յովակիմ Շապօշնիկեանց։
88· Պօղոս Զերնեանց։
89· Մերկեան Պօպովեանց։
90· Յակոբ Ալէքսանեանց։
91· Գրիգոր Սալտիկեանց։
92· Յովհան Զուբաուեանց։
93· Յակոբ Սալտիկեանց։
94· Եղնա Բաբասինեանց։
95· Սաղաթիէլ Քեսալեանց։
96· Կարապետ Զերնումբրեանց։
97· Կարապետ Գողպետլիեանց։
98· Ստեփանոս Սարաֆեանց։
99· Եղնսաբէթ Պատկանեանց։

ՀԱՇՏԱՐԽԱՆ·

100· Բարձր Սրբազան Վիճակաւոր Արքեպիսկոպոս Մանասէոս։
101· Կոլէժսկիյ Ասեսոր Մկրտիչ Դանիէլեան Սարգսեանց։
102· Գրիգոր Սիմէոնեան Կաղաչկեանց։
103· Յովհաննէս Մկրտիչեան Սաեաթնեանց։
104· Ժառանգական պատուամեծար քաղաքացի Քրիստափոր Գրիգորեան Սարգսեանց։
105· Ստեփան Գալուստեան Ջանումեանց։
106· Մկրտիչ Գաբրիէլեան Ուգլեանց։
107· Պօղոս Պետրոսեան Ջրմշիդեանց։
108· Կոլէժսկիյ Ասեսոր Յովհան Մկրտիչեան Արղումանեանց։
109· Յակոբ Եղիայեան Խրոմաչեանց։
110· Յովհան Սիմէոնեան Դանիէլեանց։
111· Ստեփան Մարտիրոսեան Պոպովեանց։
112· Յարութիւն Աստուածատրեան Բախրեանց։
113· Ստեփան Պետրոսեան Թոմասեանց։
114· Ամբակում Յովհաննէսեան Բուրջալեանց։
115· Գալուստ Գաբրիէլեան Սախրեանց։
116· Աստուածատուր Աստուածատրեան Վարլամեանց։

117· Կոլլէժսկիյ Ասեսոր Գրիգոր Զաքարեան Բուդաղեանց։
118· Սարգիս Զաքարեան Գալուստեանց։
119· Գրիգոր Դաւթեան Սոլոմոնեանց։
120· Յարութիւն Գէորգեան Մաղաթեանց։
121· Արրահամ Գրիգորեան Պասոյեանց։
122· Նաղար Գրիգորեան Ղարիբջանեանց։
123· Վարդան Ալէքսիսեան Պաստակեանց։
124· Սիմոն Մալխասեան Քուրդեանց։
125· Յովհաննէս Գէորգեան Ֆրանգուլեանց։
126· Յովհաննէս Մկրտիչեան Հախվերդեանց։
127· Գաբրիէլ Յովհաննէսեան Ուլուխանեանց։
128· Յովհաննէս Կիրիլեան Բալասանեանց։
129· Թադէոս Աւագեան Սաֆարեանց։
130· Յարութիւն Արրահամեան Զօրաբէգեանց։
131· Ծերօն Մահտեսեանց։
132· Астраханская Общественная Библіотека.

ՂԶԼԱՐ։

133· Յովսէփ Աստուածատրեան Իզմիրեանց։
134 Գրիգոր Վարլամեան Սուլթանեանց։
135· Գրիգոր Եվդոկիմեան Բուրջալեանց։
136· Եղիա Նեստորեան Աֆթանդիլեանց։
137· Ալէքսանդր Ստեփանեան Կաչիաչեանց։
138· Յովհաննէս Քրիստափորեան Բուրջալեանց։
139· Գաբրիէլ Ստեփանեան Քալանթարեանց։
140· Մկրտիչ Արքիպեան Մեհրապեանց։
141· Գասպար Դաւթեան Մամաչանեանց։
142· Եւդոկիմ Յովհաննէսեան Բուրջալեանց։
143· Յովհաննէս Եսայեան Փիթոյեանց։
144· Կարապետ Յովհաննէսեան Սերեբրեակեանց։
145· Յովսէփ Յովհաննէսեան Փառակեղեանց։
146· Բարսեղ Յովհաննէսեան Անանեանց։
147· Համբարձում Յովհաննէսեան Բերոյեանց։
148· Յովհաննէս Թէոդորոսեան Քուչուբէգեանց։
149· Սարգիս Պետրոսեան Բէժանեանց։
150· Յարութիւն Յովհաննէսեանց Երուսալէմացի։
151· Յովհաննէս Եսայեան Փիթանեանց։
152· Պետրոս Եղեեան Աֆթանդիլեանց։

ՄՕԶԴՕԿ։

153· Յառանգական պատուամեծար քաղաքացի Յակոբ Յովհաննէսեան Ուլուխանեանց։

ԹԻՓԼԻԶ։

154· Լէոն Կարոլոսեան Էլիմիրզեանց։
155· Յովսէփ Գաբրիէլեան Փոնդոյեանց։
156· Աւետիք Աստուածատրեան Սվեշնիկեանց։
157· Գէորգ Սալոմոնեան Ակիմեանց։
158· Գաբրիէլ Ստեփանեան Խատիսեան։
159· Գրիգոր Յովհաննէսեան Իզմիրեանց։
160· Յարութիւն Նիկոլայոսեան Քէթխուդեանց։
161· Ստեփան Գէորգեան Բաստամեանց։
162· Բարսեղ Գէորգեան Արտաղեանց։
163· Իշխանաշն Գէորգ Շիօշեան Թումանեանց։
164· Նիկոլայոս Դաւթեան Թամամշեանց։
165· Նիկոլայոս Յովսէփեան Միրիմանեանց։
166· Յովհաննէս Բաբայեան Քաթանեանց։
167· Արտիլերիայի Կապիտէն Ալէքսանդր Աստուածատրեան Բէդլարեանց։
168· Արիստակէս Պաւլոսեան Նադիրեանց։
169· Գրիգոր Սալոմոնեան Թամամշեանց։
170· Գաբրիէլ Յովհաննէսեան Մելքումեանց։
171· Թիֆլիզցի Նահանգական Պրոկուրոր Կոլլ. Սեկրետար Ստեփան Սարգիսեան Սարգսեանց։
172· Վարդան Աստուածատրեան Արշակունի, ժառանգական պատուամեծար քաղաքացի։
173· Կոլլէժսկիյ Սեկրետար Յովհաննէս Զաքարեան Եղիազարեանց։
174· Կոլլ. Ասեսոր Յովսէփ Յովհաննէսեան Էֆենդեանց։
175· Բոտմիստր Գէորգ Սարգսեան Սարգսեանց։
176· Կապիտէն Զաքար Սամուէլեան Շանշիեանց։
177· Աստուածատուր Կիրիլեան Խալաթեանց։
178· Սալոմոն Գէորգեան Քէթխուդեանց։
179· Ալէքսանդր Ղազարեան Թայիրեանց։
180· Գրիգոր Թադէոսեան Այվազեանց։
181· Պետրոս Յովհաննէսեան Շադինեանց։
182· Նադվօրնիյ Սովետնիկ Յարութիւն Յովհաննէսեան Յովհաննիսեանի։

183· Տիտուլեարնիկ Սօվետնիկ Միքայէլ Գէորգեան Թամամշեանց։
184· Կոլլ. Սեկրետար Յովհաննէս Գէորգեան Ամիրեանց։
185· Կոլլ. Բեզիստրատոր Քրիստափոր Մկրտիչեան Տէր Մկրտչեանց։
186· Պոդպօրուչիկ Յարութիւն Թադէոսեան Այվազեանց։
187· Պատուամեծար քաղաքացի Միքայէլ Յովհաննէսեան Տէր Միքայէլեանց։
188· Ալէքսանդր Յովսէփեան Թամամշեանց։
189· Յարութիւն Գրիգորեան Բաբանոսեանց։
190· Դանիէլ Յովհաննիսեան Խզմիրեանց։
191· Գաբրիէլ Աբրահամեան Շադինեանց։
192· Գէորգ Մարտիրոսեան Ծովինանեանց։
193· Յովսէփ Ստեփանեան Անանեանց։
194· Ստեփան Միքայէլեան Մելիք-Ադամեանց։
195· Յովսէփ Յարութիւնեան Խերումեանց։
196· Խաչակ Մկրտիչեան Փուղինեանց։
197· Գրավաճառ Աւետիք Ինֆիաճեանց։
198· Վարդապետ Բժշկականութեան Նիկողայոս Դաւթեան Բոտինեանց։
199· Редакція Газеты «Кавказъ».
200· Редакція Записокъ Общества Кавказскаго Сельскаго Хозяйства.
201· Тифлисское Благородное Собраніе.

ՍՈՒԽՈՒՄԿԱԼԷ։

202· Առաջնորդ ղօրքերի Աբխազիայի մէջ, Գեներալ-Մայիոր Միքայէլ Թարիէլեան Լօռիս-Մելիքեանց։

ՐԵԳՈՒՏԿԱԼԷ։

203· Սերովբէ Խաչատուրեան Շահբէգ։

ԱՄՐՈՑԸ ԼԱԳՈԴԵԽԻ։

204· Պրովիանտեան Շտեմարանի վերակացու Յովսէփ Յարութիւնեան Ամիրեանց։

ԹԵԼԱՒ։

205· Վերակացու Աւագերէց Թելաւեան Հայոց եկեղեցիների։

ԵՐԵՒԱՆ։

206· Յարութիւն Գրիգորեան Քալանթարեանց։

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆ։

207· Վարժապետ Նահանգական ուսումնարանի Գէորգ Նիկոլայոսեան Բարխուդարեանց։
208· Տէր Աւագ Տիրացու Աբրահամեան։
209· Տէր Առաքել Տէր Աստուածատրեան։

ԱՓՈՒԼԻՍ։

210· Աստուածատուր Գասպարեան Փանեանց։
211· Դանիէլ Դաւթեանց։
212· Յարութիւն Մարգարեան Փանիեանց։
213· Յարութիւն Մակարեան Խօջամիրեանց։
214· Յովհաննէս Տէր Ջանեանց։

ՇԱՄԱԽԻ։

215· Յաջորդ Մովսէս վարդապետ Մաղաքեանց։
216· Շտաբս-կապիտէն Մովսէս Զօհրապեանց։
217· Վարժապետ Սարգիս Հարիարձումեանց։
218· Նիկոլայոս Ախվերդեանց։
219· Մէջլում-Բէգ Ավլարեանց։
220· Քրիստափոր Մակարեան Կաչկաչեանց։
221· Մէջլում-Բէգ Մելիք-Շահնազարեանց։
222· Աւետիք Մամիկոնեանց։
223· Ալէքսանդր Մինասեանց։
224· Մովսէս Լազարեան Ներսէսեանց։
225· Մովսէս Ղուրբաբեան Ղուրբաբեանց։
226· Մակար Յարութիւնեան Լազարեանց։

ՆՈՒԽԻ։

227· Արտիրոս Մարգարեանց։

ՇՈՒՇԻ (Սահմանագլուխ Ջերբայիլ)։

228· Կոլէժսկիյ Ասեսոր Բարսեղ Խօջայեանց։

ԱԽԱԼՑԻԽ։

229· Յակոբ Մկրտչեան Յակոբջանեանց։

ԽԱՐԿՈՎ։

230· Կարապետ Արզարեանց։

ԱՂՔԵՐՄԱՆ։

231· Արլբոն Ասվատուրեանց, Հոգաբարձու Հայոց ուսումնարանի Աղքերմանուումը։

ԳՐԻԳՈՐԻԱՊՕԼԻՍ։

232· Տէր Դաւիթ Տէր Դաւթեան Շահինեանց։

ԲԱԽՄՈՒԹ։

233· Գէորգ Մարութայեանց։

ԹԷՈԴՈՍԻԱ։

234· Մանուկ Պետրոսեան Ալթունջի։
235· Եղբարք Ալթունջեանք։

236· Եղբարք Քեշիշեանք։
237· Գէորգ Բարասինեանց։

ՄԵԼԻՏՈՊՈԼԻՍ։

238· Գէորգ Զերնիկեանց։
239· Գէորգ Յովհաննիսեան Զերնիկեանց։

ՄԻՐՈՊՈԼԻՍ։

240· Բարսեղ Միքայէլեան Կօնդրատեանց։

ՔԵՐԶ.

241· Լազարոս Քրիստափորեան Երէցփոխեանց։

ԵԿԵՑԵՐԻՆՕԴԱՐ.

242· Մատթէոս Քրիստափորեան Երէցփոխեանց։
243· Տիմոթէոս Ալէքսիսեան Թումանեանց։

ՆՈՐ ԲԱՅԱԶԻԴ.

244· Հայոց ուսումնարանի մատենադարանին պատուամէծար վերատեսուչ Բարսեղ Աղա Արծրունի։

ՍՏԱՒՐՈՊՈԼ.

245· Լուկիանոս Բարիկեանց։
246· Խաչերես Դեաչկեանց։
247· Մակար Պոպովեանց։
248· Կարապետ Թումասեանց։
249· Քերովբէ Զախիրեանց։

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ.

250· Իսահակ Էմմանուէլեան Փուչաղեանց։
251· Թէոդորոս Սիմէօնեան Զերչեպեանց։

ԳԻՕՐԳԻԵՎՍԿ.

252· Տէր Սարգիս Տէր Պօղոսեանց։
253· Գրիգոր Լազարեան Նալբանդեանց։
254· Բաղդասար Էմմանուէլեան Խօջայեանց։

ԿԱՐԱՍՈՒ-ԲԱՂԱՐ.

255· Տէր Պետրոս Էփրէմեանց։
256· Տէր Դաւիթ Շահվերդեանց։
257· Խաչուկ Յովհաննէսեան Քեչեանց։
258· Յովհաննէս Յակոբեան Դուղեանց։
259· Լազարոս Թորոսեան Ճգնաւորեանց։

260· Ցարութիւն Պօղոսեան Մաղլումեանց։
261· Դաւիթ Աւետիքեան Դաւթեանց։
262· Կարապետ Յովհաննէսեան Սելինեանց։

—

Ծանօթացնելով աղգին Հէ-ոկոպոս Օրոֆէի մասնակիցքը, սուրբ պարտականութիւն ենք համարում մեր վերայ առանձին կերպով յայտնել մեր շնորհակալութիւնը նախ և յառաջ վեհապատիւ աղգասէր Վիճակաւոր Մատթէոս Արքեպիսկոպոսին Հաշտարխանու և առաջին կարգի վաճառական Նոր-Նախիջևանցի Պ. Կարապետ Հայրապետեանցին. սոցա իմաստուն և վեհանձն հոգաբարձութեամբ միայն յառաջացել են այն յստակ և բաւական գեղեցիկ Հայկական տիպքը որով տպագրվում «Հիւսիսափայլը», այնպէս, որ կարող ենք ասել թէ ոչ մի տեղ Ռուսաստանի Հայերի մէջ չէ տպվում Հայերէն այնպէս գեղեցիկ, ինչպէս Մոսկվայի մէջ Պ. Բարձքնեհթի տպարանումը։ Մեր աղգը առաջին անգամը տեսանելով այդպիսի վայելչատիպ Հայերէն գրուածք Ռուսաստանի մէջ, թող շնորհակալու սրտով ճանաչէ և պատուէ իւր բարերարքը, այլև բարի նախանձ նախանձելով տայ մեզ հնարք ու կարողութիւն ևս առաւել գեղեցկացնել Հայոց տպագրութիւնը Ռուսաստանի մէջ, մեր Հայկական պարծանքի համար։ Ցիշեալ Պ. Հայրապետեանցը, իւր անձը արժանի է կացուցել մեր խորին շնորհակալութեանը և այլ կարևոր ձեռնտուութեամբ, որ մի ըստ միոջէ գրել չունիմ համարձակութիւն։ Նոյն քաղաքի երկրացի Պարոն Գրիգոր Սալտիկեանցին, յայտնումեմ իմ հրապարակական առ ի սրտէ երախտագիտութիւնը, նորա աղգասիրական բարեկամութեան մասին։

Որքդի յառաջադիմութեանը և հանդէս գուրս գալուն մեծապէս օգնական են գտանվել նոյնպէս Հաշտարխանցի Կոլլեժսկիյ Ասեսոր Մկրտիչ Դանիէլեան Պ. Սերգէեվը և Ղզլարցի Յովսէփ Աստուածատուրեան Պարոն Իզմիրեանցը, որ թող ընդունեն նոյնպէս հրատարակողի ջերմ շնորհակալութիւնը։

Ի Մոսկվայի մէջ անօգնական չթողեցին մեզ մեր սիրելի բարեկամքը. որոնց մէջ նախապատիւ յիշատակի արժանաւոր է մեր եղբայրամեծար հարազատը Պ. Մելքոն Գասպարեան Փանեանց Աքուլիսեցի, ապա Միքայել Ցարութիւնեան Ստեփանեանց Թելաւեցի, և երկոքին արժանապատիւ քահանայքը Մոսկվայի Հայոց եկեղեցու, մեր խոհական բարեկամ Աւագերէց և Ասպետ Տէր Մովսէս Ալամխանեանց, և Տէր Ցարութիւն Գեոգչէեանց, Ասպետ։

Եւ իմ Հայրենի Թիֆլիզը չմոռացաւ ինձ, չկամեցաւ որ իւր վերայ արդարանայ Աւետարանի բանը, թէ «մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի»։ Ո՛չ։ և Թիֆլիզը թէև անագան, թէև բոլոր միւսերից յետոյ, այնու ամենայնիւ ճանաչեց իւր ուսումնական որդու ձայնը և յետ դնելով ամենայն թերահաւատութիւն և պղտորութիւն, որ սովոր է գոյանալ այն տեղ, ուր լինումեն մռայլեցուցիչ, խառնակիչ ազդեցութիւնք վատթար մարդերի ձեռքով — և իմ Հայրենի Թիֆլիզը անմասն ու անբաժին չմնաց այն պարծանքից, որ կցորդ է մի ազգասիրական գործի յառաջտարութեան։ Թող մեր պատուելի գործակատարքը Թիֆլիզի մէջ, Պարոն Լևոն Էլիմիրզեանցը և Պարոն Յովսէփ Փոնդոյեանցը ընդունեն մեր հոգով չափ շնորհակալութիւնը իւրեանց ազնիւ ու գովանի ջանադրութեան համար։

Շնորհակալութեան յիշատակի արժանաւոր են կացուցել իւրեանց անձը Նոր-Նախիջևանցի Մատթէոս Քրիստափորեան Երէցփոխեանց և Շամախեցի Մովսէս Լազարեան Ներսէսեանց Պարոնները, որոնց յայտնումեմ հանդիսաբար իմ անկեղծ երախտագիտութիւնը։

Հրատարակող

20-ին Յունիսի 1858.

Մոսկվա։

Ս. Նազարեանց։